Գիրքը յուսապատճենահանվել է
A-PDF DjVu TO PDF DEMO: Purchase from www.A-PDF.com to remove the watermark
"Համահայկական Էլ. Գրադարան"
կայքի՝ www.freebooks.do.am
կողմից եւ ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"

Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

ԴՈՒՔ ԿՈՒԶԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ԿԵՐԱԿՈՒՐՆ ՈՒՆԵԼԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆՈՒՆ
ԼՈՒՄԱՑԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՆ:

ԹՎԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍՆԱՎՈՐՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՆ՝

www.freebooks.do.am

ԵԼՈՒՅԱԿԱՆ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ
ՁԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՄԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆԻՆ:

ԳՐԵՔ ՄԵԶ՝ freebooks@rambler.ru

ԵՍԼՍԼՍԼԼԼ

Տարոյի և տարոյների

ՍԱՄՎԵԼ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԱՐԱՐԱՏԸ

Դարեր և տարեմուտ

ԵՐԵՎԱՆ

1990

ԳՄԴ 84 Հ7-4
Գ316

Գիրքը հրատարակվել է
հեղինակի միջոցներով

Գասպարյան Ս. Ց.
Գ316 Ազնավուրը՝ ծանոթ և անծանոթ: Հեղ. Սամվել Գասպարյան.— Եր.: 1990.— էջ.—192

1988 թվականի դեկտեմբերի 7-ին Հայաստանում տեղի ունեցած աղետալի երկրաշարժից հետո հայազգի մեծանուն երգիչ Շարլ Ազնավուրը երկու անգամ այցելեց նախնիների երկիրը, եղավ աղետի գոտում Հեղինակը, որ այդ բոլոր օրերին միշտ եղել է Ազնավուրի կողքին, իր տպավորություններն է կիսում ընթերցողի հետ՝ միաժամանակ նրա առաջ բացելով սիրելի երգչի կյանքի ծանոթ և որոշ անծանոթ էջեր

Գրքում զետեղված են նաև Ս Գասպարյանի ֆրանսերենից կատարած ավելի քան 40 երգերի թարգմանություններ.

Գ $\frac{4702080201}{707 \quad 101}$ ԳՄԴ 84 Հ7-4

ISBN 5-8077-0487-8 © Սամվել Գասպարյան, 1990

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

1. ՀԱՆԴԻՊՈՒՄ

Աչքերս բացել, տեսել եմ մեր տան ողորմելի ու հին կահկարասին.
Դա Լատինական թաղամասում էր, Մսյո-լը-Փրենս փողոցի վրա,
Իմ շրջապատում դերասաններ ու երգիչներ կային,
Այդ մարդիկ միայն անցյալ ունեին, բայց ոչ ապագա...

Հայաստան աշխարհում երկարաշարժ է եղել, և Շարլ Ազնավուրը եկել է Երևան:

... Համարյա մարդաբոյ ինքնաթիռը, թռչնի պես թփթփացնելով ասֆալտե թռիչքուղուն, սահուն գլորվեց առաջ, հարմար տեղ գտավ իր համար ու կանգնեց: «Զվարթնոցում» հավաքված մարդիկ ալիք-ալիք խռնվեցին, իրար հրմշտեցին, ըմբոստ վազեցին ճստլիկ ինքնաթիռի ետևից, մժեղների պես պաշարեցին, պինդ գրկեցին ու իրենք էլ կանգ առան: Մոտ կանգնածները, վզները երկարելով, ճգնում էին ինքնաթիռից ներս նայել՝ ինչ-որ բան տեսնելու հույսով,

իսկ այնտեղ, լուսանցույցին հպված, միայն մի քանի ճապաղած, անծանոթ քթեր էին երևում: Հետո այդ մարդիկ՝ ամբողջ օրը կիսասոված, կիսածարավ, կիսացրտահար, սպասումի երկարուձիգ ժամերի ընթացքում իրար հետ մտերմացած, բարեկամացած, հասցեներ ու հեռախոսահամարներ փոխանակած այդ մարդիկ — հայ ու ֆրանսիացի լրագրողներ, երկրաշարժի ցավով տառապողներ, Ազնավուրի աննահանջ երկրպագուներ, պարզապես հետաքրքրասեր անցորդներ, բարձրաստիճան պաշտոնյաներ, օդանավակայանի աշխատողներ — հանկարծ հասկացան, որ ինքնաթիռն այդպես գրկել չի կարելի, այդպիսի բան ով է տեսել, ախր, ներսում եղածները դուրս գալ չեն կարող: Հասկացան ու սկսեցին բարձր-բարձր գոռալ՝ «Ձամփա տվեք»: Ինքնաթիռի մոտ կանգնածները գոռում էին հեռվում խմբվածներին, սրանք էլ այդ հրամանը փոխանցում էին առաջիններին, և ոչ մեկը, ոչ մյուսը տեղից չէին շարժվում:

Օդաչուի խցիկի պատուհանիկը բացվեց և հայտնվեց մի ֆրանսիացու ֆրանսիավարի ժպտացող, ուրախ դեմքը, որը կարծես ասում էր. «Ի՜նչ անուշ մարդիկ են այս հայերը»:

Վերջապես ինքնաթիռի դռնակը շարժվում է, և ֆրանսիական հեռուստատեսության «Անտեն—2» հեռուստաալիքի աշխատողի նետած լուսարձակի պայծառ լույսի մեջ երևում է Ազնավուրի լույս դեմքը՝ հոգնած, մոլորված, շփոթված, ցավակցող-ժպտացող, մի քիչ ծերացած, տխուր-ուրախ դեմքը: Նա ձեռքը արտիստորեն առաջ է պարզում (այդ շարժումը երևի

նրա մեջ հավերժ նստած դերասանն է անում), իբր, ճամփա բացեք, ես այստեղից՝ ձեր միջով եմ անցնելու, բայց իր համար և հավաքվածների համար անսպասելիորեն հայտնվում է աննկատ ինքնաթիռին մոտեցած ավտոմեքենայի մեջ և մեղավոր ժպիտով անհետանում այնպես հանկարծակի, ինչպես որ հայտնվել էր...

Դիմավորողներից մեկը, մի տարեց կին, ուշացած բացականչում է՝ կարծես բոլորի փոխարեն.

— Շարլ, ցավդ տանեմ:

... Հայաստանում երկրաշարժ է եղել, և Շարլ Ազնավուրը եկել է Երևան:

Օդանավակայանում չկայացած հրմշտոցը տեղափոխվում է «Հրազդան» հյուրանոց: Շարլի երկու թիկնապահները՝ մեկը կենսուրախ ֆրանսիացի, մյուսը՝ կիսով չափ կորեացի, բացսիրտ ու հաղթանդամ, քրտինքի մեջ կորել են («Դժվար է, դեռ ոչ մի տեղ Ազնավուրին այսպես չենք պաշտպանել»): Դրոնից մի կերպ խցկվում եմ ճեմասրահ: Ազնավուրին կանգնեցնում են, լուսարձակները գցում վրան՝ թե լրագրողներ ենք, գոնե այստեղ պիտի մեր հարցերին պատասխանեք: Նա հոգնած ժպտում է, նրան հարցեր են տալիս, նա պատասխանում է: Մի կին լրագրող չի դիմանում՝ համբուրում է, նա ժպտում է, նրան նորից են համբուրում...

Սա առաջին օրն էր, երկրաշարժից հետո Շարլ Ազնավուրի Հայաստան կատարած առաջին այցելության առաջին օրը: Երբ կեսգիշերին տուն գնացի, ասես երազում, ասես հեքիաթում, կինոժապավենի

պես աչքիս առաջ անցնում էր այդ օրվա ամեն մի վայրկյանը, ամեն մի կադրը: Մի տեսարան հիշեցի Ազնավուրի մասնակցությամբ այն կինոնկարից, որը, Երևանի համալսարանում սովորելու տարիներին, մեր կուրսեցիների խնդրանքով, Ֆրանսիայից բերեց ու մեզ համար ցուցադրեց Սորբոնի համալսարանից մեր ֆրանսերենը հղկելու առաքելությամբ երկու տարով Հայաստան աշխատանքի գործուղված «մսյո Թուսենը», հրաշալի, արագաշարժ, ամենագետ, մեր շատ սիրելի Թուսենը: Ֆիլմը նվիրված էր ԱՄՆ-ում Ազնավուրի շրջագայությանը: Նրա մի երկրպագու, բարեկազմ մի գեղեցկուհի, որին չի հաջողվում իր կուռքի համերգի տոմս ձեռք բերել, համերգը դիտում է տանը՝ մենակ, վերացած՝ տրվելով սիրելի երգչի երգերին...

Հիշում էի այդ օրվա ամեն մի պահը և նախանձով մտածում, որ մեր լրագրողները՝ Վանիկ Սանթյանը, Տիգրան Լիլոյանը, մյուսները, հիմա գուցե տանը նըստած լսում-վերարտադրում են իրենց դիկտոֆոնների ձայնագրությունները: Հիշում էի հյուրանոցի ընթրիքի երկարավուն սեղանը, որտեղ, բախտի բերմամբ թե պատահմամբ, մի քանի երևելի պաշտոնական դիմավորողների թվում հայտնվել էի նաև ես և, կյանքում առաջին անգամ, Ազնավուրի հետ, ինչպես ասում են, սեղան էի նստել, կյանքում առաջին անգամ մոտիկից տեսել, լսել, զրուցել այն մարդու հետ, որի մասին մինչ այդ այնքա՛ն շատ բան գիտեի, որի երգերով տարիներ շարունակ դաստիարակվել էինք ես ու իմ ընկերներից շատերը: (Այո, Հայաստանում կա մի սերունդ, որը 60-ական թվականներից սկսած ընդունել և այդպես էլ

մինչև օրս հավատարիմ է մնացել Ազնավուրի երգերին, չնայած այդ ընթացքում ֆրանսիական և ընդհանրապես համաշխարհային էստրադայում պակաս «աստղեր» չեն փայլել: «Շարլ, հիմա ինչպես վարվի այդ սերունդը, ինչ խորհուրդ կտաս այդ մարդկանց»: Նա ինձ ժպտաց ու պատասխանեց. «Թող շարունակեն սիրել Ազնավուրին»):

— Ասում եք՝ հայերեն լավ եմ խոսում,— ընթրիքի սեղանի շուրջը ասաց նա:— Գիտեք որն է պատճառը: Հայրս մեզ միշտ ասում էր. «Որպեսզի հայերենը չմոռանաք, պետք է ամեն օր տանը գոնե մի քիչ, մի նախադասություն անպայման հայերեն խոսեք: Ես հորս շատ էի սիրում»...

ԱԶՆԱՎՈՒՐԻ ԾՆՈՂՆԵՐԸ

Մայրը՝ Քնար Ազնավուրյանը, ծնվել է Զմյուռնիայում: Մեծ եղեռնի տարիներին, տասնհինգ տարեկան հասակում, կորցրել է ծնողներին, քրոջը, եղբայրներին: Բայց այդ սարսափները տեսած կինը միշտ մնացել էր բարի, իմաստուն, զուրկ վրեժխնդրության զգացումից, և մարդկային այդ հատկանիշներն էր ներարկել իր զավակներին:

Մոր մասին Ազնավուրը պատմում է. «Մորս աչքերը քաղցրանուշ էին, շագանակագույն երանգներով, մերթ՝ լուսավոր, մերթ՝ փոս ընկած, հոգնած:

Մայրս տիրագող կին չէր, որը երազում է միայն դիմացինի վզակոթին հասցնելու կամ նրան պատժելու մասին: Ճիշտ հակառակը. նա միշտ կարծել է, թե

երեխաներին պետք է դաստիարակել ընտանեկան խաղաղ մթնոլորտում:

Նա մեզ պատմություններ էր պատմում, որոնք սովորեցնում էին ճիշտ ապրել: Օրինակ, որպեսզի ինձ հասկացնի, թե ես երբեք չպետք է իրեն համեմատեմ իմ ապագա կամ որևէ մեկ այլ կնոջ հետ, մի այսպիսի պատմություն էր պատմում: Մի ամուրի, երկրորդ ամուսնությունից հետո, տարիներ շարունակ կնոջը հանդիմանում է, որ վերջինս չի կարողանում կարտոֆիլով ռագու՝ իր սիրած ճաշատեսակը պատրաստել: Նա անընդհատ կրկնում է. «Առաջին կինս, ա՛յ «նա» գիտեր ճաշ պատրաստել»: Մի օր էլ այս երկրորդ կինը ռագուն վառում է: Խեղճը շվարում, մնում է, բայց բանը բանից անցել էր, և նա ռագուն դնում է սեղանին, վախից դողալով՝ սպասում է, թե ինչ է լինելու դրա վերջը: Ամուսինը համտեսում է վառված ռագուն և, երկար լռելուց հետո, ասում է. «Ա՛յ, հիմա արդեն վերջապես կարողացար կարտոֆիլը պատրաստել «նրա» պես: Հրաշալի՛ է»: Իրականում, ուրեմն, նրա առաջին կինն էր վատ խոհարար եղել և պարբերաբար վառել էր ռագուն: Իսկ ամուսինը ընտելացել էր դրան: Այդ մարդը, պարզապես, դարձել էր իր սովորությունների, կարճատեսության և խոհարարական անճաշակության զոհը:

Այո, մայրս համեստ էր, բայց կարեկցող: Նաև ամենահաս էր: Եվ հատկապես «ճիշտ» մարդ էր»:

Քնար Ազնավուրյանը Շարլի անվանակոչության միակ հավաստի վկան է: Ահա թե ինչ է գրում երգիչը իր «Ազնավուրը Ազնավուրի մասին» գրքում.

«— Ի՞նչ անուն եք տալիս սրան,— ասում է մանկաբարձուհին՝ գրկելով ղժժացող երեխային:

— Շահնուր,— անսահման քնքշությամբ շշնջում է մայրս:

— Շահ... ինչ,— աչքերը լայն բացած հարցնում է մանկաբարձուհին:

— Շահնուր,— կրկնում է մայրս:

Հիմա բացատրեմ:

Շահնուր ասելու համար հարկավոր է լավ արտասանել «ն»-ի առջևի «հ»-ն, այնպես, կարծես «Շահ»-ին հաջորդելիս լինի «ա՛ահհ» բացականչությունը, որն արտաբերում են ախորժալի կարկանդակ տեսնելիս: Հեշտ է արտասանել, ընդունում եմ: Վերջապես շատ մի տանջեք ձեզ այդ անունը սովորելու համար, որովհետև, գտնելով, որ Շահնուր անունը այնքան էլ հեշտ չէ արտասանել, մանկաբարձուհին ինձ տալիս է Շարլ անունը»:

Դա 1924 թվականի մայիսի 22-ին էր, 0 ժամ 30 րոպեին...

Ազնավուրի հայրը՝ ծախսասեր ու դյուրահավատ Միշա Ազնավուրյանը, ծնունդով ախալցխացի է: Նա նույնպես մազապուրծ էր եղել Մեծ Եղեռնից: Թիֆլիսում ամուսնանալով Քնարի հետ՝ 1923-ին հաստատվում է Փարիզում, ամբողջ ունեցվածքը՝ մի քանի զարդեր: Նախ սկսում են վաճառել զարդերը, որպեսզի բացեն «Կովկաս» ռեստորանը: Հետո սա փակում և մեկ ուրիշն են բացում Մոնմարթրում, իսկ հետո՝ Լատինական Թաղամասում: Հինգերորդ «Կովկասից» հետո սնանկանում են: 1930-ին, մի գիշեր,

Միշտ տուն է գալիս ու ասում. «Զավակներս, աղքատ ենք»: Հինգ տարեկան Շարլը հարցնում է հորը. «Ուրեմն պետք է մուրա՞մ փողոցում»: Մայրը սաստում է նրան ցասկոտ հայացքով. «Հայը չի մուրում»:

Հոր մասին Ազնավուրը պատմում է. «Հայրս իսկական երեխա էր, երեխա էլ մնացել է: Նա այդպես էլ պատանեկությունից դուրս չեկավ: Վերին աստիճանի երազկոտ է եղել, ապրել է իր առանձին կյանքով, բայց ամեն օր պարտադիր տուն է եկել: Ընտանիքը նրա համար շատ բան էր նշանակում, բայց ընկերները նույնպես շատ բան էին նշանակում: Հետո՞: Մայրս երբեք չի նախատել նրան, անկասկած, այն պարզ պատճառով միայն, որ ավելի խելամիտ էր և պետք է իրեն մի քիչ էլ հորս մայրը համարեր»:

ԱԶՆԱՎՈՒՐ ԵՎ ԱՆԴՐԱՆԻԿ

Նրանք ընկան, որ ընկղմվեն հավերժական խավարի մեջ ժամանակի,

Նրանք ընկան, քաջեր դառնալ չհասցրին,

Առանց տարիք հարցնելու՝ մահը կանգնեց նրանց շեմին,

Քանզի նրանց մեղքը մեկն էր՝ զավակներն էին Հայաստանի:

Հաջորդ օրը, առավոտ կանուխ, իրարանցում է... «Արմենիա» հյուրանոցում: Երեկ, «Հրազդանում», ընթրիքի սեղանի շուրջը, Շարլը սկսեց տրտնջալ.

— Մեզ ինչո՞ւ եք բերել այստեղ, նախապես պայմանավորվածություն կար, որ պիտի իջևանենք «Արմենիայում»:

— Սա ինչ պակաս հյուրանոց է, Շարլ: Լավ էլ համարներ են,— ասում են նրան:

— Չեղա՞վ, չեղա՞վ: Նախ՝ ֆրանսիական հեռուստատեսության աշխատակիցները «Արմենիայում» են. ես պետք է նրանց հետ լինեմ: Հետո՝ Փարիզում ասել ենք, որ պիտի «Արմենիայում» ապրենք, հեռախոսով ինձ այնտեղ են փնտրելու:

— Այդ հարցը կկարգավորենք: Կասենք՝ այստեղ կզանգեն,— ասում են նրան:

— Եղբայր, ձեզ համար տարբերություն կա՞, թե ես որտեղ կապրեմ, ինչո՞ւ ինձ չեք տանում «Արմենիա»:

— Լավ, այսօր հոգնած եք, ուշ ժամ է, այսօր այստեղ քնեք, վաղը կտանենք,— ասում են նրան:

— Տարիքիս մի նայեք, ինձ համար «հոգնած» չկա, «ուշ» չկա:

— Մեքենաները բաց թողինք, եղածները քիչ են, ճամպրուկները չեն տեղավորվի,— ասում են նրան:

— Չորս մեքենա՞ էլ չկա... Այդքանը մեզ բավական է, մեր ճամպրուկներն էլ շատ չեն:

— Շարլ, չեք տեղավորվի,— ասում են նրան:

— Սկզբում մեզ տարեք, հետո ճամպրուկները բերեք...

Մի վերջին ճիգ.

— Ոնց ուզում եք, բայց սա էլ պակաս հյուրանոց չէ...— ասում են նրան:

Լավ հյուրանոց ես շատ եմ տեսել, հիմա ինձ լավ -վատը չի հետաքրքրում:

Լավ, ինչպես ուզում ես, Շարլ, հարց չկա,— ասում են նրան:

Վերջապես զիջեցին: Այս անհեթեթ (ով գիտե, գուցե նաև ինչ-որ իմաստ ունեցող մարտը), իհարկե, շահել էր Շարլը, և հիմա, առավոտյան ժամը ութին իրարանցում է «Արմենիա» հյուրանոցում: («Բա որ ասում էի Շարլը մեզ մոտ է գալու,— ծոր էր տալիս քնատ դռնապանը,— չէին հավատում»...):

Եթե ուզում ես Շարլի կողքին լինել, ուրեմն պետք է կարողանաս անընդհատ վազքի մեջ լինել ու չհոգնել, լինել ճարպիկ, գնահատել ամեն վայրկյանը, եթե պետք է՝ չքնել, անոթի մնալ: Եթե Շարլի հետ ես, ուրեմն իրարանցումն անխուսափելի է: Նա ինքը իրարանցում է:

Սիրելիորեն փոքրիկ (ֆրանսիացիները երկու Շարլ ունեն մեծ Շարլը՝ դը Գոլը, և փոքր Շարլը՝ Ազնավուրը), կարճահասակ, անսպառ եռանդի աղբյուրից սնուցվող Շարլը ահա ձիգ-ձիգ քայլվածքով, հպարտ-հպարտ դուրս է գալիս հյուրանոցի գլխավոր մուտքից (նա գիտե՞ իր արժեքը), այդպես անցնում նախապես մարդկանց խիտ բազմության մեջ թիկնապահների բացած նեղ արահետով, մի ակնթարթ կանգ առնում՝ ինչ-որ բան ասելու իրենից անբաժան Լևոն Սայանին, նորից ժիր-ժիր քայլում մարդկանց բացականչությունների արանքով («Բայց դերասան է, հա՛»,— մտածում եմ), այդ ընթացքում գուցե մեքենան փնտրելով, որով պիտի գնա, կամ կլոր հրապարակում

էլի ինչ-որ բան նկատելով և երեխայի պես ուրախանալով («Եթե երեխայի է նման, ուրեմն մեծացել է»), նորից կտրուկ կանգ է առնում՝ բազմության միջից ինչ-որ մեկին ինչ-որ բան ասելու, և այսպես հասնում մեքենային, մեքենա նստելուց առաջ մի քանի ակնթարթ ուշադիր նայում հրապարակում սիրուն շարված տանկերին («Տեսնես ինչ մտածեց»), հյուրանոց—մեքենա կարճ ճանապարհահատվածում հասցնելով այդքան շատ գործ կատարել: Իսկ ժողովուրդը, այս սև օրերին հազար հոգս ու ցավով տառապող ժողովուրդը բողոքում է՝ չգիտես ինչու և չգիտես ում. «Ինչո՞ւ չեն թողնում մի քիչ հետը խոսենք»: «Մի հանդիպում էլ չեն կազմակերպում»: «Մեզ համար է եկել, հո իրենց համար չի՞ եկել»:

Ինչպես միշտ, Երևանում նույնպես Շարլի օրերը ծայրաստիճան հագեցած են. ծրագրերը՝ շատ, րոպեները՝ հաշված:

Շարլի հետ անկացրած այդ գեղեցիկ, իմաստալի օրերը...

... Միայն զարմանալ կարելի էր, թե Ազնավուրի գալուց հաշված ժամեր հետո, երբ արանքում ընդամենը մի կարճ գիշեր էր անցել, այսքան մարդ այդ ինչպե՞ս, այդ որտեղից իմացան, որ նա այս ժամին Ծիծեռնակաբերդում է լինելու, և եկան, հավաքվեցին: Այստեղ խմբվածները, ամեն ինչից երևում է, ավելի մարտականորեն են տրամադրված. մարդկանց մի խումբ սեղմում, օղակի մեջ է առնում Ազնավուրին. ասելիք շատ ունեն, կարևոր ասելիք, ոչինչ, ընդամենը մի քանի րոպե կզրուցեն հետը:

— Գոնե թողեք ներքև իջնի, հուշարձանը այցելի, հետո...— պաղ օդում հուսահատ կախվում են ինչ-որ մեկի բառերը:

Պայմանավորվում են: Ազնավուրը զգուշորեն իջնում է տեղ-տեղ սառցակալած աստիճաններով, և իրար գլխի խոնարհված քարերը, ասես երկնքից, կախվում են նրա վրա: Լռությունը գրկել է մեղմ երաժշտությունը ու բաց չի թողնում: Մի անկյունում մենակ մնացած ծաղկեպսակ եմ տեսնում՝ «Իգոր Մուրադյանից» մակագրությամբ: Իգորը բանտում է, ընկերներն են բերել նրա անունից: Լավ են արել:

Նրանք ընկան ու այդպես էլ չհասկացան, թե ինչու,
Տղամարդ, կին, թե երեխա, որ ապրել էին ուզում այնքան...
Եկեղեցու նախադռան կամ հարազատ շեմին ընկան...
Եվ ամենքը լուռ մնացին այս աշխարհում ցնորական,
Երբ ողջ մի աղգ իր իսկ արյան մեջ էր խեղդվում...
Նրանք ընկան մաքրարարո ու լուռումունջ, հազարներով,
Միլիոններով նրանք ընկան, և աշխարհը չսարսռաց,
Ալ ծաղիկներ նրանք դարձան մեկ վայրկյան անց...

... Աստիճանների գլխին սպասողները կրկին օղակում են Ազնավուրին: Պայմանը՝ պայման է: «Փրկություն չկա»,— գուցե բարկությամբ՝ հոգոց են հանում նախապես Ազնավուրին ուղեկցողներ նշանակվածները: «Փրկություն չկա»,— գուցե հաճույքով մտածում է Շարլը: Եվ աստիճանների մոտ սպասողները, իրար ընդհատելով, արագ-արագ, շուտասելուկի պես

սկսում են խոսել, կարծես անհանգստանալով, որ հիմա Ազնավուրին նորից կփախցնեն ու ասելիքը կիսատ կմնա:

— Այ, դուք եկել եք, ուզում եք օգնել, բայց օգնությունը տեղ չի հասնում, մեծ մասը «վերևներում» են բաշխում, երկրաշարժից տուժածներին քիչ բան է հասնում,— կարկտի պես բառեր է շպրտում մեկը:

Ազնավուրը, տեղյակ մարդու վստահությամբ, գլուխը տմբտմբացնում է:

— «Դուբլյոնկաներն» էլ են իրենք ու իրենց կանայք հագնում:

— Ի՞նչ է «դուբլյոնկա»,— հարցնում է Ազնավուրը և, լսելով թարգմանությունը, ասում է.— այո, այո, գիտեմ:

— «Ղարաբաղ» կոմիտեն ձերբակալել են, նրանք ինչ են արել, միակ մեղքը այն է, որ հավատացին,— ասում է մեկը:

— Տղաներից ոչ մի լուր չունենք, որտեղ են, ո՞ր քաղաքում, հազար նամակ ենք գրել, մեկ է՝ ոչինչ չեն ասում: Դուք պարտավոր եք օգնել,— ասում է մի կին:

— Բայց ես քաղաքական գործիչ չեմ,— վերջապես խոսում է Ազնավուրը,— ես ընդամենը երգիչ եմ:

— Մենք դա հասկանում ենք, բայց ուզում ենք, որ դուք ձեր ձայնը բարձրացնեք... Մեզ այդքանն էլ բավական է:

— Կխոսեմ, անպայման, ուժերիս ներածին չափով կփորձեմ օգնել...

... Ավտոշարասյունը շարժվում է Լենինական:

Պարտադիր կանգառ Ուջանում: Անդրանիկ Զորավարի արձանը:

— Շարլ, կանգնիր Անդրանիկի հետ քեզ նկարենք:

Շարլին արդեն ընտելացել ենք, ընկերացել: Նա էլ՝ մեզ: Ընդամենը մի քանի ժամում մեզ հավասար մարդ է դարձել, և հիմա ինձ համար տարօրինակ կերպով նույնիսկ զարմանալի չէ, որ նա սովորական մարդ է, մեզ նման: Հիշում եմ երեկվա ընթրիքը: «Շա՛րլ, կենացդ»,— ու ձեռքերս երկարում էինք, խփում նրա բաժակին և, ինչպես ասում են, նրա հետ «դու»-ով էինք խոսում:

Մեծերը չեն ցուցադրում իրենց մեծությունը: Որովհետև մեծ են:

— Շա՛րլ, կանգնիր Անդրանիկի հետ քեզ նկարենք:

Երկու մարդ, հայ ժողովրդի արգանդից ծնված երկու մեծություն, մեկը՝ իր ժողովրդի ցավով տառապած, իր կյանքը անմնացորդ նրան նվիրաբերած ու այդպես արձանացած, հավերժացած, վեհատեսիլ, և չնայած միայն հայրենի հողում հանգչելու իր միակ ցանկությանը, իր պատգամին՝ առ այսօր, ավա՛ղ, օտար հողում մնացած, բայց մեզանից դեռ չխռոված, միշտ մեր մեջ ու մեզ հետ, հատկապես այս դժնի օրերին, իսկ մյուսը՝ իր ժողովրդի ցավով տառապող, իր ժողովրդի անապ վշտով լցված, վերջապես հանդիպել են իրար, փառահեղորեն կանգնել կողք-կողքի, և դա գեղեցիկ է:

— Շարլ, դու մեր Անդրանի՛կն ես,— ասում է կինոխցիկով ամենուր Ազնավուրին «հետապնդող» ջահել, մորուքավոր տղան, որը մինչև այս պահը ոչ մի

բառ չէր ասել և հիմա էլ պպզած, անհարմար դիրք էր ընտրել իր համար ու սուսուփուս իր գործն էր անում՝ կինոխցիկն ուղղած սիրելի երգչին:

Շարլը ժպտում է:

— Չէ, ինչ եք ասում, ինձ մի համեմատեք Անդրս նիկի հետ: Անդրանիկը մեծ է...— Եվ, չգիտես ինչու, ավելացնում է.— Անդրանիկը թաղված է Պեր Լաշեզում:

— Քանի որ դու հիմա մեր կողքին ես, ուրեմն դու մեր Անդրանիկն ես,— համառում է երիտասարդը, որն էլ, այս խոսքերից հետո, Շարլի հետ զրուցելու անվիճելի իրավունքը նվաճեց և առանց իր «գրված դիրքից» նահանջելու՝ կինոխցկը միշտ գործի դրած, ինքը պատասխանեց Ուջանի, ուջանցիների, Անդրանիկի ու այս արձանի մասին Շարլի տված հարցերին:

Ուջանցիները շրջապատել են Ազնավուրին: Նրանց բախտը բերել է. Ազնավուրը ինքն է իր ոտքով եկել նրանց մոտ: Ուջանցիներն արժանի են դրան:

— Շարլ, կանգնիր Անդրանիկի հետ քեզ նկարենք...

Շարլը ժպտում է ինքնագոհ: Հոգու խորքում շոյված է: Նա ինքն իրեն դուր է գալիս: Ինքն է ասել. «... ու համարձակվում եմ ասել, թող ինքնագովություն չթվա, ես ինձ դուր եմ գալիս»:

Փառահեղ կադր, փառահեղ լուսանկար՝ Անդրանիկ և Ազնավուր:

ԱԶՆԱՎՈՒՐՆ ԻՐ ԱՐՄԱՏՆԵՐԻ ՈՒ...

Ես ֆրանսիացի եմ՝ հայկական ծագումով: Արմատներս Հայաստանում են: Արմատները լեզուն է, ավանդույթները...

Մենք մի գաղթական հայ ընտանիք էինք ու, ինչպես բոլոր գաղթական հայ ընտանիքները, կապված էինք մեր լեզվին, սովորույթներին ու եկեղեցուն: Ես քրիստոնյա եմ հարյուր տոկոսով:

Զուսպ, համեստ էր մեր ընտանիքը: Մենք սիրում էինք ծիծաղել, երգել, պարել և արտասվել: Այո, և արտասվում էինք, որովհետև հայը շատ զգացմունքային է ու հեշտությամբ է լաց լինում: Նա լաց է լինում և կնունքին, և պսակին, և թաղմանը:

Ֆրանսիայում ինձ երբեք օտարազգի չեմ համարել, սակայն, միևնույն ժամանակ, երբեք չեմ մոռացել, որ ծնունդով հայ եմ: Ֆրանսիայում մենք մեր ուրույն տեղն ունենք՝ Ժան Գառզու, Անրի Թրուայա, Անրի Վերնոյ, Ալիս Սափրիչ, Ռոզի Վարդ, Ռոզի Արմեն...

Այո, մենք միշտ հայ ենք մնում: Գնացեք Օլֆորթվիլ: Կարնո հրապարակում կտեսնեք մի բիստրո, որի վրա գրված է. «Ֆիլիպի մոտ»: Ներս մտեք և կտեսնեք, որ այլևս Ֆրանսիայում չեք գտնվում: Խոսակցության պատառիկները ձեզ տեղնուտեղը կտեղափոխեն մի ուրիշ մոլորակ: Նախասրահը լեփ-լեցուն է: Ոչ մի կին չկա: Բոլոր սեղաններն զբաղեցրել են տարեց տղամարդիկ: Մաշված, կնճռոտ դեմք ունեն, խիտ մորուք և ճերմակած մազեր: Զբաղված են թղթախաղով: Եթե դուք մշտական հաճախորդ չեք և հայերեն չեք խոսում, ուրեմն օտարազգին դուք եք:

Սակայն նրանք կզրուցեն ձեզ հետ: Արտասվախառն ձայնով ձեզ կպատմեն իրենց երկրի գեղեցկության, Սևանա լճի քնքշության մասին: Նրանք հիշում են...

Այսօր մեր զավակներից շատերը ամուսնանում են ֆրանսուհիների հետ, և մենք կորցնում ենք մեր ավանդույթները:

Գիտեք, իմ ժողովուրդը շատ է տառապել, և դրանից բխում է մի որոշակի ֆատալիզմ: Հայերս հեշտությամբ ասում ենք. «Այն օրը միայն կհանգստանամ, երբ գերեզման իջնեմ»: Ես այն կարծիքին եմ, որ մահը միանգամայն բնական բան է: Պարզապես մի քիչ անհեթեթ բան է...

Ես ճանապարհորդել եմ ամբողջ աշխարհում: Երբեք չեմ մոռացել, որ հայ եմ: Ուլլայի հետ ամուսնացել եմ Ժան Գուժոն փողոցի հայկական եկեղեցում, և ավագ փոխերեցը մեր գլխին դրել է ամուսնության թագ՝ զարդարված խաչով: Նույն թագը դրել են հորս ու մորս, տատիս ու պապիս գլխին: Որդիս՝ Պատրիկը, հաճախել է Սևրի հայկական դպրոցը: Ուր էլ լինեմ՝ Նյու Յորքում թե Մոսկվայում, երբ մի անծանոթ հայ է մտնում իմ օթյակը, կարիք չկա, որ ինձ ինչ-որ բան ասի. նա իմ եղբայրն է: Ես ինձ մի քիչ մեղավոր եմ զգում հարազատ ժողովրդիս հանդեպ: Ոչ մի երգ չեմ նվիրել նրան [1]: Այդ մասին շատ եմ խորհել:

---

[1] Այս խոսքերն ասվել են «Նրանք ընկան», «Տարագիրները», «Քեզ համար, Հայաստան» երգերը գրելուց առաջ (Ծանոթ հեղ.)

Բայց ես անպայման կգրեմ այդ երգը... Այդ օրը ես կհպարտանամ՝ աշխարհով մեկ գոռալով, որ ես հայ եմ»:

... ԿՆՈՋ, ԵՐԵԽԱՆԵՐԻԵՎ ՆՐԱՆՑ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

... Եթե հիմա համաձայն եմ այդ մասին պատմել, պատճառն այն է, որ գտել եմ նրան, մենք գտել ենք իրար՝ Պատրիկը և ես, ես և Պատրիկը: Երկար ժամանակ դա եղել է իմ խղճի խայթը: Այսօր՝ իմ ամենամեծ ուրախություններից մեկն է: Տարիներ առաջ մի վաղանցիկ արկած ունեցա մի երիտասարդ կնոջ հետ: Մենք բաժանվեցինք, և ես տեսադաշտից կորցրի նրան, մինչև մի օր նա եկավ ինձ գտավ ու հայտարարեց, թե երեխայի է սպասում: Ինքնաբերաբար նրան խոստացա ճանաչել երեխայի հայրությունը: Սակայն այդ կնոջ համար (թույլ տվեք անունը չտալ) անընդունելի էր ամուսնությունից դուրս երեխա ունենալ: Հետո նա հանդիպեց մեկին, որ սիրում էր իրեն, և ամուսնացավ: Այդ մարդը երեխային կոչեց իր անվամբ՝ Պատրիկ (տղայիս ազգանունը ես եմ դրել), և այլևս նրանց չհանդիպեցի:

Այդուհանդերձ, այնքան էլ գոհ չէի ինձնից: Սարսափելի է իմանալ, որ ինչ-որ տեղ երեխա ունես, որի մասին ոչինչ չգիտես. չես մասնակցում նրա առաջին քայլերին, չես «հալվում» նրա առաջին ժպիտից: Երբ անցավ մի քանի տարի, սկսեցի պատկերացնել հետևյալ տեսարանը. ահա Պատրիկը՝ դահլիճում նստած մի

անդեմ հանդիսատես, լսում է իմ երգերն ու նայելով ինձ՝ անծանոթիս, մտքում ասում է. «Այս պարոնը, որ շատ դրամ է վաստակում և ոչինչ չի անում ինձ համար, իմ հայրն է»: Եվ խղճի խայթ զգացի: Բյուր հարցեր պաշարեցին ինձ: Պատրիկը երևի դասերը լավ չի սովորում, չի ապրում երեխայի երջանիկ կյանքով, որը կարող էի պարգևել նրան: Տեսնես որտեղ է հիմա: Նրա մայրը մեկնել էր՝ ինձ չթողնելով իր նոր հասցեն: Եվ մերժված հայրության դառն վերհուշը մղձավանջ էր դարձել ինձ համար: Հաճախ,— և դա ավելի էր անհանգստացնում հոգուս խռովքը,— մայրս ինձ ասում էր. «Ինչ էլ որ լինի՝ այդ փոքրիկը քո տղան է»:

Այդ ընթացքում նորից ամուսնացա, Էվելին Փլեսիսի հետ, և երկրորդ անգամ բաժանվեցի: Պատրիկին, որ ծնվել էր 1951 թվականի հուլիսին, երբեք չէի տեսել: Հարցուփորձ էի անում շրջապատիս բոլոր մարդկանց, ովքեր ճանաչում էին որդուս մորը, ցանկանալով գտնել տղայիս՝ ինչ գնով ուզում է լինի:

Հրաշքը տեղի ունեցավ Իսպանիայում, երբ նկարահանվում էի «Տաքսի Տոբրուքի համար» ֆիլմում: Մի նամակ ստացա որդուս մորից: Նա գրում էր. «Պատրիկին ասել եմ ճշմարտությունը: Եթե մի օր ցանկանաս տեսնել նրան՝ կուղարկեմ քեզ մոտ»:

Երբ Փարիզ վերադարձա, տղայիս հետ եկավ ինձ տեսնելու: Եվ այդ օրվանից Պատրիկը մնաց ինձ հետ...

Առաջին օրերին ես ու որդիս չէինք կարողանում ինչպես հարկն է լեզու գտնել իրար հետ: Բայց ես շատ արագ հասկացա, որ դրա համար անհրաժեշտ

է խոսել այն լեզվով, որով խոսում էինք մեր տունը և որն իմ մտնկությունն լեզուն էր՝ հայերենով: Եվ Պատրիկին տասացի.

— Պետք է հայերեն սովորել: Դա դյուրին գործ չէ, բայց տնհրաժեշտ է, որպեսզի դու դառնաս իմ որդին:

Նա հեշտությամբ չհամոզվեց: Նրա տարիքում դա այնքան էլ հեշտ չէր: Որոշ ժամանակ պատերազմի մեջ էինք: Սեղանի շուրջը ծնողներիս, քրոջս և տվաղ աղջկաս հետ միասին ամեն առիթ օգտագործում էինք մի լեզվից մյուսին անցնելու: Պատրիկը գլուխը կորցրել էր և կարճ ժամանակ անց ինձ հարցրեց. «Մարդիկ ինչ կասեն իմ մասին»: Ի վերջո, նա համաձայնեց, ոչ առանց երկմտանքի, սովորել Սևրի հայկական քոլեջում: Հետո դա նրան դուր եկավ:

Այսօր վստահ կարող եմ ասել, որ Պատրիկը իսկապես իմ որդին է: Նա Ազնավուրյան է:

... Բնականաբար, ես իմ տեսակետներն ունեմ երեխաների դաստիարակության հարցում: Բայց պետք է ասեմ, որ այս հարցում ես առաջադեմ չէի, ինչպես կինս՝ Ուլլան. նրա հայացքները չափից դուրս «շվեդական» էին: Երբ ծնվեց մեր փոքրիկը՝ Կատյան, ես նրան ասացի. «Այս տպականված աշխարհում անհնար է անարատ երեխա դաստիարակել: Անհրաժեշտ է, որ նրա մարմինը կարողանա տարադրել հակամարմիններ: Եթե Կատյայի ձեռքից բուտերբրոդն ընկնի և նա գետնից վերցնի ու շարունակի ուտել, չպետք է նրան խանգարել, թող ուտի»: Այսօր Ուլլան համոզվել է, որ ես ճիշտ էի: Ինչ վերաբերում է ինձ, ես խմել եմ ամենակեղտոտ ջրերը, ինչպես, օրինակ, Կամբո-

ջայում, որտեղ ուտում էի ճահճից, կովի ման եկած աղբերից վերցրած ջրով եփած ապուրը, որը պատրաստում էին բնիկները, և դրանից չեմ հիվանդացել: Ես ցանկանում էի, որ իմ երեխաները նույն անվարակելիությունն ունենան, որպեսզի նրանք, ինձ նման, չվախենան համաճարակներից:

Ես անսահմանորեն սիրում եմ երեխաներիս: Երեխայի աշխարհը հաճախ հյուսված է կատակերգություններից, բայց ոչ երբեք՝ կեղծիքից: Նման վերաբերմունքը կյանքին գալիս է իմ հայկական ծագումից և սաացածս դաստիարակությունից: Երբ ծնողներիս, քրոջս ու մորական տատիս հետ ապրում էի Մայո-լը-Փրենո փոդոցի կահավորված բնակարանում, մենք աղքատ էինք, բայց բնավ ոչ դժբախտ, քանզի Ազնավուրյաններն իրար կապված են ձեռքի մատների նման, հավատարիմ իրենց ավանդույթներին, բանահյուսությանը և եկեղեցուն: Ահա թե ինչու ես կամեցա, որ Պատրիկը հայերեն ողվորի, այն լեզուն, որով ես արտահայտել եմ իմ առաջին ուրախություններն ու ախրությունները, իմ առաջին հույները:

Այն ժամանակվանից ի վեր ես ոիրում եմ դարմանքը. տեսնել, թե երեխան ինչպես է առավոտյան զարթնում և հայտնաբերում աշխարհը: Յուրաքանչյուր շտրժումը նոր է, ամեն ինչ հորինվում է:

Հնարավորին չափ շատ ժամանակ եմ հատկացնում երեխաներիս: Ես պարծենում եմ, որ նրանք նման են ինձ: Եռ հպարտ եմ ինձնով՝ որպես հայր, և չեմ ամաչում այդ մասին ասել բարձրաձայն:

Պաշտելով երեխաներիս՝ բնավ նրանց «ընկերը», ասել կուզե՝ մեղսակիցը չեմ: Մեր երեխաներն ունեն ընկերներ, ունեն ծնողներ, և տարբերություն են դնում ընկերոջ ու ծնողի միջև:

Սեռականության խնդրի մասին: Ըստ իս՝ երիտասարդները բավականաչափ հասուն են, որպեսզի կարողանան զգոն լինեն այդ հարցում: Ինչ վերաբերում է ինձ՝ կուզենայի այդ մասին վերջինը խոսել իմ երեխաների հետ. ես ապրել եմ մենակ, իմ քեֆին, և Աստծուն է հայտնի, թե ինչ կյանք եմ ունեցել: Ես չէի կամենա, որ աղջիկս ինձնից սեռական դաստիարակության մասին խորհուրդներ հարցներ: Եթե Շվեդիայում բանը բանից անցել է, ապա Իսպանիայում, Իտալիայում, Ֆրանսիայում ամեն ինչ կորած չէ:

Երբ երեխաներս ուզում են ծխել, ծխում են՝ առանց ինձնից թույլտվություն խնդրելու: Մենք տասնհինգ տարեկանում ծխում ենք՝ ինքներս մեզ համոզելու համար, որ տղամարդ ենք: Նույն պատճառով էլ քառասուն տարեկանում փորձում ենք ծխելը թողնել:

Երեխաներիս սովորեցրել եմ հատկապես սիրել աշխատանքը: Տղայիս ասել եմ. «Կամ պիտի լավ սովորես, կամ պիտի տիրապետես որևէ արհեստի»: Ավելի լավ է հմուտ ջրմուղագործ լինել, քան միջակ փաստաբան, թերուս նոտար կամ անզոր դեղագործ: Ես իմ երեխաներին կսովորեցնեմ նետվել կյանքի հորձանուտը, բայց նրանք իրենց ապագան պետք է սեփական ձեռքերով կռեն: Ես հույս ունեմ ապրել շատ երկար, որպեսզի զավակներս ինչպես հարկն է հաստատվեն կյանքում և ինձնից ստանան ժառան-

գություն, որի կարիքը չեն զգա, քանզի ոչինչ այնքան նողկալի չէ, որքան որևէ մեկի մահվանն սպասելը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏ

Քո գարունները կբացվեն նորից,
Քո լավ օրերը ետ կգան նորից...

Երկրաշարժի հետ Ազնավուրի առաջին հանդիպումը կայացավ Լենինականում:

Վիրավոր Լենինականում:

... Ես այստեղ եկա դեկտեմբերի յոթին, երբ մութն ընկել էր:

Երբ երկրաշարժն արդեն իր սև գործն արել էր ու հիմա, կարծես ինքն էլ իր արածը չհասկանալով, ապուշ կտրած՝ ինչպես ակամա մարդասպան, ինքն էլ խենթանում էր հոգեվարք ապրող քաղաքի հետ: Այն ժամանակ ինձ թվաց, թե դա վերջն էր, ամեն ինչի վերջը:

Մինչև ցնորվելու սահմանագիծը մի քայլ էր: Եվ ես քայլել եմ իմ հարազատ, իմ սիրելի Լենինականով՝ անփողոց, արնածոր, անդամահատված, խավարի հետ գրկախառնված այս քաղաքով, որը իմն է եղել: Ես ծերացել եմ՝ անցնելով քարակույտեր դարձած տների, ճմրթված բարձրահարկերի կողքով, վրայով, ճզմված ավտոմեքենաներից գայթելով, փլատակների տակ գերված և դեռ ողջ մնացած մարդկանց հեռացող նվվոցները լսելով, անարցունք, քարսիրտ, անուղեղ մարդկանց՝ այդ կենդանի դիակներին նայելով, իմ

ապրած մանկության թաղերը չճանաչելով, Աստծուն աղոթելով ու մի տեղացու՝ Աստծո հասցեին ասված լուտանքները լսելով, չցնորվելով, կանգուն մնացած մեր շենքը, երկրաշարժին հաղթած իմ շենքը վերջապես տեսնելով (փառքդ շատ, Աստված), խարույկի թույլ բոցերի արձակած պաղ լույսով կրակի չեղած տաքությունը գրկած կանանց մեջ ճերմակած, կուչ եկած, ողջ մնացած մորս հազիվհազ ճանաչելով ու հետո միայն, ու հետո միայն գլուխս ընկերոջս ուսին դնելով, այլևս անուժ զսպելու արցունքներս՝ թաքուն հեկեկալով իմ քաղաքի համար, իմ կորած մանկության համար: Ես ծերացել եմ...

... Ու ցնորվել եմ ու չեմ ցնորվել, ախր ինչպես թե՝ ես չեմ ցնորվել:

Այդ օրը հավատացյալները անհավատ դարձան, ողջերը դարձան մեռյալներ, մարդկային կյանքը՝ անհեթեթ մի բան:

Այդ օրը «լույսը մարել էր» ու «կյանքը մեռել»:

... Ձմռանից հետո, դժոխքից հետո,
Կվերընձյուղվի կենաց ծառը քո —
Քեզ համար, Հայաստան:

Ես քայլել եմ ծռմռված փողոցներով, տնքացող քարերն ու ցավից գալարվող սյուները գրկելով, անօգնական դարձած միայնակ քաղաքով... Այդ օրը բոլորը մենակ էին, և ինձ թվում էր, թե աշխարհում ոչ մի ուժ այլևս չի կարող օգնել մենակ քաղաքին ու նրա մարդկանց: Ու ես, Լենինականից խռռված, փախել եմ

այդ մղձավանջից, ուրվականներով լցված այդ դժոխքից. վախեցել եմ մենակությունից: Փախել եմ՝ հաջորդ օրը նորից գալու, և մյուս օրը նորից գալու համար...

Այսօրվա Լենինականը, որով հիմա քայլում ու հույսի շողեր է արձակում արցունքախեղդ Ազնավուրը, այն օրվա Լենինականը չէ: Եվ լենինականցիներն էլ այն օրվա լենինականցիները չեն:

Նրանք արդեն լաց են լինում, ժպտում են, նույնիսկ՝ ուրախանում:

Երկրաշարժի կնճիռները մնացել են քաղաքի վրա:

Անօթևան ձմեռը դիմադրելու, կյանքին կառչած մնալու դաժան դասեր տալով հպարտ լենինականցիներին, համարյա քաշվել-հեռացել է՝ տեղը զիջելով օր-օրի ավելացող «ռուսալեզու» բնակչությանը, որն իր հետ վրաններ է բերել, ճամբարատեղի սարքել քաղաքը և հիմա մեծ-մեծ մեքենաներով չափչփում, կոխկրտում է Լենինականը՝ թե եկել ենք քեզ օգնելու: Անօթևան ձմեռը պատերազմել է մարդկանց հետ, պատերի տակ սսկվել ու քաղաքին հրաժեշտ տալով՝ հետը տանում է ոմանց խիղճը, հոգին, նամուսը...

Քո գարունները կրացվեն նորից...
Ջավակներդ ամուր տուն կկառուցեն...

— Քանի որբ կա Հայաստանում երկրաշարժից հետո,— հարցնում է Ազնավուրը ՀԿԿ քաղաքային կոմիտեում:

Նրան պատասխանում է առաջին դեմքը՝ Միսակ Մկրտչյանը.

— Հայերը որբեր չեն ունենում: Ծնողազուրկ երեխաներ շատ կան, բայց նրանք որբեր չեն: Չնայած որդեգրելու ցակություն շատերը ունեն, ազգականները բոլորին վերցրել են:

— Ճիշտ է, մենք՝ հայերս, այդպիսի ժողովուրդ ենք: Բայց, գիտեք ինչ, եթե երեխան ծնող չունի, ուրեմն որբ է:

Հետո խոսակցությունը սպառնալի ձևով սրվում է:

— Ես լավ գիտեմ, որ հիմա Հայաստանին շատերն են օգնում՝ թե այստեղ՝ Միությունում, թե արտասահմանում: Ինչպես եք տնօրինում այդ օգնությունը:

— Առայժմ այդ աշխատանքը ինչպես հարկն է չի կարգավորված, բայց պետք է այնպես անենք, որ օգնությունը...

— Մինչև ձեզ մոտ գալը ես ուշադիր նայում էի շուրջս և ոչ մի երեխա չտեսա, որի հագին կարգին շոր լիներ, ձեռքին գոնե մի խաղալիք ունենար: Բայց չէ՞ որ հագուստ ու խաղալիք շատ է ուղարկվել:

— Ուրիշ տեղերի մասին չեմ կարող ասել, բայց մեզ մոտ այդ ամենը ստանում, պահեստավորում ենք, որ հետո բաժանենք մարդկանց:

— Իսկ ինչո՞ւ եք պահեստավորում: Եղբայր, հիմա որ չեք տալիս, էլ ե՞րբ եք տալու:

— Դա դժվար գործ է, մարդիկ բողոքում են, մեկին հասնում է, մյուսին չի հասնում:

— Այստեղ կատարվող վատ բաների մասին ես նույնպես քաջատեղյակ եմ: Գիտեմ, որ վրանները վաճառում են, որ վրան է ստանում նա, ով շատ փող է տալիս, որ վերարկուները հագնում են ոչ թե տուժած

մարդիկ, այլ չտուժած քաղաքների չտուժած կանայք...

— Մեզ այդպիսի դեպքեր հայտնի չեն...

— Ես եկել եմ այստեղ մի նպատակով՝ տեսնել, թե մեր օգնությունը ուր է գնում, ինչի կարիք ունեք: Ես ուրիշ բան չեմ ասում:

... Շարլի բախտը բերել է. ականատեսները նրան չեն պատմում.

«Մեր շենքը ճոճվում էր, տանիքը գալիս համարյա գետնին էր կպչում ու էլի ետ գնում: Ես ընկել էի գետնին, ոնց որ մագնիսի էի կպել, չէի կարողանում ոտքի կանգնել, ու նայում էի ճոճվող շենքին, որի մեջ գտնվում էր ամբողջ ընտանիքս...»:

«Ծառից բռնեցի, որ չընկնեմ: Չեղավ: Փռվեցի գետնին: Մեկ էլ տեսա՝ եկեղեցին խաղալիքի պես փլվեց, փշրվեց, և փոշի բարձրացավ...»:

«Լսարանից ուսանողները դուրս թափվեցին և սկըսեցին փախչել: Այն մասերը, որոնց վրայով մի վայրկյան առաջ վազում էին նրանք, մեկը մյուսի ետևից փուլ էին գալիս: Միայն Աստծուն էր հայտնի, թե նրանցից ով էր փրկվելու»:

«Երբ «ժաժքը» պրծավ, ողջ մնացածները իրար անցան, դեսուդեն ընկան՝ ամեն մեկը փնտրելով իր հարազատին: Ամեն մեկը մտածում էր միայն իր մասին: Մեքենաները գժի պես սլանում էին, իրար խփում: Մարդիկ ընկնում էին մեքենաների տակ»:

«Օրերով, գիշերն ու ցերեկը մեկ արած՝ մարդիկ կանգնում էին գետնին հավասարված, գետնի տակն անցած դպրոցի շենքի մոտ՝ հույսով, որ գոնե իրենց երեխայից որևէ հուշ գտնեն: Մարդիկ գժվել էին.

անգամ իրենց երեխայի որևէ իրը՝ տետր, թաշկինակ գտնելիս ուրախանում էին...»:

Այս ամենը Ազնավուրը չէր կարող պատկերացնել նույնիսկ իր հզոր, անսահման երևակայությամբ... Այս ամենը նա չլսեց, նա տեսնում էր միայն վիրակապված քաղաքը, բաց վերքերով քաղաքը:

... Գալիք օրերդ նորից կերգեն,
Զավակներդ ամուր տուն կկառուցեն...

... Հրապարակի վրա փշրված եկեղեցու հրաշքով փրկված փառահեղ խոյակի մոտ մոմ վառելուց հետո Ազնավուրն իր սրտի խոսքն ասաց փոշիների մեջ հավաքված, զինվորական սապոգներ հագած «բուշ-լատավոր» լենինականցիներին, որոնց մազակալած դեմքերին փոշի էր նստել: Հետո նա իջավ (իջեցրին— «այո, մեծացել է») քարակույտի վրայից, և ժողովուրդը, առանց թիկնապահների օգնության, նեղ արահետ բացեց նրա համար: Ազնավուրը քայլեց դեպի ավտոբուսը և հենց այն պահին, երբ ոտքը դրեց առաջին աստիճանին, որ վեր ելնի, մարդիկ ասես նոր միայն հասկացան, որ Ազնավուրը գնում է և այլևս չեն տեսնի նրան, ուշքի եկան ու ցանկացան մի բան էլ իրենք ասել, իրենց երախտիքի, սրտի խոսքն ասել նրան, և ինչ-որ մեկի բերանով գոռացին.

— Շա՛րլ, ցա՛վդ տանեմ...

Դա պոռթկումն էր լենինականցու ելք փնտրող, բարեհոգի մեծամտության: Ախր, Ազնավուրն էր եկել իրենց ցավը տանելու...

«Գյումրի» ռեստորանում մի պատառ հաց ուտելուց, իր խոհարարական գիտելիքները ցուցադրելուց, հայկական ավանդույթների ու սովորույթների մասին (որոնք նա լավ գիտե) խոսելուց հետո Ազնավուրը ճանապարհ է ընկնում դեպի երկրաշարժի էպիկենտրոն՝ Սպիտակ: Լենինականից դուրս, հուշարձանի դիմաց լրագրողներին տված կարճ հարցազրույցում, երբ նրան հարցրին, թե ինչ է ցանկանում հայ ժողովրդին, ինչ ունի ասելու նրան, Շարլը պատասխանեց.

— Հույս, հույս, հույս...

Դա 1989 թվականի փետրվարի երկուսն էր:

«ՇԱ՛ՐԼ, ՅԱ՛ՎԴ ՏԱՆԵՄ»

•

... Սարսափից հետո ու վախից հետո,
Աստված կբուժի լլկված հողը քո —
Քեզ համար, Հայաստան...

Սպիտակում Ազնավուրին արդեն սպասում էին, եթե կարելի է այդպես ասել՝ քաղաքի մուտքի մոտ: Որովհետև քաղաքը հիմնահատակ ավերված էր: «Ֆիլմ» թերթի հիմնադիր և խմբագիր, ներկայումս նաև «Սպիտակ» բարեգործական ընկերության տնօրեն Ռոբերտ Մաթոսյանը, որի հետ մի քանի տարի չէինք հանդիպել, ինձ տեսնելով ուրախանում է այն

չափով, ինչքան կարող էր ուրախանալ սպիտակցին այն օրերին:

Քո գարունները .....
..... ետ կգան նորից,
..... դժոխքից հետո...

Ազնավուրը մեքանայից դուրս է գալիս, ամայի տարածքում դեսուդեն է գնում՝ աննպատակ, ցրված, ցընցված, գուցե չլսելով, թե իրեն ինչ են ասում, ինչ են պատմում սպիտակցիները, թե ինչ են իրենից պահանջում ֆրանսիական հեռուստատեսության աշխատողները (որոնք հատուկ եկել են ֆիլմ նկարելու Ազնավուրի, հայաստանյան երկրաշարժի մասին) : Թեք հարթության վրա, քիչ ներքև, կիսավեր մի շենք է, որի ջարդոտված լուսամուտները ասես փոս ընկած ակնախոռոչներ լինեն:

Կվերընձյուղվի .....
... Զավակներդ ամուր տուն կկառուցեն...

Հանկարծ Ազնավուրը պոկվում է մարդկանցից և արագ-արագ իջնում, մտնում է կիսավեր շենքը, որը կարող էր աղետի խորհրդանիշ ծառայել ցանկացած երկրում: Որոշ ժամանակ անց, չգիտես ինչպես, ինչ հնարքով և ում օգնությամբ Ազնավուրը հայտնվում է երկրորդ թե երրորդ հարկում բացված մի ահարկու ակնախոռոչում ու դեմքով կանգնում դեպի մեզ: Զարմանքից թե ուղիղ աչքերին հարվածող արևի պաղ ճառագայթներից կամ գուցե իր այդ հայտնագործությունից կկոցած, հաճելիորեն ճմրթած դեմքը շատ

է սիրելի... Դա պոռթկում էր,— գիտակցաբար թե անգիտակցաբար,— մեծ մարդու գեղեցիկ պոռթկում: Եվ ինձ թվաց, թե Ազնավուրն այդ պահին արձանացել էր, հավերժացել՝ իբրև լույսի կաթիլ՝ խավարի թագավորությունում, իբրև հույսի շող՝ սուգը սրտերում սպիտակցիներ համար: Եվ շենքը կարծես դարձել էր բնակելի: Գուցե դա պոռթկում չէր, այլ արտիստի մարտահրավեր ֆրանսիացի լրագրողներին, և նիհարավուն կին օպերատորը, որ զարմանալի թեթևությամբ էր իր վրա կրում ծանր կինոխցիկը, ընդունեց այդ մարտահրավերը և տարբեր դիրքերից սկսեց նկարել նրան:

(Երկրորդ այցելության ժամանակ, երբ նա կրկին Լենինական գնաց, երբ բոլորիս և նրա տրամադրությունն արդեն ուրիշ էր, հիշում եմ, երկրաշարժի զոհերի մահարձանին ծաղիկներ դնելուց հետո, Ազնավուրը հեռուստատեսության իր գործընկերոջն ասաց. «Ես կկանգնեմ այնտեղ, այն շենքի տակ, իսկ դու կնկարես այս կետից, որտեղից երևում են հինն ու նորը. դա խորհրդանշական կլինի՝ Լենինականի անցյալն ու ապագան»: Ու գնաց, կանգնեց) :

Գալիք օրերդ .....

..... տուն կկառուցեն...

Սպիտակում, գետնին կողք-կողքի շարված հայ մեծ զորավարների կիսանդրիներից քիչ հեռու (նրան բացատրեցին, որ դրանք հայրենի հողից նորերս տեղահան արված Չարդախլու գյուղի բնակիչներն են բերել

իրենց հետ), զարդաքանդակ խոյակից պոկված մի մեծ կտոր տվեցին Ազնավուրին, որը նա դրեց ապագայում կառուցվելիք շենքի տեղում՝ իբրև հիմնաքար:

Սարսափից հետո.....
Աստված կբուժի.....
Քեզ համար, Հայաստան:

... Ազնավուրի աչքերը հոգնել են, Ազնավուրի միտքը հոգնել է, լցվել է երկրաշարժով: Հայաստանից դուրս ապրող հայի համար ծանր է այսպիսի Հայաստան տեսնելը:

— Չէ, Կիրովական չենք գնում, գնում ենք Երևան:

Եվ՝ զարմանալի բան. ճիշտ հրաժեշտի պահին, Սպիտակի ողջ մնացած մարդկանց միջից մի նախկին սպիտակցի, այժմ՝ պարզապես աղետյալ մեկը, կարծես փոխ առնելով լենինականցիների բացականչությունը, բարեհոգի միամտությամբ գոռում է.

— Շա՛ր, ցա՛վդ տանեմ...

Միամիտ լոռեցի, ախր նա ինքն է եկել քո ցավը տանելու:

Ազնավուրը ժպտում է...

ԱԶԱՆՎՈՒՐԻ ԲԱԽՏԱՑՈՒՅՑԸ

Ազնավուր երևույթի մասին ես շատ բան գիտեմ: Չնայած դրան՝ այդ օրերին, երբ գիշերվա կեսին տուն էի գալիս, ձեռքս էի առնում ու չգիտեմ որերորդ անգամ ընթերցում էի իմ սիրելի երգչի ֆրանսերեն ժո-

ղովածուները, նրա երգերի իմ կատարած թարգմանությունները, «Ազնավուրը Ազնավուրի մասին» գիրքը, տարիներ շարունակ նրա մասին հավաքած հոդվածները՝ գուցե համեմատելու համար հեռակա իմացածս Ազնավուրին իմ տեսած Ազնավուրի հետ և այդ համեմատության շնորհիվ՝ նրան ավելի լավ հասկանալու համար: Եվ ահա ֆրանսերեն հրատարակված մի ամսագրում ուշադրությունս գրավեց Ազնավուրի բախտացույցը, իսկ ես այդ ժամանակ նոր-նոր էի սկսել հետաքրքրվել բախտացույցներով: Դա իմ սիրելի երգչի վրա աստղերի բարձունքից, տիեզերքից նետված հայացք է, որը և ուզում եմ թարգմանաբար ներկայացնել այստեղ:

«1924 թվականի մայիսի 22-ին, 0 ժամ 30 րոպեին Արեգակը մտնում էր Երկվորյակների կենդանակերպի մեջ, և նորածին Ազնավուրը ձեռք էր բերում յուր բնավորության գծերը — շնորհներ, որոնք կոչված էին ծառայելու և նեցուկ լինելու նրան: Եկվորյակները պարգևում են հմայք, կենսունակություն, վիթխարի ընտելունակություն, ուրախ և բոհեմական կյանք, որը նրան հնարավորություն տվեց լավագույնս կողմնորոշվել ամենածանր իրավիճակներում:

Երկվորյակները լինում են նաև անսահման աշխատասեր: Ազնավուրը բնավ երազկոտ չէ: Ցուլի նշանի մեջ Մերկուրին վկայում է հաշվենկատ բնավորության մասին, որը ունի իրականության զգացողություն և գիտե դրամի արժեքը:

Օժտված է ուժեղ, համառ կամքով: Անհնար է ազդել նրա վրա, համոզել փոխելու իր կարծիքը: Երբեմն

նա կարող է մոլորության գիրկն ընկնել, բայց կգնա մինչև վերջ՝ ի հեճուկս նախազգուշացումների:

Նա համբերատար է, կարող է երկար ժամանակ լուռումունջ դիմանալ անտանելի կացությանը, բայց երբ համբերության բաժակը լցվում է, բռնկվում է ցավագին, կույր զայրույթով, մի բան, որ զարմանք կպատճառի ակնհայտորեն մեղմաբարո և հաշտասեր մարդուն:

Ջղային, գերզգայուն Ազնավուրը օժտված է անափ, միշտ արթուն երևակայությամբ: Այն, ինչ նա տեսնում է, իր ներաշխարհում միշտ ավելի գեղեցիկ է ու առավել կատարյալ այն ամենից, ինչ կարող է նրան տալ իրականությունը: Այստեղից էլ՝ նրա զգացմունքային խանդավառությունը, որն ակնթարթորեն իր տեղը զիջում է ձանձրույթին կամ հոգսախաբությանը: Սակայն նա կարող է բռնկվել հրայրքով, բայց այդ պահին դառնում է խանդոտ, չափն անցկացնող, անհավասարակշիռ:

Ահեղ զայրույթի պահին կարող է լինել ոչ իրավացի, նույնիսկ՝ դաժան:

Ազնավուրի հարցում Լուսին—Վեներա դիմակայությունը բացահայտում է սիրո երկվություն:

Խեցգետնի կենդանակերպում Վեներան նրա մեջ արթնացնում է քնքշանքի, կայունության վիթխարի զգացում, միաձույլ, խաղաղ օջախի պահանջ, ինքն իր հետ լինելու բուռն ցանկություն՝ հեռու փառքի գլխացավանքներից և բարձրաշխարհիկ զվարճանքներից: Սակայն Այծեղջյուրի կենդանակերպի մեջ Լուսինը նրան հաղորդում է վտանգավոր հետաքրքրասիրութ-

յուն, փախուստի, արկածախնդրության, զգացմունքային համարձակության հակումներ: Երևակայությունը նրան մղում է բուռն և տառապագին կրքերի»:

Չեմ կասկածում, որ ստորև ներկայացվող հատվածը նույնպես կիետաքրքրի Ազնավուրի երկրպագուներին:

«Երկու անգամ Ազնավուրը մոտ է եղել երջանկությանը, երկու անգամ ապաստան և խաղաղ կյանք է փնտրել ամուսնության մեջ:

Նրա առաջին կինը՝ Միշելինը, Պատրիցիայի մայրը, ծնվել է Կույսի կենդանակերպի ներքո: Միշելինը չափազանց հաշվենկատ, վերին աստիճանի սթափ մտածողություն ուներ այս մեծ երեխայի համեմատ, որին մագնիսի պես ձգում էր վտանգը, որին ղեկավարում էին չարքերը: Էվելինի կենդանակերպը ձուկն է: Նա գիջող էր և ինքնանկախ, անորսալի ու անըմբռնելի: Շարլ Ազնավուրը բավականին բռնկուն բնավորություն ուներ, որպեսզի կարողանար իշխել նրան:

Ուլլան [1], խարտյաշ Ուլլան, ծնվել է Ցուլի կենդա-

---

[1] Ուլլայի մասին նա «Ազնավուրը Ազնավուրի մասին» գրքում գրում է « Ովքեր ճանաչում են ինձ ու սիրում, զարմացան, երբ ամուսնացա Ուլլայի հետ, որը հանդարտ է՝ ինչպես հյուսիսային լիճը, լուռ՝ ինչպես շվեդական դաշտավայրը ձյան տակ Այսուհանդերձ նա հաստատակամ է, կամակոր, բայց ոչ աղմուկ է սիրում, ոչ կռիվ Ապրում ենք միաձույլ, բայց մեզնից յուրաքանչյուրը կարողացավ պահել մի փոքրիկ ազատ գոտի, որը միայն իրեն է պատկանում· Իր հետ ես դարձա նվազ կռվարար ու տաքարյուն
Ուլլայի հետ ես իրավունք ունեմ թեքվելու անցյալիս վրա, առանց մեր միջև վեճ առաջացնելու.

նակերպի ներքո: Բնավորությամբ խաղաղ է, հավասարակշռված, իրատես և անդրդվելի՝ իր կայացրած որոշումներում, սակայն նրա անձնական կյանքը լեցուն է անփույթ թռվչանքներով: Վստահելի, նվիրված ընկեր է: Ջայրույթի բուռն պահերին միշտ զուսպ է, տիրապետում է զայրույթը սանձելու արվեստին: Նա միաժամանակ անտարբեր է և ահարկու կերպով ներկա: Նա կամուրջ է, նա ապաստան է:

Ուլլայի ծննդյան պահին Արեգակը շողշողում էր Ցուլի կենդանակերպում, ուղիղ Մերկուրի մոլորակի վրա, որը թելադրում է Ազնավուրի պրպտող, անհանգիստ բնավորությունը, և հենց այստեղ է թաքնված խորունկ փոխըմբռնման նախանշանը, հաստատուն և երկարակյաց երջանկության երաշխիքը»:

(Ծանոթանալով իր այս բախտացույցին՝ Ազնավուրը ժխտել է երկու պարագա.

«Ես բնավ խանդոտ չեմ: Դաստիարակությունս թույլ չի տվել:

Ուրիշ հարց, եթե այս աստղագիտական խնդրո առարկան խոսում է սիրո խանդի մասին: Եվ քանի որ ինձ համար չափազանց կարևոր է բառի իմաստային երանգը, ասեմ, որ սիրո մեջ ես խանդոտ չեմ, ես բացառիկ եմ:

Մի հավատացեք նաև, որ ես դրամապաշտ եմ: Եթե իմանայի դրամի արժեքը, հիմա անսահման հարուստ կլինեի») :

ԻՄՊՐԵՍԱՐԻՈՆ

Լևոն Սայանի՝ Ազնավուրի իմպրեսարիոյի հետ այդ օրերին շփվելուց հետո միայն կարելի է հստակ պատկերացնել ու հասկանալ, թե ինչ ասել է «իմպրեսարիո» (մեր բառարաններում գրված է՝ արտիստների ելույթների մասնավոր կազմակերպիչ կապիտալիստական երկրներում): Խելացի աչքերով, ամեն մի հարց ակնթարթորեն ընկալող, իր գործի հրաշալի գիտակ, ճարպիկ, կարճահասակ, նույնիսկ մի փոքր ավելի, քան ինքը՝ Ազնավուրը, Լևոն Սայանը զբաղվում է ոչ միայն աշխարհի տարբեր երկրներում Շարլի համերգների պայմանագրեր կնքելով ու կազմակերպելով: Ազնավուրից անբաժան՝ նա երգչի բոլոր մեծ ու փոքր գործերի կազմակերպիչն է, «գործերի կառավարիչը», նրա միշտ ներկա ընկերը, նրա հավատարիմը, «աջ թևը», խորհրդատուն, նրա «տնօրենը»: «Գիտեք ինչ հարուստ է,— մի օր ասաց Շարլի բացսիրտ թիկնապահը: — Ազնավուրից բացի՝ էլի մի քանի մեծ երգիչների իմպրեսարիոն է: Փարիզում, առանց Լևոն Սայանի ոչ մի խելքը գլխին համերգ չի կազմակերպվում: Շատ լավ մարդ է: Շարլից հարուստ է...»:

Ազնավուրը անընդհատ կրկնում էր. «Խոսեք Լևոնի հետ, դա նրա գործն է»:

— Շարլ,— ասում է Յուրի Մելիք—Օհանջանյանը,— այս անգամը հաշիվ չի, երբ ես նորից գալու, մի լավ համերգ կազմակերպենք:

— Յուրա, սիրելիս, դա Լևոնի գործն է, իրեն հարցրու:

— Է՛, Լևոնին եմ հարցնում, ասում է՝ Շարլին ասա, Շարլին եմ ասում, ասում է, Լևոնին ասա,— կատակում է Յուրան:

— Չի կարող պատահել... Լևոնն իր գործը լավ է անում, ես ինչո՞ւ պիտի խառնվեմ նրա գործերին:

Մի լրագրող: Ներկայանում է: Խնդրում է գոնե հինգ րոպե:

— Չգիտեմ, երբ եմ ազատ: Լևոնի հետ խոսեք:

Մեկը ընդունելություն է խնդրում. շատ կարևոր բան ունի հաղորդելու:

— Լևոնի հետ պայմանավորվեք:

Եվ ես պայմանավորվում եմ Լևոնի հետ: Այո, կարող ես ամեն օր, ամեն րոպե լինել Շարլի կողքին, բայց այդ վազքի մեջ հետը զրուցելու ոչ մի հնարավորություն չունենաս:

Եվ «Արմենիա» հյուրանոցում, նախաճաշի սեղանի շուրջը, վաղ առավոտյան կայացած մեր այդ tête à tête հանդիպման ժամանակ ես ավելի շատ ճանաչեցի, ավելի շատ հասկացա Ազնավուրին:

... Նա խոսում է, ես հիշում եմ.

Փառքի ճանապարհը ինչ փշոտ է եղել Ազնավուրի համար: Այդ ճանապարհին նրա անբաժան ընկերներն էին քաղցը, թափառական, անօթևան կյանքը, զբսպված արցունքները... Այդ ճանապարհին նա կուչ է եկել, նվաստացել, զայրույթից պոռթկացել է, կոպտել է, դիմացել է: Ինչեր ասես, որ չի ճաշակել, ինչեր ասես, որ չեն գրել նրա մասին.

— Ազնավուրը չվաճառվող ապրանք է, որովհետև ուտելու բան չէ:

— Նման արտաքինով ու ձայնով բեմ դուրս գալը խայտառակություն է: Բարեբախտաբար, այն մարդիկ, ովքեր ասպարեզ են բացում արտիստների համար, որոշել են բոլոր դռները փակել նրա առաջ:

— Ազնավուրը լավ կաներ զբաղվեր հաշվապահությամբ:

— Հո չի երգում, բղավում է:

— Քիչ է մնում բեմի վրա սիրաբանի:

— Իսկ երբ մեղմ է երգում, կորցնում է մարդու կերպարանքը...

Եվ հանդիսատեսը ծաղրել է, սուլել, նրա վրա շպրտել ինչ ձեռքն է ընկել՝ թղթի կտորտանք, մետաղադրամ...

Նա խոսում է, ես հիշում եմ.

Նյու Յորքում, անզուգական Էդիտ Պիաֆի հետ շրջագայությունների քաղցր օրերին, մի զրույցի ժամանակ, Ազնավուրին ասում են. «Լավիկն ես, բայց աներևակայելի քիթ ունես»: «Իմն է»,— պատասխանում է Ազնավուրը: «Լավ կլինի կարճացնես»,— ասում են նրան: «Ինձ թվում է՝ վատ գաղափար չէ»,— վրա է բերում բռնակալ Պիաֆը: Նրա ասածը՝ ասած է:

Նրա որոշումը բեկման ենթակա չէ:

Վիրաբույժ են ճարում, Ազնավուրին ուղարկում նրա մոտ:

Վիրահատությունից հետո, քթին հսկայական մի վիրակապ, քթի մեջ խոսելով, Շարլը ներկայանում է Պիաֆին:

— Խնդրում եմ Շարլ, այս ինչ օրն են գցել քեզ...

Ազնավուրը մենակ վերադառնում է Փարիզ: Երեք

շաբաթ անց, երբ վերադառնում էր նաև Էդիտը, ընկերներով գնում են օդանավակայան՝ նրան դիմավորելու: Երգչուհին բոլորի հետ ողջագուրվում է, բոլորի հետ ծիծաղում, շատախոսում, իսկ Շարլին համառորեն չի ուզում նկատել: Ազնավուրը, դրանից խոցված ու սրտնեղած, մոտենում է Էդիտին՝ բացատրվելու, հաշիվ պահանջելու: Էդիտ Պիաֆը նոր է միայն նկատում իր «փոքրիկ տաղանդին» և, ծիծաղից գալարվելով, ասում է.

— Ես քեզ չեմ ճանաչել: Հիմա նոր միայն ձայնիցդ ճանաչեցի: Իսկ ես այս ընթացքում մտածում էի. «Ով է այս կեղտոտ հիմարը, որ անընդհատ պտտվում է շուրջս»:

Նա խոսում է, ես հիշում եմ.

60-ական թվականների վերջին ֆրանսիական թերթերից մեկում, կարծեմ՝ «L Humanité»-ում, կարդացի նրա հարցազրույցը և հիշողությանս մեջ տպավորվեց մի հարցի պատասխանը: Շարլը կես-լուրջ, կես-կատակ, մոտավորապես ասում էր հետևյալը. ես երգում եմ տասնութ տարեկան սերը: Երբ մարդիկ հասնում են այդ տարիքին, անպայման սիրահարվում են: Եվ լսում, սիրում են երգերս: Իսկ եթե դա այդպես է, ուրեմն ես միշտ կմնամ, ուրեմն այդ տարիքով անցնող բոլոր մարդիկ ինձ կսիրեն, ուրեմն ես հանճար եմ:

Նա խոսում է.

— Ախր, ինչո՞ւ են այս բաները լցրել սեղանին, ո՞վ է ուտողը: Լենինական, Սպիտակ տեսնողը ինչպե՞ս կարող է հաց ուտել, ընդհանրապես ուտել:

Հայաստանի, հայ ժողովրդի համար մաքառումի այդ օրերը հուսահատվելու աստիճան ծանր էին: Երկրաշարժ, պարետային ժամ, տանկեր ու զրահամեքենաներ, ոխերիմ բարեկամներ, անորոշ ապագայի զգացում... Երկնքում ուղղաթիռների՝ «վերակառուցման ծիծեռնակների» հռնդյուն, արթնացած Ղարաբաղ... Ազնավուրը վեր է կենում, մոտենում պատուհանին: Ամայի հրապարակում սիրուն. շարված են տանկերը: Եվ նա պոռթկում է.

— Ես չգիտեմ, թե այս տանկերն ինչու են այստեղ: Դա իմ գործը չէ, դա ինձ չի վերաբերում, դա քաղաքականություն է: Գուցե եկել են իմ ժողովրդին պաշտպանելու, գուցե եկել են իմ երկիրը գաղութ դարձնելու: Չգիտեմ, դա իմ գործը չէ: Բայց եթե այսպես շարունակվի, ես չեմ կարող լռել, ես կգոռամ, ինչ եք ուզում իմ ժողովրդից...

Եվ շարունակում է.

— Ես իմ գինը լավ գիտեմ: Գիտեմ, որ աշխարհում ընդամենը մի քանի հոգի կան, և դրանցից մեկն էլ ես եմ, որ եթե բերանները բացեն, եթե բերանս բանամ, աշխարհի բոլոր ռադիոներն ու հեռուստատեսությունները, բոլոր լրագրերը կհաղորդեն, կտպագրեն իմ ամեն մի բառը: Այս բանը թող լավ իմանան: Երևանից պիտի թռչեմ Մոսկվա, ես այնտեղ կխոսեմ, կփորձեմ հասկացնել... Եվ՝ մի քիչ էլ կսպասեմ: Իսկ եթե նորից այսպես շարունակվի՝ բերանս կբանամ...

Հագնում է «դուբլոնկան»:

— Ես գիտեմ, որ այս վերարկուները երկրաշարժից տուժած մարդկանց չեն հասնում: Ամոթ է, ինչպես

կարելի է... Այս ամենը՝ Լենինականը, Սպիտակը, ցըրտից կուչ եկած այդ երեխաներին տեսնելուց հետո, ես հիմա ինչպես կարող եմ իմ երեխաներին այսպիսի վերարկու հագցնել...

— Շարլ, երեկ կենտրոնական հեռուստատեսությամբ դու հայ ժողովրդին ցանկացար՝ հույս, հույս և միայն հույս: Իսկ ինչ կասես հայ երեխաներին,— հարցնում եմ:

— Մենք՝ մեծերս, երկրաշարժի այս օրերին շատ սխալներ գործեցինք: Կցանկամ, որ նրանք այդ սխալները չունենան, լինեն ավելի ազնիվ, ավելի մաքուր, ավելի բարի... Մեր երեխաները մեզնից լավն են, վստահ եմ՝ այդպես էլ կլինի:

Եվ՝ ժպտում է...

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

Ամբողջ աշխարհը ոտքի է ելել,
Ամբողջ աշխարհը քեզ հետ է հիմա...

ՔԵԶ ՀԱՄԱՐ, ՀԱՅԱՍՏԱՆ

Փոքրիկ ինքնաթիռը նորից Երևան է եկել: Հրաժեշտի պահ. Ազնավուրը պետք է Փարիզ վերադառնա Մոսկվայով: Օդանավակայանի շենքից դուրս ենք գալիս և, Ազնավուրին օղակած, քայլում դեպի ինքնաթիռը: Հանկարծ Ազնավուրը, որի գործողություններն անհնար է կռահել, թեքում է ուղղությունն ու գնում դեպի մի վիթխարի, գորշ գույնի ինքնաթիռ (այդ օրերին Երևանի օդանավակայանը աշխարհի ինչ ավիաընկերությունների և ինչ չափի ու ձևի ինքնաթիռներ ասես, որ չէր տեսնում): Ցանկանում է ինքնաթիռից ներս մտնել, անգլերենով բացատրվում է ճերմակ խալաթ հագած մի նեգրուհու հետ: Ներս են թողնում: «Ոչ, ո՛չ, ձեզ չի կարելի: Միայն նրան»: Ինքնաթիռի ներսում հեռվից հազիվհազ նըշմարում եմ վիրակապված երեխաների: Ռոպեներն անցնում են: Վերջապես Ազնավուրը դուրս է գալիս: Նորից տխուր է: Նորից հանդիպել է երկրաշարժին: «Երեխաներ են,— ասում է,— տանում են Ամերիկա՝ բուժման»:

Ինքնաթիռը դանդաղ ու սահուն գլորվում է ասֆալտի վրայով: Լուսանցույցի ապակու ետևում Ազնավուրի ճապաղած քիթն է: Ձեռքով հրաժեշտ է տալիս՝

ցտեսություն: Ժպտում է: Մի քանիսս վազում ենք ինքնաթիռի ետևից: Ներսում եղածները ձեռքով են անում՝ ցտեսություն:

Երկաթե ճերմակ թռչունը թևին տալով վեր է բարձրանում, կպչում ամպերին:

Հայաստանում երկրաշարժ էր եղել, և Ազնավուրը եկել էր Երևան...

Սա Շարլ Ազնավուրի առաջին այցելությունն էր: Եվ հիմա կրկին «Զվարթնոց» ենք եկել՝ նրան դիմավորելու:

Ինքնաթիռն ուշանում է: Առաջին անգամ նույնպես ինքնաթիռն ուշացավ: «Երբ արդեն օդում էինք, մեզ հայտնեցին, որ Թուրքիան չի թողնում իր երկրի վրայով թռչել: Ամբողջ Թուրքիան մի մարդուց վախեցավ»,— ժպիտը դեմքին՝ այն օրը ասաց Ազնավուրը: Տեսնես հիմա՞ ինչ է եղել:

Մինչ սպասում էինք Ազնավուրին՝ արտասահմանցի շատ երևելի մարդկանց դիմավորեցինք ու ճամփու դրինք: Հիշում եմ հատկապես փխրուն, չնաշխարհիկ տիկին Ֆանֆանիին — ինքը բարությունը — որին ես թարգմանեցի՝ կոտրտված իտալերենից արագորեն անցնելով ֆրանսերենի:

... Վերջապես Ազնավուրն էլ եկավ:

Եթե Ազնավուրի առաջին այցելությունը հիմնականում «հետախուզական» նպատակ ուներ, ապա այս անգամ նա եկել էր «բեռնավորված», մի տեսակ հաշվետվություն տալու իր ժողովրդին՝ արած և կատարվելիք գործերի մասին, տեսնելու, թե ինչպես են բուժվում Հայաստանի վերքերը:

Անմիջապես երկրաշարժի հաջորդ օրը, երբ աշխարհը դեռևս անտեղյակ էր Աղետից, Ազնավուրն արդեն գրել էր «Քեզ համար, Հայաստան» երգը: «Ես մտածեցի,— ասում է նա,— որ եկել է պահը ուժերիս ներածին չափով օգտակար լինելու իմ ժողովրդին, նեցուկ կանգնելու նրան: Իսկ ես ինչո՞վ կարող էի օգնել: Միայն երգով»: Ազնավուրը մտահղանում և իրականացնում է մի հրաշալի գաղափար. գրել մի երգ, որին մասնակից կդառնան համաշխարհային երգարվեստի համարյա բոլոր նշանավոր երգիչները, որը կերգեն տարբեր լեզուներով, իսկ ստացված գումարը կհատկացվի Հայաստանի երկրաշարժից տուժածներին: Որովհետև մեր մոլորակի ցանկացած կետում կատարված բնական աղետը համամարդկային ցավ է, համամարդկային վիշտ: Երգը Ֆրանսիայում ձայնագրելուց հետո Ազնավուրն անմիջապես թռչում է օվկիանոսից այն կողմ և շուտով Լոս Անջելեսում «Քեզ համար, Հայաստանն» արդեն երգում էին ամերիկյան «աստղերը»: Այնուհետև նույն առաքելությամբ մեկնում է Իտալիա: Համաձայնություն է ձեռք բերում նաև գերմաներեն տարբերակի համար:

— Կուզենայի, որ երգը հնչի հայերեն: Հուսով եմ, ինձ կարձագանքեն նաև այսօրվա ռուսական էստրադայի անվանի երգիչները:

... Եվ քեզ համար է, մոռացված իմ ազգ,
Արար աշխարհը իր սիրտը բացել
Ու քեզ է մեկնել ձեռքերը ահա...

Հիմա իմ սեղանին է Ազնավուրի մակագրությամբ «Քեզ համար, Հայաստան» երգի ձայնապնակը՝ ֆրանսիական ժամանակակից էստրադային երգիչների կատարմամբ: Ձայնապնակի վրա գրված են նրանց բոլորի անունները.

Ադամո, Սերժ Ավետիքյան, Մարսել Ամո, Անիմո, Ռոզի Արմեն, Շարլ Ազնավուր, Կատյա Ազնավուր, Դիդիե Բարբելիվիեն, Ֆիլ Բարնեյ, ժիլբեր Բեկո, ժան Բիրկին, ժերար Բլան, Ռիշար Բոհրինգեր, Ջանի Բոնի, Կարլոս, ժան Կարմե, ժան-Պիեռ Կասսել, Ալեն Շամֆոր, Ֆրեդերիկ Շատո, Լուի Շեդիդ, ժյուլիեն Կլերք, Նիկոլ Կրուազիլ, Դալլաս, Դավիդ և Ջոնաթան, Միշել Դելփեշ, Սաշա Դիսթել, Դորոթե, Միշել Դրյուքեր, Իվ Դյութեյ, էլզա, ժան-Պիեռ Ֆոկո, Ռոլան ժիրո, Ռիշար Գոթենե, Ֆելիքս Գրեյ, Սերժ Գիրաո, Ջոննի Հոլիդեյ, Ռոբեր Հոսեն, Իմաժ, ժերո, Վերոնիկ ժանս, Պատրիցիա Կաաս, Քիմերա, Դավիդ Կովեն, ժիլ Լակոստ, ժան-Լյուք Լահայ, Ֆրենսիս Լալան, Սերժ Լամա, Ֆիլիպ Լավիլ, Հերբերտ Լեոնար, Լիո, Մարի Միրիամ, Դիդիե Մարուանի, Միրեյ Մաթյո, Ֆրեդ Մելլա, Մաշա Մերիլ, էդդի Միթչել, Պիեռ Մոնդի, ժիլբեր Մոնտանե, էրիկ Մորենա, Նանա Մուսկուրի, ժորժ Մուստակի, Թիերի Մութին, Նակաս, Նիկոլետա, Ֆլորեն Պանյի, Վանեսսա Պարադի, Պոփեք, ժաքի Կվարց, Ռաշիդ, Սերջ Ռեջիանի, Ռենո, Լին Ռենո, Պիեռ Ռիշար, Դիք Ռիվեր, Պատրիք Սաբաթյե, Հանրի Սալվադոր, Միշել Սարդու, Շուշաննա, Ալեն Սուշոն, Լինդա դե Ջուցա, ժան-Մարկ Թիբո, Ֆրանսուա Վալերի, Ռոզի Վարդ, էրվե Վիլար, Մարինա Վլադի, Լորեն Վուլցի, ժաք Վեբեր:

Եթե քո բախտն ես անգամ անիծում,
Քո աչքերի մեջ, Հայաստան երկիր,
Հույսի մի շող եմ ես ուզում տեսնել,
Ուզում եմ տեսնել ցանկություն, ձգտում՝
Ճակատագիրդ ձեռքդ առնելու,
Ճակատագիրդ ամուր պահելու:

Այս անգամ Ազնավուրին և նրա խմբին դիմավորում ենք հին ծանոթների պես:

— Օ՛, կհիշեմ, կհիշեմ, ինչպե՞ս եք:— Լևոն Սայանն է:

— Դո՞ւք երբ եք գալու Փարիզ:— Բացսիրտ թիկնապահն է:

— Դեմքերիդ գույն է եկել, լավ է, ուրախ եմ:— Ազնավուրն է:

... Եվ նորից Լենինական:

Այս անգամ մեզնից առաջ դուրս է գալիս մի մեծ բեռնատար՝ Ազնավուրի բերած «նվերներով»:

Հասնում ենք Լենինական: Հասցեն որոշակի է՝ մանկական հիվանդանոց: Բեռնատարը, որ պիտի մեզնից առաջ հասած լիներ, դեռ չկա: Սպասում ենք: Բժիշկները, թաղի բնակիչները դուրս են թափվել, հավաքվել հիվանդանոցի բակում:

— Ծո, խո խելառ չես, Ազնավուրը ըդիկ չէ, էն մարդն է:

Ազնավուրը սպասում է, բեռնատարը չկա: Ի վերջո որոշում է մտնել հիվանդանոց: Մեկ-մեկ մոտենում է հիվանդներին, հարցուփորձ անում: «Մինչև մեկ տարեկան երեխաների կեր ենք բերել,— ասում է գլխավոր բժշկին:— Մեքենան մեր ետևից գալիս է»:

Գլխավոր բժիշկը ուրախ է.

— Դրա կարիքը շատ ունենք:

— Ասեք, էլ ինչ եք ուզում՝ կուղարկենք,— ասում է Շարլը:

Խնդրում են բոլորին դուրս գալ հիվանդասենյակից, լուսարձակներն ուղղում են Ազնավուրի վրա: Որոշ ժամանակ անց դուրս է գալիս նաև Ազնավուրը: Բեռնատարը դեռ տեղ չի հասել: «Ձեր ասած համարանիշով մեքենա Լենինական չի մտել»,— մեզ զեկուցում է ավտոտեսուչը: Մթնոլորտն ավելի է սրվում:

— Հիմա ինչպե՞ս գնամ մանկապարտեզ, երեխաների մոտ, առանց նվերների: Անհարմար է...

Դրսում ցուրտ է: Նորից սկսում են նկարահանել՝ բժիշկների հետ զրուցելիս: Կարծես ժամանակ սպանելու համար: Շարլը նստում է մեքենայի մեջ ու սպասում. գուցե բեռնատարը հիմա կգա:

— Ծո, Ազնավուրը ըդիկ չէ, ավտոյի մեջ նստած մարդն է,— համառ մի երեխա հասկացնում է մի ուրիշ համառի:

... Դե լավ, գնում ենք մանկապարտեզ: Երեխաները նրան վաղուց են սպասում: Նստեցնում են իրենց կենտրոնում, աշխարհի բոլոր երեխաների պես՝ նախ շփոթվում են, հետո աշխուժանում, Անդրանիկ արտասանում, Անդրանիկ երգում, լուսանկարվում: Ազնավուրը, ինքն էլ մի երեխա, ժպտում է («Վիշտն հանգըրվան է գտել ժպտիս ծալքերում, ճակատիս վրա հուսահատության ակոս է գծել...»):

— Երեխաներ, Ազնավուրը ձեզ համար նվերներ է բերել, մեքենան շուտով տեղ կհասնի:

(Ցավոք, բեռնատարը պետք է տեղ հասներ հաջորդ օրը միայն. ճանապարհին ինչ-որ վթար էր պատահել) :

Վերադառնում ենք Երևան:

Հետո եղավ մամուլի ասուլիս, եղան հանդիպումներ Նախարարների խորհրդում, նախարարների հետ, և զրույցներ եղան առանձին անհատների հետ:

... Չեմ ուզում ավարտել Շարլի հետ հանդիպումների այս պատառիկները, չեմ ուզում վերջակետ դնել: Ինչքա՜ն բան դեռ չեմ ասել թե՛ այդ օրերի, թե՛ իր՝ Ազնավուրի մասին: Հրաժեշտի ժամանակ ընկերս՝ Կոմպոզիտորների միության երաժշտական ֆոնդի տնօրեն, ձեռներեց, գործունյա և մարդամոտ (Շարլի խմբում բոլորը սիրեցին նրան) Գաբրիել Իսրայելյանը, որ միշտ Ազնավուրի կողքին էր՝ թե՛ կինոխցիկի մեջ, թե՛ նրանից դուրս («Այսօր Փարիզում եթեր գնաց մեր ռեպորտաժը,— Շարլի առաջին այցելության հաջորդ օրը նրան հայտնեցին ֆրանսիական հեռուստատեսության աղջիկները,— կադրի մեջ դուք էլ կայիք») , հարցրեց Ազնավուրին

— Շարլ, հաջորդ անգամ ե՞րբ ես գալու:

Լևոն Սայանը պատասխանեց.

— Գործերը շատ են, եթե հաջողվի հունիս-հուլիսին:

Հունիս-հուլիսը վաղուց անցել է...

Եվ ես հիմա չեմ ուզում ավարտել այս պատառիկները:

Որովհետև մենք սպասում ենք Շարլին: Նա նորից պիտի գա...

... Եվ նորածին Ազնավուրը ձեռք էր բերում յուր բնավորության գծերը...

ՄՈՐ՝ ՔՆԱՐ ԱԶՆԱՎՈՒՐՅԱՆԻ ՀԵՏ:

...Որպեսզի մայրս ինձ հասկացնի, թե ես երբեք չպետք է իրեն համեմատեմ իմ ապագա կամ որևէ մեկ այլ կնոջ հետ, մի այսպիսի պատմություն էր պատմում...

«ԵՍ ԱՆՍԱՀՄԱՆՈՐԵՆ ՍԻՐՈՒՄ ԵՄ ԵՐԵԽԱՆԵՐԻՍ»

Աստվածաշնորհ դերասան եմ ես թափառաշրջիկ...
Ինձ մի բեմ տվեք և հանդիսատես,
Ու տաղանդավոր,
Ու տաղանդավոր մարդ կդառնամ ես:

ԱՎԱԳ ՈՐԴԻՆ՝ ՊԱՏՐԻԿԸ:
«... Մենք գտել ենք իրար, ես և Պատրիկը, Պատրիկը և ես»...

ՄԻՇԵԼԻՆ:

Մի կաբարեի տնօրենի մոտ պատահաբար հանդիպում եմ մի չքնաղ օրիորդի և առանց ժամանակ կորցնելու՝ ժամադրվում եմ հաջորդ օրվա համար: Նա գալիս է... Հետագայում մենք բազում ուրախ օրեր ապրեցինք միասին:

Երկրորդ կնոջս անունը Էվելին Փլեսիս է: Ես նրան խենթի պես սիրեցի 7 տարի...

ՇԱՐԼ ԱԶՆԱՎՈՒՐ ԵՎ ՄԻՐԵՅ ՄԱԹՅՈ:

Չես կարող նրա ընթացքը շեղել,
Չես կարող նրան միշտ քեզ մոտ պահել,
Ջահելությունը...

ՊԱՏՐԻՑԻԱ—ՍԵԴԱ

Ուլլայի հետ ամուսնացել եմ հայկական եկեղեցում, և ավագ փոխերեցը մեր գլխին դրել է ամուսնության թագ՝ զարդարված խաչով: Նույնպիսի թագ դրել են հորս ու մորս, տատիս ու պապիս գլխին...

ՄԻՇԱ ԱԶՆԱՎՈՒՐՅԱՆԸ ՈՒԼԼԱՅԻ ԵՎ ՇԱՐԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ՀԵՏ

5 Ազնավուրը ծանոթ և անծանոթ

61

ՔԵԶ ՀԱՄԱՐ, ՀԱՅԱՍՏԱՆ

Քո գարունները կբացվեն նորից,
Քո լավ օրերը ետ կգան նորից,
Ձմռանից հետո, դժոխքից հետո,
Կվերընձյուղվի կենաց ծառը քո —
Քեզ համար, Հայաստան:

Գալիք օրերդ նորից կերգեն,
Ձավակներդ ամուր տուն կկառուցեն,
Սարսափից հետո ու վախից հետո,
Աստված կբուժի լլկված հողը քո —
Քեզ համար, Հայաստան:

Ամբողջ աշխարհը ոտքի է ելել,
Ամբողջ աշխարհը քեզ հետ է հիմա,
Եվ քեզ համար է, մոռացված իմ ազգ,
Արար աշխարհը իր սիրտը բացել,
Ու քեզ է մեկնել ձեռքերը ահա:

Եթե քո բախտն ես անգամ անիծում,
Քո աչքերի մեջ, Հայաստան երկիր,
Հույսի մի շող եմ ես ուզում տեսնել,
Ուզում եմ տեսնել ցանկություն, ձգտում,
Ճակատագիրդ ձեռքդ առնելու,
Ճակատագիրդ ամուր պահելու:

ՆՐԱՆՔ ԸՆԿԱՆ

Նրանք ընկան ու այդպես էլ չհասկացան, թե ինչու,
Տղամարդ, կին, թե երեխա, որ ապրել էին ուզում այնքան,
Հարբածի պես մարմնակործան նրանք ընկան,
Հոշոտված ու սրի քաշված, աչքերը բաց, սարսափազդու:
Նրանք ընկան՝ աղերսալի հայացքները Աստծուն հառած՝
Եկեղեցու նախադռան կամ հարազատ շեմին ընկան,
Անապատում խառնուխռիվ ու մոլորյալ հոտի նման,
Հուր ու սրից կոտորվեցին ծարա՛վ, սովա՛ծ:
Եվ ամենքը լուռ մնացին այս աշխարհում ցնորական,
Երբ ողջ մի ազգ իր իսկ արյան մեջ էր խեղդվում,
Իսկ Եվրոպան ջա՛զն էր դեռ նոր հայտնագործում,
Շեփորների թառանչներում խլանում էր լաց ու կական:
Նրանք ընկան մաքրաբարո ու լուռումունջ, հազարներո՛վ,
Միլիոններո՛վ նրանք ընկան, և աշխարհը չսարսռաց,
Ալ ծաղիկներ նրանք դարձան մեկ վայրկյան անց,
Ու ծածկվեցին քամու բերած ավազներով, մոռացումո՛վ:

Նրանք ընկան՝ աչքերի մեջ լույսի շողեր արևահամ,
Օդում ճախրող թռչունի պես, որ զարկվում է մի գնդակից,
Նրանք ընկան՝ ուր պատահի, և ոչ մի հետք չթողեցին,
Չճանաչված ու մոռացված և քուն մտած վերջին անգամ:
Նրանք ընկան միամտորեն հավատալով, որ ան-կասկած,
Իրենց փոքրիկ զավակների մանկությունը կարող էր հար շարունակվել,
Եվ մի օր էլ կարող էին հուսո երկրում խրոխտ քայլել,
Երկրներում, որտեղ մարդկանց ընդունում են միշտ գրկաբաց:
Եվ այդ ազգի ծնունդն եմ ես, որ հանգչում է ան-գերեզման,
Հենց այն ազգի, որ նախընտրեց մահը՝ կյանքից, բայց հավատը իր չուրացավ,
Որը գլուխ չխոնարհեց անարգանքի առաջ բնավ,
Որ հարություն առավ կրկին, ի հեճուկս ամեն ինչի՝ չտրտնջաց հուր հավիտյան:
Նրանք ընկան, որ ընկղմվեն հավերժական խա-վարի մեջ ժամանակի,
Նրանք ընկան՝ քաջեր դառնալ չհասցրին,
Առանց տարիք հարցնելու, մահը կանգնեց նրանց շեմին,
Քանզի նրանց մեղքը մեկն էր՝ զավակներն էին Հայաստանի:

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աչքերս բացել, տեսել եմ մեր տան ողորմելի ու հին կահկարասին.
Դա Լատինական թղամասում էր, Մսյո-լը-Փրենս փողոցի վրա,
Իմ շրջապատում դերասաններ ու երգիչներ կային,
Այդ մարդիկ միայն անցյալ ունեին, բայց ոչ՝ ապագա,
Այդ մարդիկ չքնաղ, աննման էին, ապրում էին լոկ երազանքներով,
Խոսում էին զուտ ռուսերեն ու հայերեն լեզվով:

Հայրս երգում էր օպերետներում,
Ես նրա ձայնին նախանձում եմ դեռ,
Մայրիկս այնտեղ մի սուբրետուհու դեր էր կատարում,
Բայց նրանց խումբը կարիքավոր էր ու դրամ չուներ,
Ես ու քույրս էլ՝ ուրախ ու խնդուն,
Ծիկրակում էինք բեմանկարի ետևից թաքուն:

Այդ արտիստները — հոգսը ուսերին, ընտանիքի տեր—
Որ խոսում էին բնավ ոչ սահուն ֆրանսերենով,
Համաձայն էին ցանկացած գործի, միայն տեղ լիներ,
Համաձայն էին տաքսի վարելով կամ կար անելով
Դրամ վաստակել ու մի կերպ ապրել,
Եվ աշխատանքում բարեխիղճ լինել:

Եվ գործից հետո, աշխատանքային բոլոր օրերին,
Այդ արտիստները՝ կյանքից վտարված, փորձ էին անում,
Որպեսզի գոնե դրամի մասին չմտածելու հաճույքն զգային
Գեթ երկու անգամ ամսվա ընթացքում,
Ու բեմ դուրս գալով երկչոտ, ամոթխած,
Կանգնեն տարագիր մարդկանցով լցված դահլիճի դիմաց:

Երբ, պատահում էր, փող հայթայթելը դառնում էր անհույս,
Երբ ցուրտն էր նեղում, ուտելու ոչինչ չէինք ունենում,
Կոտրված սրտով ու խռովահույզ
Մենք գնում էինք Մոն-դը-Փիեթե ու գրավ դնում
Մի հին ինքնաեռ, այլ անպետք իրեր՝
Մեզ շատ հարազատ անցյալի հուշեր:

Մենք հիշում էինք անցավորներին Բոսֆորի ափին ընկած, հոշոտված,
Մեր ընկերների, մեր կյանքի համար բաժակ բարձրացնում,
Կանայք սուսուփուս լաց էին լինում, իսկ տղամարդիկ, մինչև լուսաբաց,
Բյուր անգամ երգված երգն էին երգում,—
Դա մեր ֆոլկլորն է, որը գալիս է դարերից հին-հին,
Մեր այդ երգերում հավերժ ապրում են անցավորները, սերը և գինին:

Մեր տան սեղանից անպակաս էին ընկեր, բարեկամ,
Նրանց հետ սիրով միշտ կիսում էինք մի կտոր հացը,
Իսկ ծնողներս ինձ ասում էին. «Վերևն Աստված կա,
Լավություն արա՝ մի օր անպայման կգա քո դիմաց»:
Այդ ամենի մեջ նշույլ իսկ չկար խղճահարության.
Հյուրը տեղ ուներ մեր գլխի վրա, Աստված էլ մեզ էր հասնում օգնության:

Մինչ խոհանոցում, մի ձեռքին՝ կաթսա, մի ձեռքին՝ տապակ,
Իր անելիքն էր հայրս որոշում,
Գիշեր ու ցերեկ մայրս նստում էր նավթի լույսի տակ
Ու մեծահարուստ տների համար նա կար էր անում:
Իսկ ես ու քույրս գնումներ անում, տունն էինք մաքրում
Եվ հետո միայն դպրոց հաճախում:

Ազատ, ինքնիշխան՝ այսպես մեծացա,
Գիշերները ես թունդ հարբում էի, բայց ցերեկները պետք էր աշխատել,
Կյանքիս ընթացքում էլ ինչեր ասես, որ ես չտեսա —
Էլ իսկական սեր, էլ մահից պրծնել,
Ես երեխաներ ունեցա, որոնք վկա են եղել,
Թե ամեն անգամ, ախ, լցված սրտով ինչպես եմ հիշել.

Դա Լատինական թաղամասում էր, Մսյո-լը-Փրենս
փողոցի վրա,
Իմ շրջապատում դերասաններ ու երգիչներ կային,
Այդ մարդիկ միայն անցյալ ունեին, բայց ոչ ապագա,
Այդ մարդիկ չքնաղ, աննման էին, ապրում էին լոկ
երազանքներով,
Խոսում էին զուտ ռուսերեն ու հայերեն լեզվով:

ԴԵՌ ԵՐԵԿ

Դեռ երեկ քսան տարեկան էի
Ու վատնում էի ժամանակը իմ,
Խաղում կյանքի հետ,
Ինչպես խաղում են հաճախ սիրո հետ,
Ու գիշերները ցերեկ դարձնում,
Հաշվի չառնելով, որ կյանքս է անցնում
Ու հալվում է այս ժամանակի մեջ:

Ես ծրագրեր կազմեցի բազում, որոնք այդպես էլ մնացին օդում,
Եվ փայփայեցի ես այնքա՛ն հույսեր — այդ պատրանքները հօդս ցնդեցին,
Ես մոլորվել եմ, հիմա չգիտեմ դեպի ուր գնամ,
Եվ երկնքին եմ հայացքս հառել, բայց սիրտս արդեն հանձնել եմ հողին:

Դեռ երեկ քսան տարեկան էի,
Ու մսխում էի ժամանակը իմ,
Ես հույս ունեի կանգնեցնե՛լ նրան,
Զսպե՛լ ու սանձե՛լ,
Ու առաջ անցնել նրանից անգամ,
Բայց ես վազեցի, վազեցի միայն,
Շունչս կտրվեց և ես հևասպառ կանգնել եմ ահա:

Անտեսում էի անցած օրերս և ապագային իմ ապավինում,
Իմ «ես»-ն անպայման առաջ էր ընկնում բոլոր խոսքերից,

Համոզված էի, որ իմ կարծիքը ամենաճիշտն էր այլ կարծիքներից,
Երբ աշխարհն էինք ըմբոստ կեցվածքով մենք քննադատում:

Դեռ երեկ քսան տարեկան էի,
Բայց ես կորցրի ժամանակը իմ
Հիմարություններ անելով միայն,
Որոնք իմ հոգում բնավ չթողին
Ոչ մի ճշմարիտ, որոշակի հետք,
Ճակատիս վրա մի քանի կնճիռ գոյացավ միայն,
Ու ձանձրույթի վախ:

Քանզի սերերս, լույս աշխարհ չեկած, իջան գերեզման,
Ընկերները իմ ինձնից հեռացան, նրանք այլևս չեն վերադառնա,
Մեղքը իմն է, որ շուրջս մարդ չկա, դատարկ է այ-սօր,
Ջահել օրերս ու կյանքս, ավա՜ղ, վատնեցի իզուր:

Իմ լավն ու վատը ես չհասկացա,
Դեն շպրտեցի ամեն մի լավ բան,
Ու ինձ մնացի՛ն ժպիտներս պաղ,
Ու ինձ մնացին արցունքներս քար:
Որտե՞ղ է հիմա
Ջահելությունը
Իմ քսանամյա:

ՋԱՀԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Ծիծաղել չենք հասցնում՝ կորցնում ենք մանկությունը,
Ճանաչել չենք հասցնում՝ ջահելությունն է փախչում,
Ամենն այնքան կարճ է թվում՝ զարմանում ենք,
Չհասկացած գոյությունը՝ այն լքում ենք:

Երբ ձեռքիդ ունես
Ջահել լինելու,
Լի խոստումներով
Օրեր տիրելու
Հարստությունը,
Երբ սերը մեր կողմն է թեքվում
Եվ ճերմակ գիշերներ նվիրում,
Երբ երևում է հեռու առջևում
Ժպտացող կյանքը,
Հույսերով պատված և լի խնդությամբ,
Նաև խենթությամբ
Պետք է խմել մինչ արբեցում
Ջահելությունը:
Ջի քսան տարվա
Ամեն վայրկյանը
Արդեն հաշված է,
Եվ էլ երբեք
Կորցրած պահը

Նորից չենք գտնի:
Հաճախ էլ իզուր ձեռքերս ենք պարզում,
Զղջում, ափսոսում,
Որ ուշ է արդեն...
Չես կարող նրա ընթացքը շեղել,
Չես կարող նրան միշտ քեզ մոտ պահել,
Ջահելությունը:

ՍԵՐՍ ՀԵՌԱՑԱՎ ՈՒՐԻՇ ՍԻՐՈ ՀԵՏ

Վիշտն հանգրվանել ժպտիս ծալքերում,
Ճակատիս վրա հուսահատության ակոս է գծել,
Մի ծերունի է անցյալս, որը ասելիք չունի,
Զի ժամանակը երկուսիս միջև անդունդ է փորում:

Որպեսզի երբեք չտեսնեմ լույսը
Եվ ինձ ցավակցող դեմքերը մարդկանց,
Թող որ շղթայված ծովը հարձակվի ցամաքի վրա,
Թող կյանքը մեռնի,
Թող լույսը մարի —

Սերս հեռացավ ուրիշ սիրո հետ:

Թող որ դժոխքի կրակը, ինչպես ծղոտի մի խուրձ,
Այս քաղաքակիրթ աշխարհը այրի,
Գետինը բացվի և իր անդունդից
Ծնի ահավոր մի մոռացություն
Միշտ հարատևող —

Սերս հեռացավ ուրիշ սիրո հետ:

Քանզի վիրավոր սիրտս է տրոփում դեռ խավարի մեջ,
Ես երջանկության մասին խոսքերը չեմ ուզում լսել,
Թող քամու երգը մահվան երգ դառնա,

Որ ողջ աշխարհը բաժանի վիշտս,
Հպարտությունն ու թախիծը կյանքս դարձրին դա-
տարկ,
Իմ բերանի մեջ հուսահատության դառը համը կա,
Գլուխս լիքն է հիմար մտքերով,
Քանի որ սիրտս լոկ մի ճիչ ունի,
Նույնը ամեն օր —

Սերս հեռացավ ուրիշ սիրո հետ:

ՄՆԱ

Մնա՛,
էլի՛ մնա,
Մնա ինձ հետ,
Մարմնիս վրա,
Ձեռքերիս մեջ,
Թևատարած,
Բավարարված,
Խենթ ու խելա՛ռ,
Ու հևասպառ:

Մնա սիրով
Ու նվաղած,
Եվ գիշերով
Ցանկապատված,
Սրտիս վրա,
Առանց ամոթ,
Մնա կրքոտ,
Մերկ համարյա:

Այդպես մնա,
Հիագեցած,
Կյանքիս վրա,
Ձեռքս սեղմած,
Գիսախռիվ,
Մարմնակործա՛ն,

Հեզ, անխռոմվ,
Ու ինքնիշխան:

Այստեղ մնա,
Բառ մի ասա,
Հրճվիր, ցնծա
Մաշկիս վրա,
Հույսի գրկում
Ու գիշերվա,
Մինչև դրսում,
Լույսը բացվեր,
Իմ սեր, իմ սեր:

ԲԱՐԻ ՏԱՐԵԴԱՐՁ

Հագել եմ ահա նոր կոշիկներս, որ սեղմում են քիչ,
և կոստյումս նոր,
Ու վաղուց արդեն քեզ եմ սպասում,
Մեր այս երեկոն շատ է հիշարժան. հենց
այսօրն էր, որ
երջանկությունը քեզ ճերմակ-ճերմակ շոր էր հագ-
ցնում:
Բայց բարկացած ես, հիմա կպոռթկաս, ես դա
զգում եմ,
Ծպտուն չեմ հանում, դե, հասկանում եմ, որ պիտի
լինեմ խոհեմ, զգայուն,
Քո անտանելի բնավորությամբ, եթե ես թեկուզ մի
բառ էլ ասեմ,
Դու ինձ գրողի ծոցը կուղարկես, ու ժամանակը
կանցնի ապարդյուն:
Ութն անց քառորդ է, նոր զգեստիդ ես վաղուց
սպասում,
Որ պետք է գոնե քեզ հասցնեին այս առավոտյան,
Դա բավական չէ,— կարծես ամեն բան դիտմամբ
են անում,
Որ մենք ուշանանք,— սանրը ցած սահեց, ու վար-
սերը քո ցիրուցան եղան:
Եթե ամեն ինչ այսպես ընթանա՝ մնացեք բարո՛վ,
իմ ներկայացում,
Թատրոն ու գրող, որ շատ ես գրում մոդայիկ գոր-
ծեր,

Մնացեք բարով, Անույի պիես, Անույ թե Սարտր,
հիմա չեմ հիշում,
Բայց ես մեզ համար երկու տոմս ունեմ, այն
էլ՝ լավ տեղեր:
Բարի տարեդարձ,
Բարի տարեդարձ:

Շունչդ տեղն ընկավ՝ քո շրջազգեստը վերջապես
բերին,
Եվ որպեսզի մենք ժամանակ շահենք, որքան կա-
րող եմ ես էլ եմ օգնում,
Ամեն ինչ կարծես բարեհաջող է, բայց հենց
այդ պահին,
Սարսափելի բան. շղթան լռվում է, կանգ առնում
ուղիղ շորիդ կենտրոնում:
Նյարդայնանում ենք, շղթան ձգում ենք, քաշքշում
հերթով,
Իրար խանգարում և այնքան ենք մենք ճիգ ու
ջանք թափում,
Որ պատռվում է կտորը հանկարծ՝ մի դժոխային
աղմուկ հանելով,
Ու տեսնում եմ, թե հույսերդ ինչպես արցունք են
դառնում:
Վերջապես ժամը տասնմեկի մոտ պատրաստ ես
արդեն: Դե լավ, գնացինք:
Բայց տեղ հասնելով, տեսնում ենք, ավաղ, թատ-
րոնը փակ է:
Գնանք, սիրելիս, գլուխ-գլխի տանք, ճաշենք մի-
ասին:

Սակայն ուզում ես տուն վերադառնալ, սիրտդ լցվածէ:
Լուռ ու անշշուկ՝ դանդաղ քայլում ենք փողոց-
ներով մութ,
Դու ժպտում, իսկ ես համբուրում եմ քեզ, ժպտում
ես էլի...
Օրը փչացավ, բայց բախտավոր ենք, երեկոն
ինչ փույթ,
Սիրում ենք իրար, իսկ սերն հզոր է, ան-
խորտակելի:

Բարի տարեդարձ,
Բարի տարեդարձ,
Բարի տարեդարձ:

ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ ԵՄ, ՈՐ ՔԵԶ ՍԻՐՈՒՄ ԵՄ

Իմ վախից՝ քեզ կորցնելու և այլևս չգտնելու,
Իմ ուղեղում շարժվող անմիտ այս աշխարհից,
Ինձ ցնորող գիշերներից,
Երբ կասկածը գրկում է ինձ և պարուրում սիրտս ահով,
Եզրակացնում եմ, որ քեզ սիրում եմ,
Եզրակացնում եմ, որ քեզ սիրում եմ:

Լոկ քո մասին մտածելու երկարուձիգ իմ ժամերից,
Ամենօրյա երազանքից, ուր քո կուռքն է միայն իշխում,
Եվ իմ մարմնից, որ տենչում է մարմինը քո,
Տխուր մտքից, որ խաղում ես ինձ հետ կրկին,
Եզրակացնում եմ, որ քեզ սիրում եմ,
Եզրակացնում եմ, որ քեզ սիրում եմ:

Քեզ տեսնելիս ինձ պարուրող սարսուռներից,
Կտրվող շնչից, իմ երակներում սառչող արյունից,
Մեկուսացումից, որ էությունն իմ հուսալքում է,
Այն ցավից, որ դու պատճառում ես ինձ անկախ քեզանից,
Սրտիս ու մտքիս հակադրումից,
Կորած քսան տարիներից, որոնք լոկ քեզ նվիրեցի,
Եվ հայացքից քո ինձ բավարարող,
Որ հույս ներշնչեց մի քանի օրով,
Եզրակացնում եմ, որ քեզ սիրում եմ,
Եզրակացնում եմ, որ քեզ սիրում եմ:

Մտորումից, որ վերջը կարող է սկիզբ համարվել,
Եվ իմ խինդերից, որ մերժում ես քո անտարբերու-
թյամբ,
Տառապանքի մեջ գալարվող սիրո ամեն մի խոս-
քից,
Որ արգելված է այժմ քեզ ասել,
Եզրակացնում եմ, որ քեզ սիրում եմ,
Եզրակացնում եմ, իմ սեր:

ՊՈԿԵՐ

Մեր թաղում ապրող երեք տղաներ
Ինձ քարշ տվեցին, անցած շաբաթ էր,
Ինչ-որ խաղատուն,
Եվ ծխով լեցուն
Մի սենյակ տարան:
Պոկերին հարմար սեղան ճարեցինք,
Չորսով նստեցինք,
Մեր բաճկոնները հանեցինք հերթով,
Թունդ խմիչքների պատվերներ տալով,
Եվ թղթախաղը սկսվեց այսպես.

Խաղաթուղթն առնում,
Խառնում են, խառնում,
Հետո կիսում են,
Նորից բաժանում:
Պոկեր ենք խաղում. ա՛յ քեզ հրաշք բան:
Խաղաթուղթն առնում,
Նայում են, նայում,
«Խաղաթո՛ւղթ» գոռում,
Եվ դեն շպրտում:
Երեք խաղաթուղթ մի կողմ եմ նետում, ձեռքիս մի «զույգ» կա:
Երբ լավ խաղաթուղթ կա մարդու ձեռքին,
Չարությամբ է նա բոլորին զննում,
Հայացքը մեխում իր հարևանին,
Փորձում է կարդալ,
Թե ինչ է գրված նրա աչքերում:

«Երեք խաղաթուղթ» պահանջում եմ ես,
Իսկ հարևանս երկուսն է ուզել:
— Քանի թուղթ տամ քեզ:
— Հերիք է մեկն էլ:
Գլխի եմ ընկնում՝ «բլեֆ» է անում:
— Ինձ մոտ «բլանդ» է, խոսիր, քո հերթն է,—
Երրորդն է ասում կողքի նստածին:
Իսկ սա բարձրաձայն «պարոլ» է գոռում:
Եվ առաջինը հարյուր ֆրանկ է նետում սեղանին:
Իսկ ես ասում եմ. «Հարյուրիդ վրա հազար
եմ դնում»:
Մյուս երկուսը սսկվում են, մնում: Առաջինը թե՝
— Ա՛ռ հազար ֆրանկ: Դե ցույց տուր, ինչ է:
— Երեք աղջիկն է, հաղթեցի, քավոր:
— Ոչ, իմ ձեռքին կա երեք թագավոր:

Խաղաթուղթն առնում,
Խառնում են, խառնում,
Հետո կիսում են,
Նորից բաժանում:
Ինքս ինձ ասում եմ՝ «Ի՞նչ գործ ունեի այս թի-
անավում»:
Խաղաթուղթն առնում,
Նայում են, նայում,
«Խաղաթուղթ» գոռում,
Եվ դեն շպրտում:
«Տանուլ տվածս ետ կբերեմ ես այս անգամ
հարկավ»,—

Ասում եմ մտքում:
Խաղացինք երկար, և այդ ընթացքում,
Կշտամբում էի ինքս ինձ շարունակ,
Իսկ երբ լուսացավ,
Դատարկություն էր գրպանիս մեջ ծակ:
Բայց միանգամից ես չհեռացա.
Խաղաթղթերը նախ ձեռքս առա,
Պատառոտեցի,
Դեն շպրտեցի
Եվ կոխկրտեցի դրանք կատաղի:

Բայց խաղատնից դուրս գալու պահին,
Սուլոց եմ լսում չորս կողմից հանկարծ,
Ոստիկաններ են, ա՜խ, տե՜ր իմ Աստված...
Մեր թաղամասի տեսուչներն էին,
Որ ուզում էին մեզ հարցաքննել...
Եվ դատարանի առաջ եմ կանգնել:
Ասում են. «Տղաս,
Մենք լավ մարդիկ ենք, սպասում ենք, որ բացատրություն տաս
Մեզ մի որպե անց:
Ես՝ ցնդած-ցնդած, ասում եմ նրանց.

— Խաղաթուղթն առնում,
Խառնում են, խառնում,
Հետո կիսում են,
Նորից բաժանում:
Եվ ես այդպես էլ «զույգից» ավելի ոչինչ չունեցա:
Խաղաթուղթն առնում,

Նայում են, նայում,
«Խաղաթուղթ» գոռում
Եվ դեն շպրտում»:
Տեսուչն ասում է. «Շատ լավ, հասկացանք,
Այստեղից ուղիղ քեզ բանտ կտանենք,
Մնացյալը ինձ չի հուզում բնավ...
Քեզ կառաջարկեմ թղթի ֆաբրիկա,
Քեզ համար այնտեղ մի հարմար գործ կա.
Թղթերը առնում,
Նայում են, նայում,
Տեսակավորում,
Եվ դարսում, դարսում:

Բանտում ես դարձա
Մի... մի պաշտոնյա,
Քանի որ մի օր,
Շատ տխուր մի օր,
Պոկեր խաղալու բախտը ունեցա...

ՍԻՐՈՒՆԱՏԵՍ ԱՂՋՆԱԿՆԵՐ ԻՄ ՀԻՆ ԹԱՂԻ

Իմ հին թաղի աղջնակներ,
Հիմա երբ ես հիշում եմ մեր
Խենթ օրերը,
Անցյալս է հորդում կրկին.
Այն ժամանակ էությունն իմ
Լցնում էին մեր սերերը:
Տարիներս անդարձ անցան,
Տարիներս թեպետ կորան,
Մի անկյուն եմ թաքուն պահել
Սրտիս խորքում,
Որտեղ ոչ ոք, ոչ մի դեպքում
Ձեր տեղը չի, չի՛ գրավել:
Աղջիկներ իմ քսանամյա ջահելության,
Արվարձանից Մենիլմոնթան...
Այդ օրերը այնքա՛ն քնքուշ
Հեռու են, բայց մո՛տ են այնքան,
Որ թողնում են համի վերհուշ
Գավրոշների շուրթին միայն.
Դա նման է համին աղի,
Որ երազներ է պարգևում,
Ու ինձ կրկին ձեզ մոտեցնում,
Աղջնակներ իմ հին թաղի:

Իմ հին թաղի աղջնակներ,
Ձեզ՝ իմ սերեր,
Խանդավառված գիրկս եմ առել
Ու ձեզանով թո՛ւնդ հարբել եմ,

Ու պահել եմ
Իմ հոգում ձեր կյանքը ջահել:
Ժամանակը անցավ, հոսեց,
Բայց չպղծեց
Իմ սրտի մեջ, հոգուս խորքում,
Հուշերը ջինջ, բյուրեղային
Արկածներով կյանքի մասին,
Որ կարող է լոկ պատահել այդ հասակում:
Աղջնակներ իմ սիրելի,
Ձնաշխարհիկ իմ օրերի,
Քաղցրաշշունջ իմ բոհեմի,
Շիվ եք տվել, ծլարձակել,
Ու չի փոխվել
Ձեր շնորհիվ մեր թաղը հին:
Հիմա այնտեղ ամեն ինչ էլ
Համահունչ է սրտիս ձայնին:
Եվ ես գիտեմ,
Մինչև հիմա սիրում եմ ձեզ,
Իմ հին թաղի աղջնակներ սիրունատես:

ԲԺՇԿԱԿԱՆ ՍԵՐ

Այն կինը, որին սիրում եմ հիմա,
Տրվել է ազնիվ, բարի արհեստի.
Նա հաճախում է դասընթացների
Եվ երազում է լոկ բժիշկ դառնալ:
Բայց գիշերը, երբ շոյում եմ, սիրում,
Նա շշնջում է կես-լուրջ, կես-կատակ.
«Գիտես ինչեր կան իմ մատների տակ,
Երբ քո մարմինն է մարմինս գրկում—

Կա ածխածին ու կալիում,
Կա լուսածին ու նատրիում,
Ցինկ կա, երկաթ, ջրածին,
Կա յոդ, պղինձ ու բրոմ,
Կա մարգանեց, կրածին,
Բորակածին, թթվածին:
Մարմինը ջուր է կիսով,
Եվ հարուստ է աղերով,
Օրգանական նյութերով,
Միս կա, նաև ոսկորներ,
Իսկ մաշկի տակ՝ մկաններ,
Դա է տարփանքը, իմ սեր»:

Ես ընկերներիս նախանձն եմ շարժում,
Որոնց կարծիքով բժիշկն անկողնում
Պետք է որոնի հանճարեղ բաներ.
Հանճարեղն այն է, որ մթան մեջ ես
Դասընթացներին ներկա եմ կարծես,
Ու ապրում եմ լոկ բժշկական սեր:

Ես ձեզ երդվում եմ (դա մեր մեջ ասած),
Տանջվում եմ սիրո իմ կոմպլեքսներով,
Քանզի զգում եմ՝ մինչև լուսաբաց,
Նա ինձ կհերձի իր այդ խոսքերով:
Եվ որպեսզի ես, հանուն մեր սիրույն,
Լռեցնեմ նրան, շուրթն եմ համբուրում,
Բայց հենց որ կրկին նա շունչ է քաշում,
Գույքացուցակն է մեջբերում իսկույն.

Կա նիկել ու վանադիում,
Մոլիբդեն ու ալյումին,
Կապար, անագ կա ու բոր
Տիտան, զառիկ ու մագնիում,
Ֆտոր, կոբալտ, սիլիցիում,
Անգամ ծծումբ ու քլոր:
Եվ ավարտում է լարդով,
Թոք-երիկամ-ստամոքսով,
Ենթաստամոքսի գեղձով,
Հարականջի գեղձերով,
Օրգաններով արտաքին,
Օրգաններով իմ ներքին,
Փայծաղով ու ուղեղով,
Վահան գեղձով ու սրտով:

Պատում է գիշերն ինձ մի զգացում.
Մարմնամարզության դասեր եմ առնում:
Տեսնում եք, որ նա խելքից պակաս է.
Ուրիշներն ունեն քնարաշունչ սեր,
Խենթուխելառ կամ գաղտնաշշունջ սեր,
Բժշկական սեր — իմ խաչն էլ սա է:

ՈՉ, ԵՍ ՈՉԻՆՉ ՉԵՄ ՄՈՌԱՑԵԼ

Երբեք չեմ կարծել, թե մենք կարող ենք նորից
հանդիպել.
Բախտը կամակոր ահա իմ գլխին խաղեր է խաղում,
Ճակատագիրս սլացքի պահին դադար է առնում,
Ոչ, ես ոչինչ չեմ մոռացել:
Ծիծաղում եմ ես, բայց և ուզում եմ միայն
քեզ նայել.
Ամիսն ու տարին դրոշմ են թողնում մարդկանց
դեմքերին,
Բայց դու չես փոխվել, լոկ սանրվածքդ՝ ըստ
երևույթին—
Ոչ, ես ոչինչ չեմ մոռացել:
Ամուսնացել եմ:
Դե լավ, թողնենք դա, չեմ ուզում բնավ խոսել
այդ մասին,
Ազատությունն իմ շատ եմ սիրում ես: Երբ բա-
ժանվեցինք,
Քեզանից հետո չեմ հանդիպել դեռ կյանքիս
ուղեկցին,
Գնանք միասին մի բաժակ խմենք, քո մասին խո-
սենք,
Հարուստ ես արդյոք և բավարարված, ինչպես ես
ապրել
Փարիզում մենակ: Ամուսնությանդ մասին ինչ
ասեմ.
Քո ծնողները շատ ջանացին մեզ լարել իրար
դեմ —
Ոչ, ես ոչինչ չեմ մոռացել:

Ո՞վ ինձ կասեր, թե ճակատագիրը հանկարծ մի օր էլ,
Որտեղից-որտեղ մեզ կկանգնեցներ իրար դեմ-դիմաց.
Ամեն ինչ չէ, որ իր հետ տանում է ժամանակն անցած—
Ոչ, ես ոչինչ չեմ մոռացել:
Հիմա չգիտեմ ինչ խոսքեր ասել, ինչից սկսել,
Հուշերը մեկիկ ելնում են, հորդում, միտքս պաշարում,
Եվ իր պարտության խորը անդունդից անցյալս է հառնում —
Ոչ, ես ոչինչ չեմ մոռացել:
Ես չեմ մոռացել:
Այն տարիքում, երբ իմ միակ զենքը միայն սիրտս էր,
Հայրդ, որ ուրիշ, ուրիշ մեկին էր տենչում քեզ համար,
Մեր սերը փշրեց ու մեր աչքերից քամեց արցունքներ,
Ու փնտրեց-գտավ քեզ մի փեսացու իր դիրքին հարմար:
Դու բանտված էիր, ցանկանում էի քեզ կրկին տեսնել,
Ես անպատասխան բազում նամակներ քեզ ուղարկեցի,
Շատ տառապեցի, մինչև որ քեզնից հրաժարվեցի —
Ոչ, ես ոչինչ չեմ մոռացել:

Ինչ եղանակ էլ ուզում է լիներ, իրար ենք սիրել,
Սիրո ժամանակ մեզ չեն վախեցրել աշուն թե ձմեռ,
Գարնանը միշտ էլ մեր քսան տարին կարձագանքի դեռ —
Ոչ, ես ոչինչ չեմ մոռացել:
Ժամանակն անցավ, սրճարանն արդեն ուզում են փակել,
Եկ քեզ ուղեկցեմ փողոցներով այս դատարկ, ամայի,
Այն օրերի պես, երբ տանդ շեմին քեզ գրկում էի —
Ոչ, ես ոչինչ չեմ մոռացել:
Շատ ուրախ եմ, որ հաճույք զգացի քո ներկայությամբ,
Ուրիշ եմ հիմա, կարծես թե մի քիչ խենթ եմ դարձել ես,
Մարդը հաճախ է ուզում լողանալ իր ջահելությամբ,
Թե համաձայն ես՝ կցանկանայի, չեմ ստիպում քեզ,
Նորից հանդիպել, եթե, իհարկե, դու չես առարկում,
Եթե ազատ ես, ունես ցանկություն և շատ ես ուզում,
Եթե դու ոչինչ դեռ չես մոռացել,
Ինչպես ես, ես, որ ոչինչ չեմ մոռացել:

ՄԵՌՆԵԼ ՍԻՐԵԼՈՎ

Կյանքիս սանդուղքը ողորկ է, անձև,
Ես ձգտում եմ վեր, ընկնում եմ ներքև.
Դեպի իմ բախտը դանդաղ սահելով՝
Մեռնել սիրելով:
Ինձ կշտամբում են մարդիկ միաձայն,
Եվ մի փրկություն ես ունեմ միայն.
Կամուրջներն այրել և հանգիստ խղճով
Մեռնել սիրելով,
Մեռնել սիրելով:
Գիշերվա գիրկը կամովին նետվել,
Եվ կյանքի գնով սիրուն հատուցել,
Մեղանչել մարմնի, ոչ թե մտքի դեմ,
Թողնել, որ մարդիկ տապակվեն իրենց օրվա հոգսերով,
Չարամիտները՝ իրենց փուչ ու սին գաղափարներով,
Մեռնել սիրելով:

Մեռնել սիրելով,
Մեռնել սիրելով,
Մեռնել սիրելով:

Քանզի մեր սերը անզոր է ապրել,
Ուրեմն պետք է սիրո մատյանը վերստին փակել,
Եվ քանի դեռ այն չենք այրել ցավով՝
Մեռնել սիրելով:
Հպարտ կեցվածքով թողնել-հեռանալ,

Ու պարտությունից հաղթելով դուրս գալ,
Եվ ամեն հաշվարկ իրար խառնելով՝
Մեռնել սիրելով,
Մեռնել սիրելով:
Ինչ գնով լինի՝ լքիր ամեն ինչ, որ տանես միայն
Այն ամենը, ինչ մեզ էր պատկանում,
Այն ամենը, ինչ քեզ էր պատկանում:
Դու դեռ գարուն ես, ես խոր աշուն եմ,
Դու տենչում ես լոկ, իսկ ես տրվում եմ,
Ինձ համար պարզ է, որ պիտի գնամ այս ճա-
նապարհով՝
Մեռնել սիրելով:

Մեռնել սիրելով,
Մեռնել սիրելով,
Մեռնել սիրելով:

ՊԻՏԻ ԿԱՐԵՆԱԼ

Պիտի կարենալ ժպտալ վերստին,
Երբ քեզ լքում է թանկագինը քո,
Ու մնում է լոկ ունայնություն սին,
Այս կյանքում տխուր, դաժանաբարո:

Պիտի կարենալ, ինչ գնով լինի,
Պատիվը պահել, տղամարդ մնալ,
Եվ ինչքան ծանր ու դժվար լինի,
Առանց շրջվելու թողնել-հեռանալ:

Բախտի դեմ, որ մեզ ուզում՝է սանձել,
Ու երջանկության առաջ կորուսյալ,
Պիտի կարենալ արցունքը զսպել,
Սակայն ես, իմ սիրտ, լալիս եմ դարձյալ:

Պիտի կարենալ սեղանը լքել,
Երբ գիտես, որ էլ սեր չեն մատուցի,
Ու խղճալի տեսք երբեք չընդունել,
Վեր կենալ-գնալ առանց աղմուկի:

Պիտի կարենալ կսկիծը դաժան
Թաքցնել օրվա դիմակի ներքո,
Եվ սանձահարել ճիչերը ցասման —
Վերջին բառերը հեռացող սիրո:

Սառնասիրտ լինել պիտի կարենալ,
Եվ խաղաղեցնել նվաղած սիրտը,
Պիտի կարենալ անվրդով մնալ,
Բայց ես քեզ շատ եմ սիրում,
Բայց ես չեմ կարողանում,
Պիտի կարենալ, բայց ես
Չեմ կարողանում:

ՍԻՐՈ ՄԻ ԿՅԱՆՔ

Սիրո մեն-մի կյանք, որի համար մենք տվեցինք
երդում,
Որ ժամանակը անդամահատեց օր-օրի վրա,
Օրի-օրի վրա,
Մտքերս է խոցում:

Սիրո այդքան բառ, որ մեր սրտերում,
Խեղդվել են արդեն հառաչանքի մեջ՝ համբույրի
գոտում,
Համր են մնացել կանչերին բոլոր,
Բայց մինչև հիմա չեն փոխել ոչինչ:

Ցտեսությունը
Քանի որ բնավ
Չի կարող լինել
Մնացեք բարյավ,
Հույսից խելագար՝
Դիմում եմ Աստծուն,
Որպեսզի դարձյալ,
Դարձյալ քեզ տեսնեմ,
Հետդ զրուցեմ,
Երդում տամ կրկին:

Սիրո մեն-մի կյանք
Լեցուն ծիծաղով,
Մեն-մի ճանապարհ —
Մեր գեհենները

Պատառոտելով
Գնում է հեռու,
Ավելի հեռու,
Քան գիշերը այս,
Եվ գիշերները:

Սիրո մեն-մի կյանք, որի համար մենք տվեցինք
երդում,
Որ ժամանակը անդամահատեց օր-օրի վրա,
Օր-օրի վրա
Մտքերս է խոցում:

Սիրո այդքան բառ, որ մեր սրտերն են ճչացել
արդեն
Դողդոջ բառերն այդ, արցունքներն հեղված,
Ամենավերջին հանգրվաններն են
Խեղված խինդերի:

Այգաբացներ կան
Ծաղկուն ու փթթուն
Գորշ մթնշաղում.
Ամեն բան գալիս,
Անցնում է, գնում,
Եվ հուրն է միայն
Առհավետ ապրում
Անվախճան ամռան,
Հարատև ամռան
Բարկ ու տաք գրկում:

Սիրո մեն-մի կյանք
Սիրելու համար
Իրար կուրորեն,
Եվ առնվազն՝
Մինչ շունչը վերջին:
Սեր իմ, քեզ, իմ սեր
Սիրեի կրկին,
Սիրեի ընդմիշտ:

ՄԵՆՔ ԿԱՐԹՆԱՆԱՆՔ ԵՐԿՈՒՍՈՎ

Մենք կարթնանանք երկուսով
Մի արևշող առավոտ,
Արեգակի շողքի տակ,
Որ ապրենք մի նոր կյանքով,
Մենք կարթնանանք երկուսով:
Մենք կարթնանանք երկուսով,
Բարև կտանք հայացքով
Բարի-բարի աշխարհին,
Բարի-բարի խոհերով,
Մենք կարթնանանք երկուսով:
Մենք կարթնանանք երկուսով,
Խենթուխելառ տակավին,
Որ դառնանք մեն մի մարմին:
Մենք կարթնանանք երկուսով,
Ինչպես երկու նորածին,
Որ հենց հիմա ծնվեցին:
Մենք կարթնանանք երկուսով,
Մերկ՝ մեր անցած օրերով,
Մաքուր՝ մեր խենթ օրերով,
Երբ անծանոթ ենք եղել:
Մենք կարթնանանք երկուսով,
Արշալույսին մեր հույսի,
Երբ գիշերը ավարտվի,
Որ մեր կյանքն էր քողարկում:
Մենք կարթնանանք երկուսով,
Ջահելացած սրտերով,
Իրար հյուսված ձեռքերով,
Վաղն առավոտ կարթնանանք:

ԲԱՅՑ ԴԱ ԵՐԵԿ ԷՐ

Երկուսով էինք,
Ջինջ եղանակ էր, աշխարհը՝ չքնաղ,
Երջանիկ էինք,
Գարուններ կային խոր ձմռանն անգամ,
Աչքերիդ խորքում,
Եվ քո անկողնում, երկինքն էր լազուր:
Երեկը հույս էր,
Շիթ-շիթ հոսում էր սպիտակ գինին,
Մեր սեղաններին:
Ընկերներ կային մեզ նման խենթուկ,
Որ գալիս էին մեզ տեսակցելու,
Սև կամ ճերմակ հաց մեզ հետ կիսելու,
Բայց դա երեկ էր:
Հիշում եմ, հիշում,
Դա երեկ էր,
Գեղեցիկ էիր,
Ես ջահել էի, գուցե մի քիչ խենթ,
Եվ ինձ թվում էր գեղեցիկ եմ ես:
Օրը ամպել է,
Արևի շողը աչքերս է ծակում
Ձմռանը արդեն մրսում եմ, մրսում,
Հիմա ես մի քիչ պակաս եմ խմում,
Շատախոսում եմ մի քիչ ես հիմա,
Չնայած դա ինձ բնավ չի սազում,
Ու երբ քնում եմ, երազում եմ քեզ,
Քեզ երազելով՝ երազում եմ ես
Երեկվա մասին:

ԻՄ ՍՐՏԱՀՈՒՅԶ ՍԵՐ

Դու ապրում ես մունջ լռությամբ, որ ոչ սկիզբ, ոչ վերջ ունի,
Ես թարգմանն եմ քո հայացքի, ես ծիծաղն եմ քո ընթերցում,
Փոխանցում եմ այն բառերը, որ ձեռքերդ են ասել ուզում
Օտարոտի քո խոսվածքով, որը ասես բալետ լինի,

Մի սրտառուչ, հուզիչ բալետ, որը ինքդ ես բեմադրել,
Հրապուրիչ շարժումներով, որոնք երբեք չեն կրկնվում,
Ու մատներիդ ծայրերով դու, երբ ասել ես «քեզ եմ սիրում»,
Երբեմն ինձ թվացել է, թե ես քո մեղմ ձայնն եմ լսել,

Իմ սեր, իմ սեր, իմ սեր, իմ սեր,
Իմ սեր, իմ սրտահույզ սեր,
Իմ հիասքանչ սեր,
Իմ ցավագին սեր:

Քանզի քեզ հետ զրուցելու չեմ ունեցել ոչ մի հնար,
Քո կողքին միշտ կարծել եմ, թե գտնվում եմ օտար երկրում,
Քեզ ասելու խոսք չեմ ճարել անգամ ոչ մի բառարանում,

Ու հեռքերի լեզուն եմ ես լոկ սովորել ինքս
ինձ համար:

Երբ տեսնում ես իմ ճիգերը, խնդմնդում ես դու
քեզ նման,
Որովհետև անփորձ եմ ես ու հաճախ եմ խու-
սանավում,
Բնավ երբեք չեմ փայլել ես ուղղագրության աս-
պարեզում,
Բայց ասելիք քեզ շատ ունեմ ու սիրում եմ քեզ
անսահման,

Իմ սեր, իմ սեր, իմ սեր, իմ սեր,
Իմ սեր, իմ սրտահույզ սեր,
Իմ հիասքանչ սեր,
Իմ գավագին սեր:

ՏԱՐԵՔ ԻՆՁ, ՏԱՐԵՔ

Նավահանգստում, որտեղ ձանձրույթից,
Ծանր բեռներից մեջքս է կորանում,
Մրգերով բեռնված նավեր են գալիս
Ու հանգրվանում:
Նրանք գալիս են ու երկրներից
Հեռու-հեռավոր,
Բերում են մտքեր թափառաշրջիկ
Ու արտասովոր:
Բերում են մտքեր խաբուսապատկեր,
Լազուր երկնքի
Ցոլքերի մասին:
Ու բարկ բուրմունքն է իմ շուրջը ծորում
Այն երկրների օտար, անծանոթ,
Եվ հավերժական ամառների շոգ,
Ուր, համարյա մերկ, մարդիկ են ապրում
Ծովի տաք ափին:
Ես, որ իմ կյանքում
Երկինքն եմ տեսել Հյուսիսի միայն,
Այս գորշությունից փրկվել եմ ուզում,
Ուզում եմ փոխել իմ վարքը ունայն:

Տարեք ինձ, տարեք աշխարհի ծայրը,
Տարեք ինձ, տարեք հրաշք երկրներ,
Ինձ թվում է, թե թշվառությունը
Արևի ներքո թեթև կլիներ:

Բարերում, երբ մենք արևամուտին,
Նավազների հետ սեղան նստելով,
Ասում-խոսում ենք աղջնակների ու սիրո մասին՝
Գինի խմելով,
Ես ցնդվում եմ,
Ու մտքիս թևով
Հանկարծ թռչում եմ ու հայտնվում եմ
Զարմանահրաշ ամառվա գրկում,
Պառկում ավազին,
Ու տեսնում եմ, թե ձեռքերը պարզած,
Ինչպես է սերը խելագարի պես
Վազում իմ դիմաց,
Ու փարվում եմ ես
Իմ երազանքին:
Իսկ այն ժամին, երբ բարը փակում են,
Ու նավազները
Գնում-նստում են իրենց նավերը,
Ես երազում եմ մինչև լուսաբաց՝
Նավահանգստում մեն-մենակ կանգնած:

Տարեք ինձ, տարեք աշխարհի ծայրը,
Տարեք ինձ, տարեք հրաշք երկրներ,
Ինձ թվում է, թե թշվառությունը
Արևի ներքո թեթև կլիներ:

Մի գեղեցիկ օր,
Որպեսզի մեկնեմ,
Մի խարխուլ նավի
Նավահնոցում

Անգամ կաշխատեմ,
Ճամփա կընկնեմ ու կգնամ դեպի
Իմ տղայական երազանքները
Ու կղզիները հեռու, մեկուսի:
Որտեղ ամեն ինչ կյանքի համեմատ
Ոչինչ է, զրո,
Ուր աղջիկները, թույլ ու վեհերոտ,
Գերում են սրտեր,
Նրանք հյուսում են, ինձ ասել են, որ
Ծաղկե մանյակներ՝
Մարդկանց արբեցնող,
Մարդկանց խենթացնող:
Մի օր կփախչեմ՝ ես իմ անցյալը նավում թողնելով,
Եվ ես խղճի խայթ չեմ զգա բնավ,
Առանց ճամպրուկի, լիաթոք սրտով,
Ես կերգեմ զիլ, զրնգուն ձայնով.

Տարեք ինձ, տարեք աշխարհի ծայրը,
Տարեք ինձ, տարեք հրաշք երկրներ,
Ինձ թվում է, թե թշվառությունը
Արևի ներքո թեթև կլիներ:

ՄԵՆԱԿ ԵՄ ԱՀԱ

Մենակ եմ ահա, տանը թե դրսում, մենա՛կ եմ հիմա.
Օրերից մի օր դա պիտի լիներ պարտադիր կերպով,
Քանզի այդպես էլ մեր միջև բացված վիհի վրայով
Ես կամուրջ գցել չկարողացա:

Մենակ եմ ահա, այդպես էր գրված ճակատիս գու-
ցե,
Ինձ հետ դժվար էր, դյուրին չէր ապրել,
Հենց ամուսնացա, ձգտեցի ազատ, ինքնիշխան
լինել,
Կինս էլ թողեց, գնաց, իհարկե:

Ապուշ վիճակի մեջ եմ ընկել ու
Մեխվել սենյակիս ուղիղ կենտրոնում,
Ես մոլորվե՛լ եմ, տեղս չե՛մ գտնում
Երեխայի պես, որը ուր որ է լաց է լինելու:

Մենակ եմ հիմա. մենակությանը ձգտեցի իզուր
Եվ այս օրն ընկա բնավորությամբ իմ անտանելի:
Ինքս ինձ հիմա մի հարց եմ տալիս.
Ախր ինչ անեմ, ես ո՞ւր գնամ, ո՞ւր:

Ուր էլ որ նայեմ՝ այս չորս պատի մեջ
Բազում հուշեր կան քեզնից մնացած,
Որոնք, կարծես թե, խոսքը մեկ արած,
Խոցո՛ւմ են սիրտս, խոցո՛ւմ են անվերջ:

Մենակ եմ ահա, ինքս իմ քեֆին,
Երջանկությունը ի վերուստ տրված շնորհ է մարդուն,
Անտեսելով դա՝ մենք այն դարձնում ենք դատարկ մի հնչյուն,
Հետո էլ ցավում, զղջում մոլեգին:

Ես թերություններ, իհարկե, ունեմ, անսխալական ոչ մի մարդ չկա,
Սակայն միշտ չէ, որ մարդը կարող է ինքն իրեն փոխել,
Ախր, հաճախ մենք անում ենք քայլեր ապուշին վայել,
Եվ իզուր ենք մեզ երևակայում, արդյունքը դրա —

Մենակ եմ ահա: Դրա համար ես ամեն ինչ արի,
Ես գիտեմ, որ նա այլևս երբեք չի վերադառնա,
Քանի որ սիրտս, սիրուց վիրավոր, պայթում է հիմա,
Վստահ եմ, որ ինձ լոկ տառապանքը կյանքում կուղեկցի:

Ես թերություններ, իհարկե, ունեմ, անսխալական ոչ մի մարդ չկա,
Սակայն միշտ չէ, որ մարդը կարող է ինքն իրեն փոխել,
Մենակ եմ ահա,
Մենակ եմ, մենակ:

ԹԱՓԱՌԱՇՐՋԻԿ ԴԵՐԱՍԱՆԸ

Աստվածաշնչի դերասան եմ ես թափառաշրջիկ,
Բեմի համար եմ ես միայն ծնվել,
Տվեք ինձ հարթակ անշուք ու խղճուկ,
Եվ ես կարող եմ ինձ գերազանցել,
Աստվածաշնչի դերասան եմ ես թափառաշրջիկ,
Դա իմ արյունն է, այդպիսին եմ ես:

Ինձ մի բեմ տվեք և հանդիսատես,
Ու տաղանդավոր,
Ու տաղանդավոր մարդ կդառնամ ես:
Մի սենյակի մեջ երեք պատերով,
Դահլիճին նայող բաց որովայնով,
Կանգնել եմ ասես մթին ու խավար անդունդի
եզրին —
Ահը սրտումս, ներվերի կծիկ —
Ես խաղալու եմ կատակերգություն:
Այրվելով իմ մեջ հորդող կրակից,
Խոսում եմ, լալիս, կանչում եմ խնդուն,
Ու վերապրում եմ իմ դերը նորից:
Մի կշտամբեք ինձ, թե չեք հասկացել դուք իմ
հոգին խոր,
Ուրիշ ցեղից եմ,
Թափառաշրջիկ դերասան եմ ես աստվածաշնորհ,
Բեմում է միայն, որ ես ազատ եմ:

Այնժամ է սակայն իմ կյանքն սկսվում,
Երբ բեմազարդն եմ հանկարծ ես տեսնում,

Ու երեք անգամ զանգն են հնչեցնում,
Որից հետո ես, ինձանից անկախ,
Ապրում եմ թե՛ խինդ, թե՛ երկյուղ, թե՛ վախ,
Երբ վարագույրն է բարձրանում մեկեն,
Իմ սիրտը այնպես խփում է ուժգին,
Որ մահն է հառնում աչքերիս առաջ,
Ու մոռանում եմ, չեմ տեսնում ոչինչ,
Սակայն գնում եմ պահին ընդառաջ,
Ես իմ առաջին քայլն եմ կատարում,
Որպեսզի փարվե՛մ իմ երազանքին,
Իմ երազանքին:

Աստվածաշնո՛րհ դերասան եմ ես թափառաշրջիկ,
Ճակատագիրս արդեն ընտրել եմ.
Դուք ինձ մի քանի լուսարձակ տվեք և տասը ռեպլիկ,
Այնժամ կտեսնեք, թե ինչե՛ր կանեմ:
Աստվածաշնորհ դերասան եմ ես թափառաշրջիկ,
Իմ կյանքն էլ դա է:
Մի թատրոն տվեք և ինձ արժանի դերակատարում,
Ու տաղանդավոր,
Ու տաղանդավոր մարդ կդառնամ ես:
Հմտորեն քսած գրիմի տակից
Դեմքս է երևում՝ զուսպ ու անխռով,
Եվ ամբարտավա՛ն, և անկարեկի՛ց,
Արտասանում եմ անհանգ կամ հանգով,
Ձայնիս մեջ քնքշանք, զայրույթ եմ դնում,
Ելնելով դերից, իմ ամպլուայից՝
Ես տառապում եմ, ապրում կամ մեռնում,

Ստում եմ այնքան, մինչև որ ինքս էլ հավատամ
ստիս:
Ախր, հասկացեք, ես չեմ պարծենում,
Ես իմ արժեքը լավ եմ գիտակցում,
Եթե ձեր աչքում ես, հավանաբար,
Թափառաշրջիկ մի դերասան եմ աստվածաշնորհ,
Հպարտ եմ ընդմիշտ հենց դրա համար:

ԻՄ ՀՈԳՍԵՐԸ

Շատ տարիներ,
Զօր ու գիշեր,
Ես լուռումունջ
Ու անտրտունջ
Աշխատել եմ,
Որ նվաճեմ
Մեծ բարձունքներ,
Որ ձեռք բերեմ
Հաղթանակներ,
Բայց շատ հաճախ,
Այդ խելահեղ վազքում, ավա՛ղ,
Մոռացել եմ
ընկերներիս,
Իմ սերերը,
Իմ հոգսերը:

Համառ կամքով,
Լի իղձերով,
Զո՛ւր փութացի
Ու վազեցի
Դեպի երկինք,
Դեպի ցնորք,
Դեպի պատրանք,
Հիմարաբար,—
Ինձ չեմ ներում դրա համար,—
Անտեսելով
Ընկերներիս,
Իմ սերերը,
Իմ հոգսերը:

Ընկերներով ուտում էինք նույն ափսեից,
Մեր սերերը սիրում էին մարմնակործան,
Մեր հոգսերը բխում էին նույն հասակից,
Երբ դրամը զարդարում էր մեր օրերը — սոսկալի
բան:

Ես ցանկացա
Դառնալ հպարտ,
Հպարտ դարձա,
Չեմ թաքցնում՝
Բոլորից էլ
Լավ եմ ապրել,
Բայց կա մի... բայց.
Ունեցածս —
Չունեցածս
Ետ կտայի,—
Համաձայն եմ,—
Լոկ գտնեի
Ընկերներիս,
Իմ սերերը,
Իմ հոգսերը:

Հիմա ունեմ
Ես լայն կապեր՝
Մեծատոհմիկ,
Մեդալակիր,
Եվ ազդեցիկ
Հաստափորներ —
Շատ լավ մարդիկ:

Այդ լուրջ մարդկանց
Կողքին, սակայն,
Ցավում եմ, որ կորցրել եմ
Ընկերներիս,
Իմ սերերը,
Իմ հոգսերը:

Ընկերներս ապրում էին անհոգ կյանքով,
Իմ սերերը հրա՛յրք էին, կրա՛կ անմար,
Իմ հոգսերը, երբ նայում եմ ես այսօրվա տեսանկյունով,
Անլուրջ էին, բայց լավ կյանքը դա էր, որ կար:

Ձեռառնոցներ,
Քաշկռտուքներ,
Խենթություններ,
Գինարբուքներ,
Մոլեխաղեր
Եվ կոնյակներ —
Ինչ էլ անեմ,
Ես դա գիտեմ,
Չեմ մոռանա բնավ երբեք
Ընկերներիս,
Իմ սերերը,
Իմ հոգսերը:

ՑԼԱՄԱՐՏԻԿԸ

Դու հանգչում ես աչքերդ փակ,
Ողորմելի, դժգույն,
Ու մի ճերմակ սավան է լոկ
Մեղկ մարմինդ ծածկում:
Ծիրանավառ հագուստը քո
Անգթորեն մի կողմ նետվել,
Անարգվում է փոշեթաթախ,
Եվ արյունոտ
Բծերով է ծածկվել:
Բայց ցլամարտը
Դեռ չի ավարտվել,
Չնայած որ դու
Շունչդ ես փչում.
Էհ, ավելի վատ
Պարտվողի համար —
Նրա ճակատին այդպես էր գրված:
Անունն հաղթողի
Ամբոխի շրթին
Որպես անհուն ցավ մարմինդ է խոցում,
Մարմինդ խոցո՛ւմ:

Կուրացուցիչ ու բորբ արևի տակ
Խենթ ցլամարտեր դու էլ չես տեսնի,
Երբեք չես տեսնի աթոռին թառած
Այն աղջիկներին, որ քեզ են կանչում,
Քե՛զ՝ իբրև Աստծո:
Էլ չես ունենա դու հպարտությամբ,

Վախով շաղախված զգացումը այն,
Որ ապրել ես այս մրցահարթակում,
Երբ քո հաղթական մուտքն էր շեփորում
Մի խելակորույս,
Մի խելակորույս պարի եղանակ:

Ցուլը հաղթեց քո
Կեցվածքը հպարտ,
Նա քո անունը արատավորեց,
Կյանքդ կործանեց:
Սեգ քայլվածքը քո
Եվ պահվածքդ խենթ
Փոշու մեջ ընկան —
Ավազը շիկնեց:
Եղունգներդ ասես
Մեխել ես փայտին
Քո մահճակալի,
Եվ լքված, մենակ,
Դեմքին ես նայում
Մոտեցող մահվան.
Նա պոռնիկի պես շուրթերդ է լիզում,
Որ գողանա քո ապրած օրերը,
Որ տիրանա քո մարմնին,
Մարմնին:

Չես տեսնի երբեք դու արևավառ քո Անդալուզիան,
Երբ սառը հողը նետեն քեզ վրա,
Չես տեսնի երբեք նրա կրակոտ պարուհիներին,
Անդալուզական կրքոտ մեղեդին չես լսի երբեք:

Երբ կուռքն է մեռնում, մի ուրիշ կուռք է
Հաջորդում նրան...
Դարձար հանգուցյալ
Եվ վաճառեցիր ճակատագիրդ,
Քանի որ կյանքը լոկ մի պոռնիկ է,
Որ ուրիշին է տրվում այն պահին,
Երբ մերն ենք կարծում,
Եվ մեզ մնում է համարյա ոչինչ,
Ոչինչ,
Ոչինչ,
Ոչինչ:

ՈՒԶՈՒՄ ԵՄ ՀՐԱԺԵՇՏ ՏԱԼ ՔԵԶ

Քանի որ ուրիշ ձեռքեր են եկել փոխարինելու
Լիրբ մարմնիդ վրա վազող մատներիս,
Քանի որ ուրիշ սիրտ պատասխանեց քո սրտի
կանչին,
Եվ քո հրճվանքը հյուսվում է արդեն ուրիշի
խինդին,—
Ուզում եմ հրաժեշտ տալ քեզ:

Քանզի կոնքերդ ծառս են լինում մի նոր գրկի մեջ,
Եվ մաշկդ է դողում մի նոր շնչի տակ,
Քանզի ուրիշը կարող է քեզնից հառաչանք պոկել
Եվ քեզ ստիպել տնքալ ու գոռալ,—
Ուզում եմ հրաժեշտ տալ քեզ:

Քանզի քո մահճում ժխտում ես արդեն գոյությունը
իմ,
Եվ մոռանում ես դու իմ անունը, որպեսզի միայն
իրենը ճչաս,
Եվ նրա կյանքը համտես անելով հաճույք ստանաս՝
Նրան ասելով այնպիսի բառեր, որոնք կարծել եմ
լոկ իմն են եղել,
Ես՝ խոցված սրտով,
Քանզի սիրում եմ,
Ուզում եմ հրաժեշտ տալ քեզ:

ՍԵՐ, ԱՍՏՎԱ՛Ծ ԻՄ, ՍԵՐ

Սեր, Աստվա՛ծ իմ, սեր, հաղթանակ տանող կամ անփառունակ,
Սեր՝ «քունս տարավ», սեր՝ «ես գնացի»,
Սեր՝ որ տեսնում է, որովհայն ունի,
Սեր անժամանակ, կամքին հակառակ:

Սեր, Աստվա՛ծ իմ, սեր, որ մատուցում են մեր ծնողները—
Ջառամյալ մեկին, որից պրծնելու հույս ենք փայ-փայում,
Սեր մինչ գերեզման, հանուն այն ոսկու, որ նա է պահում.
Ընդամենը մի մահամերձի՞ են նվիրաբերվում ջահել օրերը:

Սիրում են մարդկանց վերին խավերի, հասարակ մարդկանց,
Սիրում են նաև մի պոռնկուհու կամ մանկամիտի,
Միշտ խնամելով ճտքակոշիկը՝ սիրում են նաև «կազակավարի»,
Սիրում են «ժամը հինգից մինչ յոթը», սիրում «հոր նման»:

Սեր, Աստվա՛ծ իմ, սեր, որ խենթացնում է, հզոր դարձնում,
Սեր ծղոտի կամ խոտերի վրա, սուլթանահու հետ՝
Գեղջկուհու նման փեշը քաշած վեր,

Շուրթերդ է լիզում, հետո իր մարմնով մարմինդ
է տենչում:

Սեր, Աստվա՛ծ իմ, սեր, որ վերածվում է գայթակղու-
թյան,
Յուրաքանչյուր ոք իր ձևով է միշտ սերը հասկանում,
Սերը սրտեր է ափերից հանում, սիրուց շատերն են
խելքը թռցնում,
Անկողնու մեջ է սերը սողոսկում, խառնվում ամեն
մի խոսակցության:

Սեր, Աստվա՛ծ իմ, սեր, որ այցելում է պարապ
ժամանակ,
Սեր սրբանվեր և խաղալիք սեր, մի սեր էլ՝ երկու
դռան արանքում,
Սեր, որ շատերին ժլատ է դարձնում, որ ձեռք
է բերվում
Իրերի փայլով, երբեմն էլ նույնիսկ դատարկ
ձեռքերով:

Սեր զգեստավոր, սեր՝ կեղծ հետույքով, կրծքերով
շինծու,
Ծաղկեպսակ սեր, որ մորն է կանչում շուրթերով
պապակ,
Սեր՝ «եկ քեզ սիրե՛մ ցանկապատի տակ»,
Սեր՝ «կամա՛ց գոռա, հարևաններին մի մոռացիր դու»:

Սեր, Աստվա՛ծ իմ, սեր, միշտ բոլորն էլ քեզ
գալիս են դարձի

Մարդասպանի պես, որը գնում է հանցանքի վայրը,
Բզկտված սրտով, բայցև երջանիկ, որ դեռ կա զոհը,
Զի առանց սիրո և ոչ մի բարձունք մենք
չենք նվաճի:

Սեր, Աստվա՛ծ իմ, սեր, երջանկություն է սիրելը
նույնպես,
Եվ սպասում է, ուրախություն է ու տառապանք
է միաժամանակ,
Եվ բացվող դուռ է, սավառնող էակ,
Եվ հույս է նաև. ծաղկում է այնտեղ, որտեղ կաս-
կածը մեռնում է կարծես:

Սեր, Աստվա՛ծ իմ, սեր, հոգի է սերը լույսով
ողողված,
Եվ մատներ է, որ սեղմված են իրար, և աչքեր է, որ
փնտրում են միմյանց,
Եվ բառ-շշունջ է, քնքշանք է անանց,
Հավերժ պարգևն է քո սրտի տված:

Սերը փակ փեղկ է, երկու ստվեր է գիշերվա գրկում,
Որ մերկացել են անամոթաբար ու չեն կշտանում
«քեզ սիրում եմ»-ով,
Եվ միշտ անփոփոխ խաղեր են կրկին հորինում
հերթով,
Հաճույք են ցանում, կյանք են ընձյուղում:

Սեր, Աստվա՛ծ իմ, սեր, դու հենց այն հույսն ես, թե
գուցե մի օր

Մի էակ կգա լուսապսակով ու խորհրդավոր,
Եվ մեզ կտանի աշխարհի ծայրը հեռու-հեռավոր,
Որտեղ մենք կապրենք լոկ հանուն սիրո՛, լոկ հա-
նուն սիրո՛:

ԼԻՆԵԼ

Լինել,
Ծնունդս կրկին վերապրել
Ճերմակ-ճերմակ այգաբացում,
Արնակարմիր լուսնի ներքո,
Մեռնող ձմռան հալոցքներում:

Լինել,
Լռությունից դուրս գալ հանկարծ,
Եվ իմ սրտի եղյամների
Ցոլքը տեսնել արևի տակ —
Դա նշան է, որ գարուն է,
Հրաշք գարուն:

Լինել,
Սերմնացու և պտուղ լինել
Հողում պապակ ու անբերրի,
Ծաղկել այդպես աքսորական,
Ապրիլ ամսին պայծառափայլ
Ծառի նման:

Լինել,
Ու սովորել լավ ճանաչել էությունս,
Լինել զգոն, բաց աչքերով,
Լոկ մարմնացյալ էակ լինել,
Սիրել մինչև շունչը վերջին,
Գուցե նույնիսկ էլ ավելի,
Լինել մարմնից անջատ հոգի,

Սիրել մինչև շունչը վերջին,
Եվ դեռ նույնիսկ էլ ավելի:

Լինել,
Զայնը լինել գլխիս եկած փորձանքների,
Խոսքեր լինել նոր ու չասված,
Լինել բոլոր արատներից մաքրագործված,
Եվ բառերի ուղին ընտրել:

Լինել,
Խույս տալ դավից, խարդավանքից,
Եվ վայրերից հասարակաց,
Մարել բազում հրաբուխներ,
Հեծնել, սանձել ժամանակս:

Լինել,
Շարժումը այն, որ տանում է
Դեպ ապագան իմաստավոր,
Պարզ, հասարակ ծիսակարգով
Վերադարձը կերտել
Սիրո:

Լինել,
Մեռնել՝
Որ հարկ եղած ձևով ծնվեն, լույս աշխարհ գան
Հին օրերի ամեն մի սուտ ու հերյուրանք,
Սովորական մահկանացու լինել միայն,
Սիրել մինչև շունչը վերջին

Գուցե նույնիսկ էլ ավելի,
Լինել մարմնից անջատ հոգի,
Սիրել մինչև շունչը վերջին
Եվ դեռ նույնիսկ էլ ավելի:

Ա՛Խ, ՍԱԿԱՅՆ

Գիտեմ, անպայման մի գեղեցիկ օր քնից կարթնանամ,
Ես բոլորովին ուրիշ մարդ դարձած,
Սիրտս մեր սիրուց ազատագրված:
Ախ, սակայն, սակայն,
Առանց զղջումի ու խղճի խայթի ես կհեռանամ,
Կգնամ ուղիղ, առանց ետդարձի ակնկալության,
Մարդկանցից հեռու ու սիրուց հեռու ես կմոռանամ
Եվ մարմինը քո,
Եվ ձեռքերը քո,
Եվ ձայնդ,
Իմ սեր:

Ախ, սակայն, սակայն,
Լոկ քեզ եմ սիրում,
Ախ, սակայն, սակայն,
Լոկ քեզ եմ սիրում,
Ախ, սակայն, սակայն,
Լոկ քեզ եմ սիրում,
Ախ, սակայն...

Առանց արցունքի գեթ մի կաթիլի և առանց ճիչի,
Մաշկս խոշտանգող գաղտնի կապերը կքանդեմ բոլոր,
Ու ինձ կազատեմ, որ քեզնից հեռու ունենամ ան-դորր,
Ախ, սակայն, սակայն,
Կքայլեմ դեպի ուրիշ երկինքներ, օտար երկրներ,

Եվ մոռանալով քո սառնությունը դաժանաբարո,
Երջանկությանը ես կնվիրեմ անհագուրդ սիրով
Ցերեկ ու գիշեր,
Եվ կյանքն
Իմ սրտի:

Ախ, սակայն, սակայն,
Լոկ քեզ եմ սիրում,
Ախ, սակայն, սակայն,
Լոկ քեզ եմ սիրում,
Ախ, սակայն, սակայն,
Լոկ քեզ եմ սիրում,
Ախ, սակայն...

Լավ կլինի, որ վերստին դառնամ ողջամիտ, խոհեմ,
Ուրախ ապրելու իմ մղումները ես վերագտնեմ,
Որ մեկնեմ ընդմիշտ, որ քեզնից խույս տամ:
Ախ, սակայն, սակայն,
Ուրիշի գրկում, երբ ես մոռանամ անունդ անգամ,
Երբ կարողանամ ապագայի շուրջ մտորել դարձյալ,
Աչքիս կհառնես իբրև հեռավոր մի հուշ կորուսյալ,
Երբ ցավ ու հոգսս,
Երբ արցունքներս
Ունենան վախճան:

Ախ, սակայն, սակայն,
Լոկ քեզ եմ սիրում,
Ախ, սակայն, սակայն,

Լոկ քեզ եմ սիրում,
Ախ, սակայն, սակայն,
Լոկ քեզ եմ սիրում,
Ախ, սակայն...

ՉԱՓԱԶԱՆՑՈՒՄ ԵՍ

Չափազանցում ես,
Լուն ուղտ ես շինում,
Ինձ չի հաջողվում, այդ պատճառով էլ
Արժանիքներն ու արատները քո իրարից զատել
Ախր դրանք շատ նման են իրար:
Չունեմ ոչ մի ճար:
Դու վազվզում ես,
Դու շատ ես հոգնում, կաշվից դուրս գալիս:
Եվ քո աչքում ես սոսկ երեխա եմ, ոչ թե ամուսին,
Դրա համար էլ սերդ դառնում է դաժան ու բռնի:

Չափազանցում ես
Դու կլոր տարին,
Երբ որ ինձ համար ճաշեր ես եփում մարմանդ կրակին,
Հաճույք ես զգում,
Տեսնելով, թե ես ինչպես եմ խժռում
Որկրամոլի պես խորտիկները քո:
Բավական է, որ
Ես չափավորեմ
Ախորժակը իմ,
Տխրում ես իսկույն: Այնժամ որպեսզի սիրալիր դառնամ,
Քաջ գիտակցելով, որ դու կարող ես լալ ամեն վայրկյան,
Շարունակում եմ ուտել իմ ճաշը պանտագ-
· ռուելյան,
Մինչև կշտանամ:

Չափազանցում ես,
Շատ հեռու գնում,
Երբ առավոտյան դու փայլեցնում ես
Հատակը մեր տան,
Եվ պահանջում ես, որ հողաթափեր հագնեմ անպայման,
Որոնցով, սակայն, ես միշտ քայլում եմ հարբածի նման:

Փոշի ես մաքրում,
Գորգերը սրբում,
Ես, որ չգիտեմ՝ կանգնեմ թե նստեմ,
Հենց որ պառկում եմ,
Որպեսզի հանգիստ քո գործը անես,
Հիմա էլ գալիս, կանգնում ես գլխիս,
Որ բարձս թափ տաս:

Չափազանցում ես,
Խենթանալու բան.
Բավական է, որ
Դժբախտս հանկարծ մի թեթև հազա,
Երբ քո ջանքերով, հենց հաջորդ պահին,
Պառկած եմ լինում իմ մահճակալին,
Մեջքիս փակցրած բուժապուլիկներ՝ անթիվ-անհամար:

Կերբերոսի պես՝
Դու ինձ հսկում ես
Ջգոն ու արթուն,
Ջերմաչափին ես լոկ ապավինում,
Եվ ստիպում ես, որ կուլ տամ հաբեր,
Որոնց քանակը ինքդ ես որոշում:

Չափազանցում ես
Դու վաղուց ի վեր,
Ուստի հազիվ թե, օրերից մի օր, դու փոխվես, իմ սեր:
Սակայն ինձ համար դու նույնը մնա,
Մի՛ փոխվիր բնավ,
Որովհետև քեզ սիրում եմ այնպես, ինչպիսին որ կաս:
Քո խառնվածքի,
Ուրախ կեցվածքի,
Քո ջահել հոգու և բարի սրտիդ շնորհիվ է, որ
Ես չեմ ձանձրանում երբեք, ոչ մի օր:

Չափազանցում ես, սիրելիս,
Չափազանցում ես, գիտեմ,
Չափազանցում ես, բայց դա ինձ,
Ինձ դուր է գալիս:

ԿՆՈՋՍ

Երբ խոփն անցած տարիների
Ակոս-ակոս կնճիռ փորի
Մեր դեմքերի, ճակատների
Վրայով,

Ջավակներս երբ մեծացան,
Լքեն իրենց բույնը, գնան,
Եվ նվաղած մեր սրտերը ամայանան
Նրանց մեղքով,

Երբ սկսենք շարժվել դանդաղ,
Երբ տեսնենք, որ կյանքը ուրախ
Տարօրինակ ձևով, ավա՜ղ,
Անցավ կողքով,

Երբ հասկանանք, որ ապագա արդեն չունենք,
Հուշերը մեր մեկիկ-մեկիկ կփորփրենք,
Եվ զուր տեղը մեզ կսփոփենք
Մեր անցյալով,

Երբ ծանրաքայլ զբոսնելով,
Կրկին շրջենք պուրակներով,
Որոնք նույնպես, ինչպես և մենք, ճերմակել են
Նույն եղյամով,

Երբ ուժերի գերլարումով, սաստիկ հոգնած,
Կցանկանանք մենք, անկասկած,

Սպանել մեր ժամանակը արդեն մեռած,
Մի կերպ ապրել,

Երբ հետայսու լինենք միայն երկու էակ
Անապագա, անծրագիր, այն ժամանակ
Մենք կսկսենք ափսոսանքով, ցավով համակ
Մի գիրք թերթել,

Որ գրել ենք ամբողջ կյանքում,
Ժամանակի թերթիկներին անթիվ, բազում,
Բայց երկու բառ մենք այդ գրքում
Բաց ենք թողել:

Երբ, ի վերջո, իմ կյանքը սին
Մոլոր կանգնի անհայտության դռան շեմին՝
Քո դալկահար, դժգույն դեմքին
Ես կնայեմ,

Երբ համոզվեմ հայացքից քո,
Որ այսուհետ օրերն անգո,
Նույնը լինել չեն կարող մեր սիրուց հետո,
Երբ համոզվեմ,

Երբ աչքերիս լույսը մարի,
Եվ իմ ձեռքը ձեռքդ փնտրի,
Երբ խոսելը դառնա ծանր, անլուծելի
Մի պրոբլեմ,

Երբ պատրաստվեմ ես առ Աստված աղոթք ասել,
Ճիշտ այն պահին, երբ աչքերս դեռ չեմ փակել,
Թե կարող եմ մի անգամ էլ
Հրաժեշտի խոսքի նման կասեմ էլի՝
Քեզ սիրում եմ:

ԵՍ ՉԵՄ ԿԱՐՈՂ ՄՏՆԵԼ ԻՄ ՏՈՒՆ

Ես չեմ կարող մտնել իմ տուն,
Չի անցյալս այնտեղ թաքուն
Ինձ է սպասում: Ներս չմտած՝
Մոտենում ու, պահակի պես կողքիս կանգնած,
Հետևելով ինձ քայլ առ քայլ, ամենուրեք ինձ հսկելով,
Ականջիս տակ ինչ-որ բաներ փսփսալով՝
Տան եղածը աչքս է կոխում,
Ինձ վախեցնում
Իր նողկալի ներկայությամբ...
Ես չեմ կարող մտնել իմ տուն:

Անցորդները ինձ են նայում աչքի տակով,
Կարեկցանքով,
Իսկ ոմանք էլ անց են կենում
Ու հռհռում:
Հրմշտում են, ձեռ առնում ինձ...
Բայց, գիտեք ինչ,
Թքած ունեմ ես այդ օտար
Մարդկանց վրա:
Ո՛չ հույս ունեմ, ո՛չ նպատակ,
Սիրտս է դատարկ,
Վիշտս խորն է ու անհատակ.
Սերը ինձ հետ լա՛վ խաղ խաղաց —
Ես չեմ կարող մտնել իմ տուն:

Ես չեմ կարող մտնել իմ տուն,
Չի ձգում ինձ այնտեղ ոչինչ,

Եվ քանի որ ես սովոր չեմ
Ապրել մենակ,
Թափառում եմ փողոցներում աննպատակ.
Ողջ աշխարհն է ելել իմ դեմ:
Երկտեղանոց մահճակալս սառն է, ավմաղ,
Եվ երբ մենակ թավալվում եմ այնտեղ անքուն,
Նա հալվում է ուրիշ գրկում —
Ես չեմ կարող մտնել իմ տուն:

Եվ զայրույթի պահին մի օր,
Սենա գետի
Մեջ նետեցի
Տան բանալին —
Ինձ ու նրան
Իրար կապող միակ շղթան:
Թող նա խեղդվի Սենա գետի խոր ջրերում,
Այնպես, ինչպես խմիչքն է ինձ ահա խեղդում
Այս բարերում,
Որպեսզի ես անհուն վիշտս շուտ մոռանամ:
Ու լցնում են բաժակիս մեջ
Ցնորական երջանկություն,
Եվ ծնվում է հոգուս ներսում կեղծ խնդություն -
Ես չեմ կարող մտնել իմ տուն:

Շատ եմ ուզում գնալ մեր տուն,
Որ նա գրկի, վզովս ընկնի,
Որ զայրույթիս բոցը մարի,
Որ վշտերը իմ փարատի,
Իր այտերին արցունքները իմ չորացնի —
Շատ եմ ուզում գնալ մեր տուն:

ՄԵՐ ՑՆՈՐՔՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ

Մենք ամուսնացանք մի գարնանային հրաշալի օր,
Առանց քահանա, առանց նոտարի ու ընկերների,
առանց հոր և մոր,
Մենք հազիվ քսան տարեկան էինք,
Եվ մեր դեռատի սրտերն այրում էր մի առնական
կիրք:
Մի գիշերվա մեջ սերը կապանքից ազատագրեց
սրտերս գերված.
Երջանկությունից կարկամել էինք՝ իրար պինդ գր-
կած,
Եվ լայն-լայն բացած մեր աչքերի մեջ վախ
չկար անգամ —
Երբ մանկությունը մեռած է արդեն, ջահելությունը
խնդում է այնժամ:

Հորիզոնում կառուցելով
Պալատը մեր ցնորքների,
Շրջում էինք մենք երկուսով,
Երկրագնդով,
Ինչպես երկու թափառական:
Եվ որպեսզի մենք հագենանք սիրո ակից՝
Որ գարուն է հավերժական,
Մենք իրար հետ կիսում էինք մամուռն անգամ
Խենթ Հողմերի ապարանքի:

Մենակ եմ հիմա — նույն շրջմոլիկն եմ.
Սակայն, երբ զգամ, որ վերջին ժամս վրա է հասել,

Կպառկեմ ես այն տապանաքարին, որի տակ, գի-
տեմ,
Հանգչում է սերս, ու երանավետ՝ կմեռնեմ ես էլ:
Եվ նույն խաչի տակ մեր մարմինները կննջեն
խաղաղ,
Եվ մեր աչքերը կշրջանակի հորիզոնը նույն,
Նույն սառը հողով մեր բերանները կլցվեն դան-
դաղ,
Այնքան ժամանակ, մինչև հավերժում մեր հոգինե-
րը իրար միանան:

Ցնորքների պալատը մեր
Փուլ է եկել, դարձել ավեր,
Փշրվել են ամեն պատրանք ու սպասում,
Իսկ փլատակ քարերի տակ
Մի շրջմոլիկ սիրտ է ողբում,
Ճաք է տալիս:
Անցյալս է հիմա իշխում
Ու մղում ինձ հավիտյանս թափառելու,
Ու ննջելու, ու ննջելու
Խենթ Հողմերի ավերակված ապարանքում:

ԱՏՈՒՄ ԵՄ ՔԵԶ, ԿԻՐԱԿԻ ՕՐ

Շաբաթվա մեջ չկա մի օր,
Որ չլինի տաղտկալի ու անբովանդակ,
Բայց կիրակին խենթ, հավակնոտ,
Ամենավատ օրն է, որ կա:
Նա ուզում է մեզ վարդագույն, չքնաղ թվալ,
Զևանում է մեծահոգի,
Նա ուզում է մեզ համոզել,
Թե կիրակին միակ օրն է երանելի:
Ատո՛ւմ եմ քեզ, կիրակի օր,
Ատո՛ւմ եմ քեզ, կիրակի օր:
Կան անցորդներ բյուր-բյուրավոր,
Եվ կա ամբոխ փողոցներում,
Անկարեկից տեսքով մոլոր
Խառնամբոխն է հոսո՛ւմ, հոսո՛ւմ:
Ու քայլում են մարդիկ կամաց,
Կարծես թափոր լինի թաղման,
Կիրակին է մեռել վաղուց
Ու թաղում են հիմա նրան:
Ատո՛ւմ եմ քեզ, կիրակի օր,
Ատո՛ւմ եմ քեզ, կիրակի օր:

Կլոր շաբաթ աշխատում ես և կիրակի օրը նույնպես,
Այդ պատճառով այս աշխարհից գոհ չեմ կարծես,
Հարազատս, թե պարզապես դու լինեիր միշտ իմ կողքին,
Այն ամենը, ինչ չեմ սիրում, կսիրեի ես կաթոգին:

Արեգակի լույսով ցողված
Գարնանային կիրակիներ,
Որ ջնջում են փայլով խամրած
Նախորդ օրվա հոգս ու ցավեր:
Կիրակիներ՝ լեցուն լազուր, ջինջ երկնքով,
Մանուկների խինդ-ծիծաղով,
Սիրահարված ջահելների զբոսանքով
Եվ վեհերոտ երդումներով,
Բողբոջ տված ընձյուղներով,
Բողբոջ տված ընձյուղներով:
Եվ ձուլվելով խառնամբոխին
Ու մարդկանց հետ, որ քայլում են փողոցներով
Եվ չեն շտապում բոլորովին,
Կքայլեինք մենք երկուսով,
Գրկած իրար և ձեռք-ձեռքի:
Եվ մեզ բնավ չէր հուզի, թե
Վաղը իր հետ ինչ կբերի,
Կամենայինք միայն, գուցե,
Մեկ ա՛յլ, մեկ ա՛յլ կիրակի օր:

Եվ շատ մարդիկ օրինավոր,
Որ բարեմիտ են համարվում,
Ոչ բարեմիտ մարդիկ բոլոր,
Որոնք, սակայն, այդպիսին են թվալ ուզում,
Նրանք, ովքեր եկեղեցի են հաճախում,
Որովհետև կարգն է այդպես,
Որ հագնում են միշտ նոր կոստյում,
Եվ շապիկներ փոխում պես-պես,
Ովքեր քսան ժամ են քնում

Եվ ապրում են առանց հոգսի,
Լուսաբացին քնից զարթնում,
Շտապում են ձկան որսի,
Նրանք, ովքեր անմար վշտով
Միշտ գնում են գերեզմանոց,
Ովքեր օրը անց են կացնում սեր անելով,
Քանզի չունեն այլ բան ու գործ —
Կնախանձեն մեզ անպայման մարդիկ բոլոր,
Ինչպես ես եմ միշտ նախանձել այն մարդկանց, որ
Հավատում են կիրակիին,
Որ կիրակի օրն են պաշտում,
Որ ունեն շատ կիրակիներ,
Այն դեպքում, երբ ես չեմ սիրում,
Ես ատում եմ այդ կիրակին:

ՔԱՆԻ ՈՐ...

Քանզի դու ունես երկնագույն աչքեր,
Եվ քո վարսերը, հրե ցոլքերով,
Արև են մաղում զվարճանալով,
Քանզի դու քսան տարեկան ես դեռ՝
Ծամում ես կյանքդ, ինչպես ծամում են միրգը ալ-կարմիր,
Որը քաղում են խինդ ու ծիծաղով...
Դու կարծում ես, թե խելքիդ ինչ փչի՝ կարող ես անել,
Հուսահատվո՛ւմ ես, սակայն վայրկյան անց պատ-
րաստ ես նույնը, նո՛ւյնը կրկնել,
Ինձ տանջո՛ւմ ես դու, հոգուս հետ խաղում՝ ինչպես լկստված փոքրիկ երեխա,
Որ խաղալիք է պահանջում միայն, որպեսզի ջար-
դի, փշրի անխնա,
Քանզի անվերջ է, անսպառ է սերս,
Դու գողանում ես իմ գիշերները,
Իսկ ցերեկները ես լաց եմ լինում:

Բայց, սեր իմ, զգո՛ւյշ, ես չեմ խոստանում,
Որ եթե հանկարծ ցնորվեմ մի օր ու դառնամ ժուժկալ,
Կարող եմ կյանքիս ես մեկեն վերջ տալ,
Թեպետ ապրում եմ միայն քեզ համար:

Քանի որ կյանքում քեզ ունեմ միայն —
Իմ տերը սիրտս է,

Եվ մեզ իշխում է, իշխում է սերը՝
Իմ սրտի տերը:
Քանի որ դու ես լոկ իմ մեջ ապրում,
Եվ երջանկության ակնթարթները, որ ունենում եմ
քեզ գրկիս սեղմած,
Ես ոչ մի բանով չեմ փոխարինի՝
Աստծուն ու մարդկանց ես չեմ հետևի,
Թե մեռնես մի օր՝ մեռնեմ երևի,
Քանի որ
Մահը սիրո համեմատ դատարկ հնչյուն է,
Եվ առանց սիրո կյանքը ունայն է,
Քանի որ հիմա
Հավիտենական սիրո շեմին եմ, ես չեմ ցանկանա,
Որ սիրտս մի օր դառնա սգավոր,
Քանի որ, քանի որ...

ԽԵՆԹԱՆՈՒՄ ԵՄ ՔԵԶ ՀԱՄԱՐ

Մի դուռ է բացվում, դու դուրս ես գալիս, գնում
իմ կյանքից
Եվ ամեն անգամ ինձ վախն է պատում
Դառնում եմ շշունջ, հոգեվարք ապրում.
Երբ դու գնում ես՝
Հուսալքվում եմ
Ու խենթանում քեզ համար:

Դուռը փակվում է, հոգիս մոլորվում.
«Ախր, ում համար» և «ինչու գնաց»:
Ծովում կորսված կղզյակ եմ դառնում,
Խառնակ հողմերից ծեծված-բզկտված,
Դու գիտես արդյոք, որ ամեն վայրկյան,
Խենթանում եմ քեզ համար:

Չեմ կարող թեկուզ մի երկու ժամով
Ապրել մեն-մենակ, ինքս-ինձանով,
Քո աչքերում եմ ես ձև ստանում
Եվ երջանկանում կամ դժբախտանում,
Քո ցանկությամբ է սիրտս տրոփում,
Ինձ մարդ եմ զգում, երբ սիրում ես ինձ,
Եվ քեզնից հեռու, ահ ու սարսափով,
Խենթանում եմ քեզ համար,
Խենթանում եմ մեզ համար:

Մի դուռ է բացվում, վերադառնում ես,
Ու երբ դու կրկին ինձ ես նվաճում,

Դառնում եմ անզոր, ես սեր եմ դառնում:
Երբ ներս ես մտնում հույսերիս դռնից
Ու պինդ գրկում եմ քո մարմինը մերկ,
Ես խենթանում եմ սիրուց,
Խենթանում եմ քեզ համար:

ԻՆՉՊԵՍ ՕՏԱՐՆԵՐ

Փոքր-ինչ փոքրոգի, փոքր-ինչ ձանձրացած,
Բոլոր երջանիկ օրերով այրված գետնի երեսին,
Մի քիչ դատարկված, քիչ ընտելացած,
Մենակ մնալու վախով ապրում ենք այսպես մի-
ասին,
Ինչպես օտարներ, որ սպառել են խոսքերը բոլոր,
Գործունյա մարդիկ, որ հանդիպում են միշտ պա-
տահաբար,
Փոխանակում ենք լոկ մի երկու խոսք ու ժպտում
ենք չոր,
Սառն հայացքով և չունենալով սրտում ոչ մի բառ:

Մեզ մնում է լոկ ցավ ու խղճմտանք,
Մնում է միայն վախճանված մի սեր,
Մենք ընդամենը, ուզենք թե չուզենք,
Իրար դեմ նստած երկու էակ ենք,
Որոնք ապրում են ինչպես օտարներ:
Ինչ պատահեց մեզ, մեր սերն ո՞ւր կորավ,
Դա չենք իմանա երբեք ու երբեք,
Որովհետև մենք՝ նստած դեմ-դիմաց,
Սխալներով ենք քարկոծում միմյանց,
Եվ ապրում ենք սոսկ իբրև օտարներ:

Գուցե ողջամիտ կամ անզոր դարձած,
Չենք կարող լուծել հարցն այս ոչ դյուրին,
Եվ զավեշտորեն վշտից համրացած,
Ժամանակ ենք մենք զուր տեղը վատնում,

Հույսերս դրած անկարելիին:
Ժամանակը, որ հոշոտում է մեզ, պղծում անպայ-
ման
Մաքրությունը սին, որ բույն է դրել երկուսիս սըր-
տում,
Եվ իմաստուն ենք մեզ երևակայում խենթերի
նման,
Թաղվելով դանդաղ, դանդաղ հեռացող անցյալի
գրկում:

ԴՈՒ ՈՒԶՈՒՄ ԵՍ

Դու ուզում ես,
Քանզի քո մեջ ալիքվում են հուժկու կանչեր,
Ու մարմինդ ծառս է լինում, միտքդ հուզվում,
Դու ուզում ես:
Դու ուզում ես, երբ զգում ես քո մեջ այնքան տաք հոսանքներ,
Մարել կիրքը, որը դադար չի տալիս քեզ, անքուն պահում,
Դու ուզում ես:
Դու ուզում ես ճչալ բառեր, որոնք միայն շշնջում են,
Ուզում ես քեզ քչփչալով ասեն խոսքեր, որ չեն ասվում,
Դու ուզում ես:
Դու ուզում ես հեշտանքից ու գրգիռներից այրվող մարմին,
Որ հրճվանքից մարմնակործան՝ դու խենթանաս նրա ծոցում,
Դու ուզում ես:

Դու ուզում ես
Սիրո օրեր, որ քո սպիտակ գիշերները շատ երկարեն,
Երբ հևում ես շնչակտուր և քո ուժը չի հերիքում,
Դու ուզում ես:
Ուզում ես, որ քո զիստերից դյուրագրգիռ մատներ կառչեն

Տագնապահար, թե կարող են քեզ նվիրել ամենա-
լավ սերն աշխարհում,
Դու ուզում ես:
Դու ուզում ես գորովահույզ երջանկանալ հոգով,
մարմնով,
Որ փարատես ամեն փափագ ու տարակույս,
Դու ուզում ես:
Դու ուզում ես մի կին լինել՝ կնոջն հատուկ բերկ-
րանքներով,
Որ վայելես կյանքդ ջահել, որ հագենաս խելա-
կորույս,
Դու ուզում ես:

Դու ուզում ես ուզածիդ չափ ու մոլեգին
Խորհրդավոր միրգը կծել, որ կարծում են արգելված է,
Դու ուզում ես:
Դու ուզում ես մեջդ ծնել խլրտումը աստվածային,
Որի մասին կիսաձայն են արտահայտվում և որը
քեզ անծանոթ է,
Դու ուզում ես:
Դու ուզում ես ծփալ հույզից, հպվելով այն մարդու
շուրթին,
Որ անպայման մի օր կգա, որպեսզի քեզ
հայտնաբերի,
Դու ուզում ես:
Դու ուզում ես այդ ոսկերչի ձեռքում լինել լոկ
մի մարմին,

Որ սեր կտա, քեզ կարարի:
Դու ուզում ես,
Եվ քանի որ դու ուզում ես,
Ուզում եմ ես:

ՔՈ ՍԵՆՅԱԿՈՒՄ

Քո սենյակում, ուր հայացքն է իմ թափառում,
Կան բազմաթիվ առարկաներ,
Որոնք քեզ են լոկ հիշեցնում:
Նախնիներդ նկարներից նայում են քո վարդա-
նախշով մահուդներին,
Որ փռված են այստեղ-այնտեղ, տարբեր դիրքով,
Ու շաղոտված յասամանի բուրաջրով:

Քո սենյակում հիմա,
Ներկա է, կա,
Քո սենյակում հիմա,
Ներկա է, կա,
Քո սենյակում հիմա,
Մեզ համար սեր կա:

Երբ քո կրծքին եմ խոնարհվում, զգում եմ, որ
սրտիդ վրա
Նուրբ ու ճերմակ-ճերմակ մաշկ կա,
Որ շոյում եմ, ու մատներս են գինովանում,
Եվ գլխիդ մեջ մի աշխարհ կա, որ հուզվում է,
ալեկոծվում,
Արտասվոր քո մտքերից,
Ու խինդերիդ շշունջներից:

Քո սենյակում հիմա,
Ներկա է, կա,

Քո սենյակում հիմա
Ներկա է, կա,
Քո սենյակում հիմա
Մեզ համար սեր կա:

ՔԱՂԱՔԸ

Մի օր լքեցի հարազատ գյուղս,
գնացի քաղաք: Բայց երբ տեղ
հասա, հսկայի մի ձեռք, ինձ այդպես
թվաց, ապտակեց դեմքիս:

Աչքերիս առաջ քաղաքն էր պարում,
Մի արտասովոր, խենթ բալետի պես,
Մուսան էր իջել երկնքից ասես,
Եվ Աստծո հուրն էր այդ պարն արարում,
Հուրը Աստծո:
Կարծես ժայթքում էր հենց գետնի տակից,
Մի սիմֆոնիայի մեղմ ելևէջներ,
Եվ ծնվում էին տարբեր հնչյուններ,
Եվ լաց ու ծիծաղ, ականջ ծակող ճիչ:
Լույսերը կանաչ, լույսերը կարմիր ու նաև դեղին,
Մերթ մարում էին, մերթ վառվում նորից,
Որ ուղղություն տան ու հսկեն բարձրից,
Մարդկանց անկանոն այդ խառնամբոխին:
Համազգեստ հագած մի քանի հոգի օդն էին ծեծում
ձերմակ փայտիկով,
Հունի մեջ դնում այդ հոծ զանգվածի շարժումը հզոր,
Մետրո կոչեցյալ հազարաբերան այդ հրեշը գորշ
Մեկ կուլ էր տալիս, մեկ դուրս էր թքում մարդկային
հոսքը հսկա երախով:
«Օ՜, զգույշ եղիր»,— մտածում էի:

Քաղաքը, հարկավ, նման է կնոջն այն տա-
որինակ,
Որի սրտում կա ողբերգության համ,
Նա կրակ չունի, սիրտ չունի անգամ,
Նա մի անդունդ է, վիհ է անհատակ:
Չնայած դրան՝ այդ հայտնությամբ իմ,
Հոգիս խնդուն էր ու փառավորված,
Տրոփող սրտով, աչքերս չռած,
Այդ ամենը ինձ թվում էր ցնորք, երազ հարթմնի,
Ու չէի զգում, որ ներս եմ մտել, անկախ ինձանից,
Խոլ պատրանքների տաճարի դռնից,
Ուր մղել էր ինձ հորձանքը անհույս,
Ինձ՝ խելակորույս:
Եվ հենց այդ պահին,
Մարդկային հզոր ամբոխի միջից,
Սահման չունեցող այդ հորձանուտից,
Մի աղջիկ ելավ՝ դեմքը ծեփի գույն,
Եվ ձայն տվեց ինձ. «Եկ, գնանք մեր տուն: Գիտեմ,
քո սրտում
Անծանոթ երկրի պատկերն է լողում,
Արի և անհոգ մտիր իմ թատրոն»:
Եվ ես կատաղի թոհուբոհի մեջ,
Մինչև իրիկուն,
Այդ աղջնակի հետևից ընկա
Ինչպես մոլորյալ,
Մոլորյալ տղա,
Կածելով, թե նա
Նախախոկում էր ի վերուստ տրված...
Սակայն առաջին գիշերը սիրո

Նա խնդաց, խնդաց և էլի խնդաց,
«Օ՜, զգույշ եղիր, ի սեր Աստծո»:

Քաղաքը, հարկավ, նման է կնոջն այն տա-
ռորինակ,
Որի սրտում կա ողբերգության համ,
Նա կրակ չունի, սիրտ չունի անգամ,
Նա ինձնից խլեց անուրջ ու պատրանք:
Իմ դաժան քաղաք, դու մնաս բարյավ՝
Դու՝ դժբախտ մարդկանց կեղծ դրախտավայր,
Որ իմ աչքերին փոշի ես ցանել
Եվ խանգարել ինձ երկինքը տեսնել,
Երկինքն իրական:
Եվ եթե հիմա, ցուրտ արշալույսին,
Ես հեռանում եմ լուրջ, իմաստնացած,
Գնում եմ հույսով, որ գտնեմ կրկին
Տունս... արևը... իմ ընկերներին,
Իմ սերերը հին:

ՍԻՐԵԼԻՍ... ԵՐԲ ՏՈՒՆ ԵՍ ԳԱԼԻՍ

Երբ տուն ես գալիս,
Գլխի չեմ ընկնում
Ինչու, սիրելիս,
Հուզվում եմ այդքան
Ես մանկան նման:
Թախծում եմ անափ.
Լոկ համբույրն է քո,
Որ փարատում է
Թե՛ վախ, թե՛ տագնապ:
Եվ երբ պարզապես,
Սիրահարի պես,
Գալիս ես ու ինձ
Փարվում, սիրելիս,
Եվ քո մարմինն է
Հպվում մարմնիս,
Խենթանում եմ ես
Քո տաք համբույրից:
Սիրվելու տենչը
Հոսում է հանկարծ մեր երակներում,
Եվ կռահելով ինչ է լինելու օ՛, դրա վերջը,
Աչքերս ենք փակում,—
Եվ դա հրաշք է,—
Մենք անգիտակից մի անմեղությամբ:
Երբ տուն ես գալիս,
Հետդ բերում ես
Հեշտասիրության մրրիկ, սիրելիս,
Մի անծանոթ բան,

Որ պատճառում է ուրախության ցավ,
Պինդ սեղմում իրար
Ու գերում է մեզ...
Եվ երբ նոր օր է
Բացվում, սիրելիս,
Սիրուց հալածված՝
Քնում ենք հոգնած... երբ տուն ես գալիս:

ՓԱՐԻԶԸ ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻՆ

Խենթ սեպտեմբերը ավելը առել
Ու հալածում է ամռանը ծնված մեր սերը ջահել,
Սերս դողում է, փշրվում տխուր,
Անցյալի գրկում մեռնում է իզուր:
Ախր, գիտեի, այս օրը կգար...
Սիրտս ունայն է,
Դատարկ տակավին,
Ինչպես Փարիզը օգոստոս ամսին:

Մեր սերը տեսավ
Արցունք ու ծիծաղ, խնդություն թե ցավ,
Եվ վատթարը նա կանխազգալով՝
Ապրում էր միայն այսօրվա օրով:
Ամեն մի փողոց, յուրաքանչյուր քար
Կարծես թե միայն մեզ էր պատկանում,
Մենք մենակ էինք մոլորակում հար,
Օգոստոս ամսին, Փարիզ քաղաքում:

Որպեսզի ասեմ՝ «ես սիրում եմ քեզ»,
Որքան էլ հեռու լինես ինձանից,
Մի մասը մարմնիս
Քեզ հետ է ընդմիշտ, կպած է քեզնից,
Իսկ մյուս մասը մենակ ու մոլոր,
Որոնում է ու ձգտում ամենուր
Փարիզի պայծառ, կուրացնող լույսին՝
Օգոստոս ամսին:

Աստված կամեցավ, որ երազանքն իմ,
Վերստին գտնի գոնե մի կաթիլ
Օգոստոս ամիս՝ շրթունքներին քո,
Եվ մի քիչ Փարիզ՝ աչքերի մեջ քո,
Որ ձև ստանա ու սլանա վեր
Մեր սերը մի քիչ խենթ ու խելագար,
Որ այս ամենը սկսվի կրկին,
Կրկին Փարիզում, օգոստոս ամսին:

ԵԹԵ ԻՆՁ ՄՆԱՐ...

Եթե ինձ մնար,
Եթե ինձ մնար,
Լոկ մի ժամ մնար ապրելու համար,
Եվ ոչ ավելի,
Այդ ժամը ապրել ես կուզենայի
Քո գրկում միայն, քո գրկում միայն:
Քանի որ, իմ սեր,
Սարսափս վանել ինձ կհաջողվեր,
Եվ խոնարհվելով քո կյանքի վրա,
Ես կլսեի զարկերը նրա,
Ու կպահեի,
Ու կպահեի
Իմ սրտի խորքում,
Պաղ հողի գրկում,
Մի բուռ ջերմություն
Քեզնից գողացած...

Եթե ինձ մնար,
Եթե ինձ մնար,
Լոկ մի ժամ մնար ապրելու համար,
Եվ ոչ ավելի,
Այդ ժամը ապրել ես կուզենայի
Առավոտ լուսո,
Անկողնում սիրո,
Որպեսզի ասեմ
Լոկ սիրո խոսքեր,
Որպեսզի քո մեղմ ժպիտը տեսնեմ,

Եվ չմտածեմ,
Էլ չմտածեմ,
Թե ինձնից հետո
Կարող ես ժպտալ
Դու մեկ ուրիշին,
Թե ուրիշ մեկը
Ինձնից հետո քեզ
Կառնի իր գիրկը...

Եվ մի համբույրից,
Մեն-մի համբույրից
Գոհացած մարմնով,
Բյուր կասկածներից
Թեթևցած հոգով՝
Իմ նինջը վերջին
Կբանար ճամփաս,
Ես կփարվեի
Լույս-արեգակին,
Լույս-արեգակին:

ՀԱՎԻՏՅԱՆՍ ՀԱՎԻՏԵՆԻՑ

Երբ քուն իջնի վերջին անգամ մեր կոպերին՝
Հավիտյանս հավիտենից,
Հավիտյանս հավիտենից,
Հրաժեշտի վերջին պահին
Ես կափսոսամ, որ գնում եմ այս աշխարհից,
Ես կզղջամ, որ գնում եմ այս աշխարհից,
Կհեռանամ վշտով անհուն,
Եվ ինչքան էլ ապրած կյանքից հիշեմ քիչ բան,
Խոր կլինի վիշտս այնքան,
Քանզի, ավա՜ղ, փակեցինք մեր սրտերը հուր,
Հուր հավիտյան,
Հուր հավիտյան,
Եվ փոխանակ երջանկանանք,
Ունեցանք լոկ վիշտ, ափսոսանք:

Երբ դարերը շարվեշարան,
Հավիտյանս հավիտենից,
Հավիտյանս հավիտենց,
Խոր անցյալի քողով ծածկված մեզ այցի գան,
Երբ կատարյալ մի մոռացում իջնի վրաս,
Թեկուզ լույսի գեթ մի կաթիլ եթե մնա,
Թեկուզ մնա կրա՜կ հանգած
Հոգուս դեռ տաք մոխրի վրա,
Որն իբրև թե երբեք, երբե՜ք չի մահանում,
Որպեսզի ես անդորր գտնեմ տիեզերքում,
Հավիտյանս հավիտենից,
Հավիտյանս հավիտենից,

Ինչպես կյանքում այս իրական,
Սեր իմ, սեր իմ,
Քեզ կփնտրեմ,
Քեզ կկանչեմ,
Քեզ կգտնեմ,
Քեզ կպահեմ,
Կփայփայեմ
Հուր հավիտյան, հուր հավիտյան...

ԴՈՒ ԱՐԴԵՆ ՉՈՒՆԵՍ

Քեզ հետ միասին
Քանի՞ կանանց ենք մենք սիրահետել...
Բայց ժամն է եկել,
Եվ պետք է, ծերուկ, զենքը վայր դնել:
Դու տարիքային սահմանը անցար,
Դիմացկունության պաշարներ չունես,
Հիմա նման ես դու Դոն Ժուանին ցեցերի կեիաած,
Ուստի լավ կանես մի տեղ բույն դնես:

Դու արդեն չունես, դու արդեն չունես
Ուժն ու կորովը քո ջահելության,
Քեզնից հրաշքներ թող էլ չսպասեն
Կանայք զուր տեղը:
Դու արդեն չունես, դու արդեն չունես
Պարծանքդ վսեմ, մնացել է լոկ հալածվածի տեսք,
Մարած եռանդով, անավյուն այդպես,
Դու էլ ո՞ւմ ես պետք...
Ախր, նվազ ես և հրայրքից զուրկ,
Մահու չափ տխուր:
Ծարավ է միշտ էլ մարմինը կնոջ,
Հաճույքի՞ ծարավ,
Ոսկե հասակդ ինչքա՞ն շուտ անցավ...
Հրապույրներդ հիշո՞ւմ ես արդյոք
Առասպելական:
Դու արդեն չունես, չունես ուրիշ բան,
Երազելու քո մղումից բացի,

Եվ հիշողություն քեզ մնաց միայն
Այդ պատերազմից:

Դու արդեն չունես, դու արդեն չունես
Կանանց սրտերը գերող արտաքին,
Դու հայելու մեջ գնա քեզ նայիր,
Նայիր ուշադիր:
Դու արդեն չունես, դու արդեն չունես,
Անփորձ աղջկա սրտին տիրելու տարիքը չունես,
Քո նենգ խաղերի օրերը անդարձ դարձել
են անցյալ,
Իսկ դու՝ նստակյաց,
Դու՝ միրգ անիծյալ,
Ոչ ոք չի ուզում քեզ ծառից քաղել.
Ինչ իմաստ ունի պտուղը քամել,
Եթե նա չունի ոչ մի կաթիլ հյութ:
Դե ամուսնացիր, խեղճ իմ բարեկամ,
Թե չէ ապագան
Դեմքիդ կխնդա,
Կչարախնդա:
Դու արդեն չունես, դու արդեն չունես
Ոչ մի իրավունք կանանց մերժելու
Հաճույքն զգալու.
Երբ չունես ավյուն,
Քեզ բավական է չնչին մի մանրուք:

Դու արդեն չունես, դու արդեն չունես,—
Քո վիճակի հետ դու պիտի հաշտվես.
Հո տեսնում ես, որ սնանկ են ու սին

Խոստումները քո:
Դու արդեն չունես, դու արդեն ունես
Մեն-մի ճանապարհ. պիտի ունենաս զավակներ
բազում—
Ջահելությունն իր միայն այդպես է
Մարդ շարունակում:

Քո լուսապայծառ ու լայն ճակատին,—
Եթե քո կանայք երես առած չեն,—
Ծերուկ, կընձյուղվի
Ռազմավարը այն զարմանահրաշ,
Որ պոկում ենք մենք գլխից եղջերվի
Գնդակից զարկված:
Դու արդեն չունես, դու էլ ուժ չունես
Մինչև ամպերը կին թռցնելու,
Բայց նրանք, եթե,
Իրենց հասնելիք քնքշանքն ուզենան,
Այդ պարկեշտության համար դու պետք է
Ոսկի՞վ հատուցես նրանց անպայման:

ԱՎԵ ՄԱՐԻԱ

Ավե Մարիա՛, ավե Մարիա՛,
Ով տառապում է՝ քեզ է դիմում նա,
Եվ քանի որ դու շատ ես տառապել,
Կարող ես մարդկանց ցավը փարատել,
Հասկանալ նրանց,
Մարիա անանց:

Ավե Մարիա՛, ավե Մարիա՛,
Ով լաց է լինում՝ քո զավակն է նա,
Դու, որ զոհեցիր քո երեխային,
Որպեսզի մաքրես մահկանացուին
Իր ախտերից բյուր,
Դու՝ մաքրամաքուր:

Ավե Մարիա՛, ավե Մարիա՛,
Ով կասկածում է՝ խարխափում է նա,
Մարիա՛,
Նրան, նրա՛ն դու լույս տուր,
Ու ձեռքից բռնած՝ ճանապարհ ցույց տուր,
Ավե Մարիա՛, ավե Մարիա՛:

ԴՈՒ ՇՓԱՑԵԼ ԵՍ

Զարմանալի բան. երբ քեզ եմ նայում՝ ծիծաղս է գալիս.
Զարմանալի բան. երբ քեզ եմ նայում՝ ծիծաղս է գալիս.
Կանգնել ես կողքիս, ձևեր ես թափում,
Խմիչքը արդեն խփում է գլխիս,
Երեսիդ խնդալ ու քրքջալ եմ հիմա ցանկանում:
Այս երեկո ես մի լավ կոնծեցի,
Որպեսզի մի քիչ համարձակ դառնամ,
Որպեսզի ասեմ՝ դե բավակա՛ն է, կշտացա՛ քեզնից,
Քո բամբասանքից, ոչ մի տարակույս՝
Նաև քո մարմնից, որ ինձ դարձնում է հնազանդ ու հեզ,
Եվ խելակորո՛ւյս, և խելակորո՛ւյս...
Հոգիս դուրս եկավ, և այդ մասին է, որ շատ եմ ուզում տեղյակ պահել քեզ.
Ինձ հոգնեցում ես, կոպտում, բռնանում,
Ես դիմանում եմ քո անտանելի վատ խառնվածքին,
Եվ չեմ հանդգնում քեզ ասելու, որ չափն անց ես կացնում,
Չափն ա՛նց ես կացնում. վերջապես ես քեզ ասի այդ մասին:
Երբեմն նույնիսկ ուզեցել եմ քեզ բռնել ու խեղդել,
Տեր Աստված, ախր վերջին հինգ տարում որքա՛ն ես փոխվել,
Դու շփացե՛լ ես, դու շփացե՛լ ես:

Ա՜խ, ինչ լավիկն ես, ինչ գեղեցիկն ես
Մաշիկդ ծածկող քո գուլպաներո՛վ,
Եվ կիսակոճկած ու իր դա՛ռն ապրած գիշերաշորով,

Վարսակալներով, ինչպիսի՞ քայլվածք...
Նույն հարցն եմ տալիս ինքս ինձ ամեն օր.
Այդ ինչպե՞ս արիր, որ ինձ դուր եկար,
Ինչպե՞ս եղավ, որ տարփածուդ դարձա
Եվ ամբողջ կյանքում քեզնից պոկ չեկա:
Ա՛խ, որքան ես դու մորդ նմանվում.
Նրա մեջ ոչինչ սեր չի հարուցում:

Ընկերներիս մոտ, ի՞նչ ողբերգություն,
Հակաճառում ես ու հետս խոսում մետաղյա ձայ-
նով,
Դու քո չարությամբ, թունոտ նախանձով,
Սարե՞ր շուռ կտաս:
Մեծ խաղագումար շահեցի կարծես
Այն օրը, երբ ես հաղթեցի քեզ...
Ինչ լավ կլինի, եթե դու լռես, ծպտուն չհանես,
Դու շփացե՞ս ես, դու շփացե՞լ ես...

Անտաշի մեկն ես, դու բռնակա՞լ ես,
Դու ո՞չ սիրտ ունես և ո՞չ էլ հոգի,
Սակայն երբեմն միտք եմ անում ես,
Ախր իմ կինն ես, ինչ էլ որ լինի:
Եթե ցանկանաս մի քիչ ջանք թափել՝ ի՞նչ
լավ կլինի,
Ամեն ինչ կրկին իր տեղը կընկնի,
Սպորտով մի քիչ մարմինդ մարզիր, և կնիհարես,
Միշտ կարգի բեր քեզ հա՛յելու առաջ,
Մարմինդ, սի՞րտդ դու գրիմ արա, դարձիր
անճանաչ,

Մի մտածիր, թե խորշում եմ քեզնից,
Ինձնից խույս մի տուր՝ ինչպես ժանտախտից,
Փոխարենը դու սիրալիր լինել խնդրում եմ փորձիր,
Այն աղջնակը վերստին դարձիր,
Որ ինձ պարգևեց մեծ երջանկություն,
Ու երբեմն ես, հակառակ կամքիս,
Կուզենամ, որ դու, ինչպես անցյալում,
Մի քիչ շփանա՛ս, շփանա՛ս մի քիչ...

ՄԻ ԱՂՋՆԱԿ

Մի աղջնակ,
Դեռ տասնվեց տարեկան մի խենթ աղջնակ,
Գարնանաբույր մի աղջնակ,
Նա պառկած է ճամփին մենակ:

Նա ապրում էր այն թաղերից մեկում,
Ուր բոլոր մարդիկ ոսկի են դիզում,
Բայց ծնողներին մի օր լքելով,
Նա բոհեմ սիրող տղայի հետ էր իր բախտը կապել:
Այդ տղան գիտեր «ես քեզ սիրում եմ» բառերն ասելով,
Խելքահան անել, սրտեր նվաճել:
Եվ հոգում արև՝ նրանք հեռացան,
Թե ուր գնացին՝ Աստծուն էր հայտնի,
Ու ջահելության թովչանքը միայն իրենց հետ տարան
Եվ քաղցրությունը իրենց հանցանքի:

Մի աղջնակ,
Դեռ տասնվեց տարեկան մի խենթ աղջնակ,
Գարնանաբույր մի աղջնակ,
Նա պառկած է ճամփին մենակ:

Աղջկա սիրտը ամառ թե ձմեռ միշտ նույնն էր եղել,
Նա մի տենչ ուներ՝ ազատ թափառել:
Նրանք երկուսով ապրում էին լոկ մեկ օրվա կյանքով,
Տեղից տեղ թռչում թիթեռի նման,
Տիեզերք էր պետք սրտերին նրանց,

Որ սավառնեին իրար սիրելով:
Աղջկա ներկան, նաև ապագան
Այդ սերն էր միայն՝ չքնաղ, աննման,
Որ օրհներգի պես ասում էր օրոր,
Եվ քնեցնում էր հայացքը նրա երկնքում լազուր:

Մի աղջնակ,
Դեռ տասնվեց տարեկան մի խենթ աղջնակ,
Գարնանաբույր մի աղջնակ,
Նա պառկած է ճամփին մենակ:

Բայց սերը նրա անշեջ էր, անմար,
Չափազանց մեծ էր մի մանկահասակ աղջկա համար,
Եվ ապրում էր նա իր սրտով միայն,
Եվ նրա սիրտը աշխարհ էր դարձել
Բայց չի հանդուրժում Աստվածը երբեք աշխարհ-
ները այն,
Որոնց կերտողը ինքը չի եղել...
Ա՜խ, սերը միակ խնջույքն էր նրանց...
Մի օր էլ տղան, մի կտոր հացի որոնումներում,
լքեց աղջկան,
Կյանքի անիվը շուռ եկավ այնժամ,
Աղջնակն զգաց քաղցի դառն համ:

Մի աղջնակ,
Դեռ տասնվեց տարեկան մի խենթ աղջնակ,
Գարնանաբույր մի աղջնակ,
Նա պառկած է ճամփին մենակ,
Մեռած, մեռած...

ԻՄ ԱԶՆԱՎՈՒՐԸ

Վերջապես Ազնավուր երևույթը ինձ համար դարձավ ամբողջական...

Ես նույնպես, ինչպես մեզանից շատ-շատերը, նախ հրապուրվել եմ Ազնավուրի երգերով: Տարիների ընթացքում այդ հրապուրանքը վերածվել է իսկական, ճշմարիտ սիրո: Դարձել մի տեսակ, խանդոտ սեր: Երբեք չեմ հասկացել այն մարդկանց, ովքեր չեն հասկացել իմ նվիրվածությունը Շարլի երգերին: Եվ ոգեվորվել եմ այն մարդկանցով, ովքեր պաշտել են Ազնավուրին: Առաջին հերթին՝ Սիմոն Տերյանով: Իմ սերունդը լավ է ճանաչում նրան: Օժտված երաժշտական բնատուր տաղանդով՝ Սիմոն Տերյանը Շարլի երգերի անզուգական կատարողն էր Հայաստանում և, ինչպես դա հաճախ է պատահում մեզանում, նա նույնպես, իբրև երգիչ, այդպես էլ մնաց չհասկացված ու չգնահատված: Հանուն Շարլի, որին պաշտում է, նա սիրեց և որքան կարող էր ֆրանսերեն սովորեց, ավելի ճիշտ՝ Ազնավուրի երգերում հանդիպող ֆրանսերեն բառերը, և Շարլ էր արտասանում... իր չիմացած ֆրանսերենով:

Տարիների ընթացքում, երբ սկսեցի թարգմանել Ազնավուրի երգերը, հայտնաբերեցի նաև բանաստեղծ Ազանվուրին: Եվ հիմա իմ, և ոչ միայն իմ, հաստատ համոզմամբ, Ազնավուրը նաև մեծ բանաստեղծ է: Նրա երգերից շատերը բանաստեղծական հայտնագործություններ են, փոքրիկ գլուխգործոցներ (վկա՝ «Սերս հեռացավ ուրիշ սիրո հետ», «Լինել»,

«Մնա», «Նրանք ընկան», «Ուզում եմ հրաժեշտ տալ քեզ», «Ավե Մարիա», «Մեռնել սիրելով»... գործերը)։ Եվ երբ, Շարլի Հայաստան գալուց հետո, ոչ առանց երկար-բարակ տատանումների, վերջապես որոշեցի ընթերցողի սեղանին դնել այս գիրքը, երևի առաջնային նպատակս այն էր, որ հայ ընթերցողին ծանոթացնեմ, ուժերիս ներածին չափով, նրա բանաստեղծություն-երգերին, որպեսզի հայ ընթերցողին սիրելի դառնա նաև բանաստեղծ Ազնավուրը։

Եվ վերջապես, օրեր շարունակ զրուցելով, լինելով Ազնավուրի կողքին, ես ինձ համար բացահայտեցի Ազնավուր-մարդուն, քաղաքացուն, և փորձեցի նրան ներկայացնել՝ առանց գունազարդումների ու գրիմի։

(Եվ միթե բեմում Ազնավուրի երկարակեցության գաղտնիքն այն չէ, որ նրա մեջ նստած են երգիչը, Բանաստեղծն ու Մարդը)։

Փորձեցի ներկայացնել իմ զգացած, իմ հասկացած, իմ տեսած Ազնավուրին։

Իմ Ազնավուրին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Այցելություն առաջին 6
Այցելություն երկրորդ 48
Քեզ համար, Հայաստան 75
Նրանք ընկան 76
Ինքնակենսագրություն 78
Դեռ երեկ 82
Ջահելությունը 84
Սերս հեռացավ ուրիշ սիրո հետ 86
Մնա 88
Բարի տարեդարձ 90
Եզրակացնում եմ, որ քեզ սիրում եմ 93
Պոկեր 95
Սիրունատես աղջնակներ իմ հին թաղի 99
Բժշկական սեր 101
Ոչ, ես ոչինչ չեմ մոռացել 103
Մեռնել սիրելով 106
Պիտի կարենալ 108
Սիրո մի կյանք 110
Մենք կարթնանանք երկուսով 113
Բայց դա երեկ էր 114
Իմ սրտահույզ սեր 115
Տարեք ինձ, տարեք 117
Մենակ եմ ահա 120
Թափառաշրջիկ դերասանը 122
Իմ հոգսերը 125

Ցլամարտիկը 128
Ուզում եմ հրաժեշտ տալ քեզ 131
Սեր, Աստված իմ, սեր 132
Լինել 136
Ախ, սակայն 139
Չափազանցում ես 142
Կնոջս 145
Ես չեմ ուզում մտնել իմ տուն 148
Մեր ցնորքների պալատը 150
Ատում եմ քեզ, կիրակի օր 152
Քանի որ 155
Խենթանում եմ քեզ համար 157
Ինչպես օտարներ 159
Դու ուզում ես 161
Քո սենյակում 164
Քաղաքը 166
Սիրելիս, երբ տուն ես գալիս 169
Փարիզը օգոստոս ամսին 171
Եթե ինձ մնար 173
Հավիտյանս հավիտենից 175
Դու արդեն չունես 177
Ավե Մարիա 180
Դու շփացել ես 181
Մի աղջնակ 184
Իմ Ազնավուրը 187

Գրական-գեղարվեստական հրատարակություն
ՍԱՄՎԵԼ ՑՈԼԱԿԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ԱԶՆԱՎՈՒՐԸ ԾԱՆՈԹ և ԱՆԾԱՆՈԹ

Литературно-художественное издание
САМВЕЛ ЦОЛАКОВИЧ ГАСПАРЯН
Азнавур-известный и неизвестный
Художник Х З Акопян

(На армянском языке)
Ереван 1990

Խմբագիրներ Գ Խ Դևրիկյան
Գ Գ Խաչատրյան
Նկարիչ Խ Զ Հակոբյան
Լուսանկարիչներ Պ Պետրոսյան, Պ Պողոսյան
Տեխ խմբագիր Ա Վ Հովհաննիսյան
Վերստուգող սրբագրիչ Ս Թ Գաբրիելյան

ИБ № 577

Հանձնված է շարվածքի 12 10.90 Ստորագրված է տպագրության 22 11 90: Չափսը 70x90 1/32 Թուղթ օֆսեթ Տառատեսակ «Արարատ». Տպագրություն օֆսեթ, պայմ 7 մամ, հրատ 7 մամ· Տպաքանակ 10000· Պատվեր 64 Գինը՝ 5ռ

«Ֆոտոշարվածք» փոքր հրատարակչություն

Малое издательство «Фотонабор»

Набрано в фотонаборном и фоторепродукционном производственном центре, Ереван-9 ул Теряна 89

Շարված է՝ ֆոտոշարվածքի և ֆոտոտպաձևերի արտադրական կենտրոնում

Երևան-9, Տերյան 89

Հայաստանի Հանրապետության Հ. Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ

Երևան-9, Տերյան 89

ԱՀԱՍԱՎՈՒՐԸ

Ցանկարան և տեղեկարան